AZG NEW SHABAT 1.QXD 25/04/2019 22:54 Page 1

Azg
26 ԱՊՐԻԼ 2019 ՈՒՐԲԱԹ 16(5563)
ISSN: 1829-1651
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Էրդողանը արդարացնում է հայոց սպանդը, Փաշինյանը կոչ է ուղղում աշխարհին, իսկ այն դեռ լռում է

Գերմանական հանրահայտ ԶԼՄ- ների առցանց տարածքում ապրիլի 24- ին հրատարակված տարբեր հոդվածների թվում միայն n-tv անդրադարձավ նաեւ Էրդողանի՝ Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային տեղահանությունը արդարացնելու ցինիկ մեկնաբանությանը.« Հայկական ավազակախմբեր եւ նրանց աջակիցներ» ձեւակերպումը կա հիշյալ հրապարակման մեջ, բայց դրա վերաբերյալ նույն օրը ՀՀ վարչապետ Փաշինյանի թվիթերյան գրառումը, որ Թուրքիայի նախագահի արդարացումը բնորոշում է որպես «ոչ միայն ժխտողականության նոր մակարդակ, այլ նաեւ մի ողջ ազգի սպանդի արդարացում», բացակայում է: «Նման բան հայտարարելը ապրիլի 24- ին ոչ միայն հայ ժողովրդին, այլեւ ողջ մարդկությանն ուղղված վիրավորանք է, անձամբ Էրդողանի կողմից հնչեցված ծայրահեղ ատելության խոսք»: ՀՀ վարչապետի՝ աշխարհին արձագանքելու կոչը դեռ սպասում է...

Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՕՐԵՐԻ ՀԵՏ

Անհրաժեշտ է հայ-ռուսական հարաբերությունների նոր հայեցակարգ

Ոմանք թերեւս հիշում են Հայկական ռադիոյի սրամիտ ու սարկաստիկ անեկդոտներից մեկը հայ-ռուսական հարաբերությունների մասին: Հարց են տալիս Հայկական ռադիոյին՝ «Ի՞նչ կանեն հայերը, եթե աշխարհի վերջը գա»: Պատասխան՝ «Կփախչեն Մոսկվա»...

Ռուսաստանի մայրաքաղաքը որպես հայոց Մեքքա ընդունելու գաղափարը դեռեւս Իսրայել Օրու ժամանակներից առկա է մեր մեջ, հակառակ բազմաթիվ հուսախաբություններին, որոնք արձանագրվել են մեր ժողովրդի պատմության ճակատագրական պահերին հատկապես: Դա նման է անպատասխան սիրո մի պատմության, որը շարունակվում է առ այսօր, երբ, թվում էր անկախ պետականության պայմաններում սիրային զեղումները փոխարինված պետք է լինեին քաղաքական սթափ գնահատականներով, պետական երկկողմանի շահերի հաշվարկումներով, ուժերի անհամաչափության պայմաններում անգամ կողմերից յուրաքանչյուրի պետական արժանապատվության գիտակցումով:

Ահա այս առումով հետաքրքրական էր ծանոթանալ ռուսաստանյան «Նեզավիսիմայա գազետայում» հրապարակված Միխայել Մինասյանի «Երկու պետություն՝ մեկ նպատակ» հոդվածին (իմ պարագայում՝ դրա հայերեն թարգմանությանը): Չէի ասի, թե հուսախաբ եղա, բայց անկեղծորեն ասեմ՝ անբավարարվածության զգացողություն ունեցա ընթերցման ավարտին: Պատճառը թերեւս չափազանցված ակնկալությունս էր հեղինակից, ավելի ճիշտ՝ սպասելիքներս նրա լավատեղյակությունից՝ որպես հանրապետության 3-րդ նախագահի ամենամոտ մարդկանցից մեկը, եթե ոչ՝ ամենամոտիկը, որը, հակառակ եվրոպական մի շարք զգայուն կետերում դեսպանի պարտականություններով զբաղված լինելուն՝ միշտ ներկա է գտնվել, եթե ոչ՝ մասնակիցը, պետական կարեւոր որոշումների կայացմանը, չհաշված դիվանագիտականի կողքին նրա մըրդոյան գործունեությունը հայկական լրատվադաշտում, որը նոր աշխուժությամբ շարունակվում է իշխանափոխությունից հետո, այս անգամ շեշտված ընդդիմության դիրքերից: Այլ խոսքով՝ նախկին վերնախավի ազդեցիկ անդամի կարգավիճակով Միխայել Մինասյանը կարող էր ավելի կոնկրետ շեշտադրումներով ներկայացնել իր տպավորությունները, դիտարկումները, ախտաճանաչումները մեր երկրի համար ամենազգայուն՝ Հայաստան-Ռուսաստան հարաբերությունների հարցի շուրջը:

Ճիշտ է, իր հոդվածում հեղինակը ճշմարիտ մի շարք մատնանշումներ է կատարում հայ-ռուսական փոխհարաբերությունների երբեմն «իռացիոնալ» եւ հաճախ երկուստեք «կործանարար» մտայնությունների վերաբերյալ, ու ճիշտ է նաեւ, որ նա հայ-ռուսական հարաբերությունների նոր ճարտարապետության անհրաժեշտությունն է ընդգծում իրավամբ, բայց իմ կարծիքով՝ չի կարողանում այդ հարաբերությունների էությունը դուրս բերել ժողովրդական ըմբռնումների մակարդակից եւ տեղադրել միջպետական քաղաքական ու քաղաքագիտական հարթության վրա: Ինձ թվում է, որ նրան խոչընդոտել է երկու պետությունների միջեւ «մեկ նպատակ» դնելու իր կանխատրամադրվածությունը, որը խանգարում է «նոր ճարտարապետություն» ստեղծելու իր իսկ հայեցակարգին: Դա նման է եզրակացությունը փաստերից առաջ դնելուն, կամ, ճարտարապետական լեզվով ասած՝ տանիքը շենքից առաջ կառուցելուն: Դրանից կարելի է ստանալ տպավորություն, որ հոդվածի հեղինակը որպես քաղաքական գործիչ փորձում է իրեն սահմանազատել նախորդ համակարգից ու, միաժամանակ, ներկայանալ որպես ապագայի «ճարտարապետ»...

Արտառոց է մանավանդ հեղինակի՝ որպես մոդել բերած՝ Մ. Նահանգներ-Իսրայել հարաբերությունների օրինակը, որը, հատկապես վերջին շրջանում, շփոթի է մատնել ողջ աշխարհը՝ Իսրայե՞լն է ղեկավարում Մ. Նահանգները, թե՞ հակառակը: Ապա եւ մյուս հարցը՝ Հայաստանը պիտի ուզենա՞ր կամ պիտի կարողանա՞ր տարածաշրջանային ոստիկանի դեր ստանձնել եւ անողոք պաշտել բոլոր հարեւաններին, ներառյալ իր զավթած տարածքներում ապրող այլազգի բնիկ ազգաբնակչությանը:

Մյուս կողմից, հակառակ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հավաստիացումներին, թե մեր երկու երկրների՝ Հայաստան-Ռուսաստան հարաբերությունները երբեք այսպիսի բարձր մակարդակի վրա չեն գտնվել, ինչպես հիմա, գրեթե բոլոր մակարդակներում մենք տեսնում ենք հակառակ փաստեր, որոնք սիրողում են մեզ ոչ թե կրկնել նախորդ իշխանությունների՝ այսպես կոչված «հին ճարտարապետությունը», այլ, իսկապես ստեղծել «նոր ճարտարապետություն»՝ իրատեսական, գործնական, համաչափ եւ արդյունավետ:

Դրա համար անհրաժեշտ է ըստ էության եւ ըստ հնարավորությունների, մանավանդ՝ ժողովրդական 200-ամյա ավանդապատումներից, անեկդոտներից ու պատկերացումներից ձերբազատ՝ մամուլում եւ քաղաքական ու գիտական հարթակներում լրջորեն ու երկուստեք քննել-քննարկել դաշնակցային հարաբերությունների ներկա վիճակը եւ հիմքերը դնել հայ-ռուսական բովանդակային «նոր ճարտարապետության»:

Մ. Մինասյանի հոդվածը կարող է սկիզբ դառնալ այդպիսի քննարկումների:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

Որն է հայերիս օրակարգը

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Արդեն մեկ տարի ունենք նոր իշխանություն, եւ ապրիլի 24-ը՝ Ցեղասպանության հերթական տարելիցը միգուցե պետք է առիթ դառնար Հայոց ցեղասպանության ճանաչման այս հանգրվանի մեր անելիքների մասով իշխանության մոտեցումների հստակեցման համար: Համենայն դեպս՝ ես սպասում էի այդ հստակեցմանը, քանի որ մինչեւ այժմ ընդհանուր ձեւակերպումներ էին առկա ե՛ւ վարչապետ Փաշինյանի բանավոր խոսքում, ե՛ւ կառավարության ծրագրի համապատասխան դրույթում: Ո՞րտեղ պետք է փնտրենք այդ հստակությունն այդ օրը՝ նախ Փաշինյանի հրապարակային խոսքում, ապա եւ Հանրային հեռուստատեսության՝ օրվա թեմայի լուսաբանման քաղաքականության մեջ:

Սկսենք երկրորդից, որտեղ այդպես էլ զրույցների ու ռեպորտաժների ձեւաչափերում չլսեցինք պատմաբանների ու ցեղասպանագետների խոսք՝հետագա անելիքի ձեւակերպմամբ (բացառությամբ թերեւս ռեպորտաժի ձեւաչափում ցեղասպանագետ **Սուրեն Մանուկյանի** այն մտքից, թե նույն ոճի աշխատանքի շարունակումը ճանաչման առումով հիմա անիմաստ է դառնում, եթե այն չենք զուգակցում տարբեր երկրներում ցեղասպանության ժխտումը իրականացնելուն ուղղված ջանքերով): Ավելի վաղ նկարահանված ֆիլմերում այդպիսի տեսակետներ, իհարկե, հնչում էին, բայց ոչ օրվա զրույցներում, այսինքն՝ ներկա մտայնության մեջ:

Եւ ուրեմն ծագում է հարցը՝ հիմա ո՞րն է լինելու մեր օրակարգը, ինչպիսի՞ն է լինելու մեր հետագա աշխատանքի ուղղվածությունը՝ որպես պետություն, որպես ժողովուրդ ու որպես սփյուռք հայերիս համար ամենագլխավոր հարցը բարձրացնելիս: Չէ որ անցած դարի 60-ականների կեսերից սկսած՝ ողջ աշխարհի հայությունը բավարար աշխատանք է կատարել Հայոց ցեղասպանության ճանաչման համար, հավաքել- հրատարակել միլիոնավոր էջեր՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ ապացույցներով, կազմակերպել նյութական ապացույցների եւ լուսանկարների բյուրավոր ցուցադրություններ, ստեղծել թանգարաններ եւ ուսումնասիրություններ, մարդկային-տնտեսական-նյութական կորուստների չափը հաշվելու փորձեր արել, այսինքն՝ ապահովվել է թուրքերի ոճրի մասին ապացուցողական ծանրակշիռ հիմք՝պատմական, տնտեսական, բարոյական վկայություններով:

⇨4

Հիշողության մեր սիմվոլը՝ անիվների վրա

Հայոց ցեղասպանության Քյոլնի հուշարձանը ապրիլի 24- ին՝ խոնարհված ծաղիկներով

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

Ինչպես ամեն տարի, Հայոց ցեղասպանության 104- ամյակը հիշատակող միջոցառումներ կազմակերպվեցին եւ դեռ շարունակվում են անցկացվել Գերմանիայի տարբեր քաղաքներում՝ ապրիլի 24- ից առաջ եւ հետո: 3 վայրում՝ ԳԴՀ մայրաքաղաք Բեռլինում, հայերի մեծաքանակ համայնք ունեցող Քյոլնում հուշահանդեսների մի մասն արդեն կայացել է, Գերմանահայոց կենտրոնական խորհրդի՝ Մայնի Ֆրանկֆուրտի Սուրբ Պողոսի տաճարում հրավիրած Հայոց ցեղասպանության զոհերի ոգեկոչման հիշատակի գլխավոր երեկոն կկայանա շաբաթ օրը: Մեր տպավորությամբ, միջոցառումների թիվն անհամեմատ աճել է, փոխարենը հուշահանդեսների ծրագրում բացակայում է գերմանացի քաղաքական գործիչների ելույթը: Հայերս պատմում ենք, սգում, հիշատակում, աղոթում, սրահում մեր կողքին անշուշտ գերմանացիներ էլ կան, մտավորականներ, նաեւ բարձրաստիճան դիվանագետներ, պատգամավորներ, բայց նրանց՝ այդ օրը մեզ հրապարակավ ուղղված խոսքի կարիք չունե՞նք, Բունդեսթագի 2016 թվականի հունիսի 2- ի բանաձեւից հետո երախտագիտությունն այնպես է խեղդում մեր կոկորդը, որ այլեւս պահանջ չունե՞նք ԳԴՀ կառավարությունից: «**Ազգի**» հաջորդ համարում առիթ կունենանք ամփոփել մեր միտքը՝ անդրադառնալով ինչպես այս, այնպես էլ այլ խնդիրների:

Ապրիլի 24- ին ժամը 18- ին Քյոլնի՝ Հայոց ցեղասպանության զոհերի «չարտոնված հուշարձանի» կողքին էի: Մեր թերթի 2018- ի ապրիլի 20- ի համարում այսպես ենք անվանել 200 կգ կշռող, 1,5 մետրանոց մետաղյա բուրգը, որի ծայրին խորհրդանշական նուռ է, եւ որի վրա 4 լեզվով՝ հայերեն, գերմաներեն, թուրքերեն, անգլերեն կարելի է կարդալ նույն գրությունը՝ «Այս ցավը բոլորինս է»:

⇨4

Թուրքիան ցեղասպանության հարցում տեղի է տալիս Հայաստանի առջեւ

էջ3

Գեներալները չեն փախչում

էջ5

AZG NEW SHABAT 1.QXD 25/04/2019 22:54 Page 2

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

Նորա Արիսեանի կարեւոր յաջողութիւնը

Սուրիական խորհրդարանի հայ երեսփոխանները հայկական համայնքի ներկայացուցիչներ ըլլալով հանդերձ միայն համայնքին խօսնակներն ու անոր շահերը պաշտպանողներ չեն, այլ՝ բոլորին նման սուրիացի պատգամաւորներ: Սակայն Նորա Արիսեանը յաջողած է ներկայ իրավիճակէն օգտուելով՝ իր հեղինակած գիրքերով արաբ ընթերցողին ծանօթացնել Հայկական հարցն ու Հայոց ցեղասպանութիւնը, նիւթը տեղադրել տալով սուրիական դպրոցներու պատմութեան դասագիրքերուն մէջ:

Պատմաբան Նորա Արիսեան Սուրիոյ խորհրդարանի անդամ է, ինչպէս նաեւ Սորիա-Հայաստան խորհրդարանական բարեկամութեան խումբի նախագահ:

Իր հետ կապ հաստատելով ուզեցի տեղեակ ըլլալ հարցին մանրամասնութիւններուն: Սնորեւ իր բացատրութիւնը:

«Սուրիոյ խորհրդարանէն ներս 2017 թուականին կրթութեան նախարարի ներկայութեամբ ելոյթներուս մէջ պահանջեցի դպրոցական դասագիրքերուն մէջ ներառնել դասեր, կամ դասերու ընդմէջէն հատուածներ, որոնք կը խօսին Սուրիոյ մէջ Օսմանեան կայսրութեան վարած քաղաքականութեան հետեւանքներուն եւ հայերու դէմ կատարուած ցեղասպանութեան մասին:

Միեւնոյն ժամանակ, նկատի առնելով , որ Սուրիոյ մէջ դպրոցական դասագիրքերը կ՚ենթարկուին վերամշակման, նոյն պահանջը նիրկայացուցի Սուրիոյ կրթութեան նախարարութեան «Ուսումնական ծրագիրներու վերամշակման ազգային կեդրոն»ին:

31 յունուար 2019-ին պատմութեան դասագիրքերու վերամշակման համար տեղի ունեցած յատուկ սեմինարին, Հայոց ցեղասպանութեան թեմայով ելոյթ ունենալէս յետոյ, կեդրոնը համաձայն գտնուեցաւ պաքալորիայի (12-րդ դասարանի) պատմութեան դասագիրքերուն մէջ ներառնել Հայոց ցեղասպանութիւնը ներկայացնող թեմայի իմ ներկայացուցած հատուածս:

Վերամշակուած գիրքին մէջ կը յիշատակուի տարածաշրջանի փոփոխութիւններուն նկատմամբ թրքական «Իթթիհատ վէ Թերաքի» կառավարութեան վարած կամայական քաղաքականութիւնը, ինչպէս նաեւ 1915 թուականին Հայոց ցեղասպանութիւնն ու տարագրութիւնը դէպի Սուրիա: Հոն նաեւ յիշատակուած են սուրիացի պատմագիր Մուհամմէտ Քուրտ Ալիի վկայութիւնները՝ Հայոց ցեղասպանութեան նիւթը սուրիական աղբիւրներու տեսանկիւնէն ընդգծելու համար: Կ՚ակնարկուի նաեւ Սուրիոյ մէջ հայերու մշակութային պահպանման խնդիրին, ինչպէս նաեւ զանազան բնագաւառներու մէջ սուրիահայերու ներդրումին մասին»:

Նորա Արիսեան հեղինակած է շարք մը գիրքեր, որոնք սատարած են իր ծրագրին յաջողութեան.

1- «Հայերու Արհաւիրքը սուրիական մտքին մէջ, սուրիացի մտաւորականներու դիրքորոշումը Հայոց ցեղասպանութեան նկատմամբ» (արաբերէն), Պէյրութ, 2002:

2- «Հայոց ցեղասպանութեան արձագանգները սուրիական մամուլին մէջ (1877-1935)» (արաբերէն), Պէյրութ, 2005:

3- «Տէր Զօր, Մարտիրոսաց քաղաք» (հայերէն), Հալէպ, 2010:

4- «Սուրիահայ երեսփոխանները Սուրիոյ խորհրդարանին մէջ (1928-2011)» (արաբերէն), Դամասկոս, 2011:

5- «100 տարի Հայոց ցեղասպանութեան. արաբական 100 վկայութիւններ» (արաբերէն), Պէյրութ, 2015:

6- «Հայերու տարագրութիւնը Տէր Զօրի մէջ» (արաբերէն), Դամասկոս, 2018:

Ահա՛ թէ ինչ կրնայ ընել անհատ մը, երբ ունի հաւատք եւ յանձնառութեան գիտակցութիւն իր արմատներուն: Նորա Արիսեանի շնորհակալ աշխատանքը արժանի է անվերապահ գնահատանքի:

ՌԱԿ-ը՝ Ծիծեռնակաբերդում

Ապրիլի 24-ին ՌԱԿ Կենտրոնական վարչության մի խումբ անդամներ այցելեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու 1915թ-ի Եւեմտյան Հայաստանում ու Կիլիկիայում տեղի ունեցած Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: ՌԱԿ Կենտրոնական վարչության անդամներից բացի քայլերթին մասնակցում էին նաեւ կուսակցության երիտասարդական շարժման, ինչպես նաեւ ՌԱԿ Ալեք Մանուկյան ակումբի անդամները: Կուսակցական ընկերներին միացել էր նաեւ այս օրերին Հայաստանում գտնվող ՌԱԿ Գերագույն խորհրդի անդամ Վարդգես Գուրույանը (Լոս Անջելես) տիկնոջ հետ:

Հանուն կուսակցության բոլոր անդամների ծաղկեպսակ զետեղվեց հուշարձանի մուտքին եւ ծաղիկներ՝ Անմար կրակի շուրջը:

ԱՐԱՔՍ ՍԱՖԱՐՅԱՆ

Բրյուսելում հարգեցին Հայոց ցեղասպանության 104-րդ տարելիցը

Բրյուսել

Ապրիլի 24-ին Բելգիայի տարբեր քաղաքներից մեր հայրենակիցներն իրենց հարգանքի տուրքն էին բերել Բրյուսել՝ հարգելու Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը:

Ինչպես ամեն տարի, այս տարի եւս մարդաշատ էր Բրյուսելի Սուրբ Մարիամ Մագդաղենացի Հայ Առաքելական եկեղեցին, ուր մատուցվեց պատարագ ի հիշատակ անմեղ նահատակների: Այնուհետեւ ներկաները քայլերթով շարժվեցին դեպի Հայոց ցեղասպանության հիշատակը հավերժացնող խաչքար՝ մատուցելու ոգեկոչման արարողություն:

Օտարության մեջ մեր հայրենակիցները մենակ չեն իրենց վշտի հետ: Հայ ժողովրդի սուգը սփոփում են նաեւ բելգիական կառավարության, քաղաքական կուսակցությունների, օտարերկրյա համայնքների, հասարակական կազմակերպությունների ու միությունների մեծաթիվ ներկայացուցիչներ: Ամեն տարի այդ օրը հավատարմորեն բազմաթիվ եւ բազմաշերտ հասարակություն է հավաքվում, խոնարհվելու, ծաղկեպսակներ դնելու թուրքական յաթաղանի զոհ դարձած անմեղ զոհերի հիշատակը հավերժացնող խաչքարի մոտ: Հայ երիտասարդները դեռ ապրիլի 23-ի ուշ երեկոյից խաչքարի շուրջ սկսում են մոմավառության արարողությունը:

Բրյուսելում բավականին զգալի է հայ- թուրքական լարվածությունը: Եվ ցեղասպանության տարելիցին նվիրված ողջ արարողակարգի ընթացքում տարածքն ամբողջովին վերահսկվում է տեղական ոստիկանների կողմից, փակվում են եկեղեցու եւ խաչքարին հարող փողոցները, արգելվում է մեքենաների երթեւեկությունը:

Անկախ քաղաքական ու սկզբունքային տարաձայնություններից, այդ օրը մեր հայրենակիցները միահամուռ ու միասնական համախմբվում են:

Բելգիայում ՀՀ դեսպան **Թաթուլ Մարգարյանը** խաչքարի մոտ խոսելով թուրքական ժխտողական քաղաքականությունից նշեց, որ Թուրքիայի համառ, բուռ-ժխտողական քաղաքականությունը շարունակվում է դրսեւորվել նորանոր ձեւերով, բայց նրանք պետք է հասկանան, որ այդ ժխտողականությունը չունի ոչ ներկա, ոչ էլ ապագա, քանի որ հարյուր չորս տարի է անցել, սերունդներ են փոխվել , բայց այս հավաքները շարունակում են մնալ բազմամարդ: Եվ եթե հայ ժողովուրդը նույն հաստատակամությամբ ամեն տարի հավաքվում, հիշում , հարգում է անմեղ զոհերի հիշատակը ,եւ բազմաթիվ երիտասարդներ ամեն տարի ներկա են , ապա սա լավագույն ուղերձն է Թուրքիային, որ սին է թուրքական ժխտողականության բոլոր հույսերը: Թուրքիան պետք է ընդունի իրականությունն ու հասկանա, որ այս պայքարը չի մարելու,,:

Խաչքարի մոտ հարգանքի խոսք մատուցեցին նաեւ Բելգիայի կառավարության ներկայացուցիչներ, Եվրոխորհրդի պատգամավորներ, հունական, հրեական, ասորական եւ այլ համայնքների հասարակական միությունների ներկայացուցիչներ: Բանախոսները պատմական փաստերով, վկայություններով դատապարտեցին թուրքական ժխտողականությունը, նշելով, որ անցյալը չընդունելը եւս ոճրագործություն է:

Խաչքարի շուրջ հիշատակի արարողությունից հետո բողոքի քայլերթ անցկացվեց դեպի Թուրքիայի դեսպանատուն: Հերթական անգամ անարգանքի խոսքեր, լուսանկներ թափվեցին թուրքական իշխանությունների հասցեին: Ցեղասպանության հիշատակի արարողությունները եզրափակվեցին ուշ երեկոյան Բրյուսելի «Հայ տանը»՝ զոհերի հիշատակին նվիրված համերգով:

ՀԱՄԱՌՕՏ

Ադրբեջանի ՊՆ-ն ապատեղեկատվություն է տարածում

Վերջին օրերի ընթացքում, ադրբեջանական ռազմաքաղաքական ապատեղեկատվությունները կրկին սկսել են կրել նախկին ինտենսիվ բնույթը: Մասնավորապես Ադրբեջանի ՊՆ ենթակայության տակ գտնվող armiya.az կայքը 24 ժամվա ընթացքում երկու լուրջ, հայկական կողմի վրա ծանր մեղադրանքներ բարդող ապատեղեկատվություն է տարածել:

Առաջինը՝ ապրիլի 24-ին կայքը գրեց, թե իբր նույն օրը, ժամը 17:30-ի սահմաններում, հայկական զինուժը կրակ է բացել Աղդամի շրջանի Ջիրաղլը գյուղի տներից մեկի բակում խաղացող մանկահասակ երեխաների ուղղությամբ: Հաջորդ օրը՝ ապրիլի 25-ին, կայքը հանդես եկավ նմանաբովանդակ երկրորդ հայտարարությամբ: Մեղադրագրի մեջ կայքը կրկին պնդում էր, որ հայկական զինուժը, մոտ 15-20 րոպե, կրակ է բացել Ջիրաղլը գյուղի ուղղությամբ, որի հետեւանքով բնակելի տներ են վնասվել:

Անցյալ տարիների փորձը ցույց է տալիս, որ Ադրբեջանը դարձյալ ինչ-որ բան է ձեռնարկում: Հավանաբար պատրաստվում են սանդրանքներ՝ տվյալ գյուղը վերահսկող հայկական դիրքերի ուղղությամբ: Չի բացառվում, որ իբր «ի պատասխան կրակ հայկական զինուժին» գնդակոծի կամ արկակոծի սահմանին մոտ, առավել խոցելի հայկական բնակավայրերը:

Հ.Գ. Հիշեցնեմ, որ 2019 թ. պլանային զորավարժությունների հրահանգավորման ժամանակ Ադրբեջանի ՊՆ նախարար Զաֆիր Հասանովն իր ենթականերին հրամայել է զորավարժություններն անցկացնել այնպիսի ժամերի եւ այնպիսի պայմաններում, որ հնարավորինս մոտ լինեն ռազմական գործողություններին, «քանի որ ամեն վայրկյան հնարավոր է՝ հարձակվեն»:

Մանվել Գրիգորյանի առանձնատան ՈՒԱՁ-ները կտրվեն բանակին

Ապրիլի 25-ին տեղի ունեցած մամլո ասուլիսի ժամանակ ԵԿՄ վարչության անդամ **Արա Կեսիկյանը**, անդրադառնալով Մանվել Գրիգորյանի առանձնատան ավտոնակում հայտնաբերված ՈՒԱՁ մակնիշի մեքենաներին, կարծիք հայտնեց, որ ամենայն հավանականությամբ հետաքննությունից հետո այդ մեքենաները կտրվեն Պաշտպանության նախարարությանը:

Գ. Գ.

AZG NEW SHABAT 1.QXD 25/04/2019 22:54 Page 3

Թուրքիան ցեղասպանության հարցում տեղի է տալիս Հայաստանի առջեւ

Այս հանգամանքը բացասաբար է անդրադառնում նրա միջազգային հեղինակության վրա

ՀԱԿՈԲ ՉԱՔԸՐՅԱՆ

Թուրքագետ

Ապրիլի 24-ին լրացավ Մեծ Եղեռնի 104-րդ տարին:Մինչ համայն հայությունը Հայաստանում, թե Սփյուռքում ոգեկոչման արարողություններով հարգանքի տուրք էր մատուցում 1.5 մլն անմեղ զոհերի հիշատակին, նախագահ Էմմանուել Մակրոնի ապրիլի 10-ի հրամանագրով ապրիլի 24-ը «Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի ազգային օր» հռչակեց Ֆրանսիայում: Մակրոնի հրամանագիրը չպետք է պայմանավորվի սոսկ հայ ժողովրդի հանդեպ ֆրանսացիների կարեկցանքով, որովհետեւ դրանում տեղ գտած «ազգային օր» հասկացությամբ Ֆրանսիան դառնում է ոչ միայն հայության վշտակիցը, այլեւ Մեծ Եղեռնի անմիջական վշտակիրը:

Ալս հանգամանքը, ինչ խոսք, առանձնակի նշանակություն է հաղորդում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման նախաձեռնություններին, արժեւորելով դրանք: Հաշվի առնելով Հռոմի պապ Ֆրանցիսկոս I-ի Մեծ Եղեռնի 100-րդ առնչությամբ Վատիկանում 2015 թվի ապրիլի 12-ին արած հայտարարությունը, որտեղ Նորին սրբությունը ապրիլի 24-ը «ցեղասպանությունների հիշատակման օր» հռչակելու կոչ էր արել Եվրոմիության երկրներին, պետք է ասել, որ Ֆրանսիայի նախագահը վերոհիշյալ հրամանագրով նախադեպ է ստեղծում Եվրոպայում: Համենայնդեպս Մակրոնի օրինակին ապրիլի 15-ի հատուկ հայտարարությամբ, նվիրված Մեծ Եղեռնի 104-րդ տարելիցին, հետեւել է Մոնրեալի քաղաքային խորհուրդը, հռչակելով ապրիլի 24-ը «Հայոց ցեղասպանության հիշատակման օր» քաղաքում:

Ցեղասպանության ճանաչման նախաձեռնություններն արժեւորելու առումով ոչ պակաս կարեւոր է նաեւ Իտալիայի Պատգամավորների պալատի ապրիլի 10-ին ընդունած բանաձեւը:Քանի որ Իտալիայի խորհրդարանը մինչ այդ ճանաչել էր Հայոց ցեղասպանությունը, ուստի Պատգամավորների պալատն այդ բանաձեւով ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու եւ ճանաչումը միջազգային ասպարեզում պաշտպանելու կոչ է արել երկրի կառավարությանը: Հատկանշական է, որ Հայոց ցեղասպանությունը մասնատված Լիբիայում ազգային բանակի զորահրամանատար, գեներալ Խալիֆ Հաֆթերի նախաձեռնությամբ ապրիլի 18-ին ճանաչել է Թոբրուքի կառավարությունը: Այսպիսով Լիբիան դարձել է Սիրիայից ու Լիբանանից հետո Հայոց ցեղասպանությունը ճանաչող 3-րդ մահմեդական երկիրն աշխարհում:

Ի դեպ, թուրքական աղբյուրների վկայությամբ շահ Մոհամմադ Ռեզա Փահլավիի օրոք ցեղասպանությունը ճանաչել էր նաեւ Իրանը: Սակայն 1979-ի հեղափոխությունից հետո իսլամական վարչակարգը մոռացության է տալիս շահի որոշումը, դրանով երկրի օրակարգից դուրս է մղվում Ցեղասպանության ճանաչման որոշումը: Մնում է հուսալ, որ Թոբրուքի կառավարության օրինակին կհետեւեն մահմեդական այլ երկրների կառավարություններ, թերեւս դրանով կընդարձակվի Ցեղասպանության ճանաչման աշխարհագրությունը, եւ Թուրքիան ստիպված կլինի Հայաստանի առջեւ ընկրկել նաեւ իսլամական աշխարհում: Համենայնդեպս, ճանաչման նախաձեռնություններ դրսեւորվում են Եգիպտոսում, իսկ Եգիպտոսը, եթե ոչ իսլամական, ապա արաբական աշխարհի առաջնորդող երկիրն է:

Ինչ վերաբերում է Թուրքիայի ընդգրկմանը, դրա նախանշաններն արդեն առկա են: Անցած տարիներին, երբ ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատում կամ Սենատում հայտնվում էր որեւէ հայկական բանաձեւ, Թուրքիան սկսած հունվար ամսից Մաջլիսի պատվիրակություններ էր գործուղում Վաշինգտոն; որ բացատրական աշխատանքներ տանեն ԱՄՆ Կոնգրեսում եւ որպես կանոն պարտադիր սպառնում էր Հայաստանին: Այս տարի հանրապետականներն ու դեմոկրատները համատեղ ջանքերով երկու բանաձեւ ներկայացրին ե՛ւ Ներկայացուցիչների պալատ ե՛ւ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողով: Սակայն Թուրքիան այս անգամ ոչ պատվիրակություն գործուղեց, ոչ սպառնաց Հայաստանին: Պարզապես Էրդողանը նամակ ուղարկեց Կ. Պոլսո պատրիարքի տեղապահ Արամ Աքեշյանին, որ ցավակցություն հայտնեց Աշխարհամարտի տարիներին «սպանված կամ զոհված օսմանցի հայերի թոռներին», գովեստի խոսքեր շռայլելով թուրքահայ համայնքին:

Ընդամենը 8 օրվա ընթացքում ընդունված ապրիլի 24-ը «Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի ազգային օր» հռչակելու Ֆրանսիայի որոշումը, դրա համադրումը Մոնրեալի քաղաքային խորհուրդի համանման որոշմամբ, Իտալիայի Պատգամավորների պալատի՝ Ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու եւ ճանաչումը միջազգային ասպարեզում պաշտպանելու կոչը երկրի կառավարությանը, ինչպես նաեւ Ցեղասպանության ճանաչումը Լիբիայում, բավականին լուրջ քայլեր են ճանաչման միջազգային գործընթացի հետագա զարգացման առումով: Քանի որ այդ գործընթացի զարգացումը Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթությունն է, ուստի դրանք պետք է պայմանավորվեն մեր երկրի հաջողություններով:

Հաջողության հիմքում, ինչ խոսք, ընկած է Նիկոլ Փաշինյանի գլխավորած համաժողովրդական շարժման արդյունքը հանդիսացող «թավշյա հեղափոխությունը»: Դրան հետեւեցին խորհրդարանական վերջին ընտրությունները: Հեղափոխության առանց բռնության իրականացումը, իսկ ընտրությունների ազատ, անկախ եւ թափանցիկ անցկացումը նպաստեցին Փաշինյանի միջազգային հեղինակության աճին, զուգահեռաբար աճեց նաեւ Հայաստանի հեղինակությունը աշխարհում: Շնորհիվ այս ամենի, Հայաստանը դուրս եկավ մեկուսացումից: Այդ առումով հատկանշական էին Ֆրանսիայի նախագահ Էմմանուել Մակրոնի, Կանադայի վարչապետ Ջաստին Թրուդոյի եւ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի այցելությունները Հայաստան, առավել եւս Ֆրանկոֆոնիայի հերթական ֆորումի պատշաճ մակարդակով գումարումը Երեւանում: Փոխադարձաբար Ֆրանսիա եւ Գերմանիա այցելեց ՀՀ վարչապետ Փաշինյանը: Նա եղավ Բրյուսելում եւ Ստրասբուրգում, ելույթ ունեցավ Եվրոխորհրդարանում, Եվրոխորհուրդում:

Հայաստանի միջազգային հեղինակության աճը եւ նրա վերոհիշյալ հաջողությունները վերջնական նպատակի առումով, թերեւս, Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի հաջողություն չի ենթադրում: Ճանաչումն ինքնին համապարփակ խնդիր է եւ փուլային մոտեցում է պահանջում: Առաջին փուլում միջազգայնացվում է Ցեղասպանությունը, որ միջազգայնորեն ճանաչվի: Երկրորդ փուլում միջազգայնացվում է արդեն ճանաչում գտած Ցեղասպանության ժխտողականության քաղաքականացումը: Երրորդ փուլում միջազգայնորեն ճանաչված եւ ժխտումը քաղաքականացված Ցեղասպանության փոխարեն միջազգայնացվում է Ցեղասպանության հետեւանքների վերացման հարցը:

Միջազգայնացնելով Հայոց ցեղասպանությունը՝ Հայաստանը զգալի նվաճումներ է ձեռք բերել:Համենայնդեպս 31 երկիր եւ միջազգային 7 կազմակերպություն, այդ թվում Եվրոխորհրդարանն ու Եվրոխորհուրդը, ճանաչել են Հայոց ցեղասպանությունը: Ինչ վերաբերում է ժխտողականությանը, ապա դա թեեւ քաղաքականացրել է 6 երկիր՝ Շվեյցարիան, Սլովակիան, Հունաստանը, Կիպրոսն ու Ֆրանսիան, սակայն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը դեռեւս ծավալվում է, իսկ ծավալումը հետզհետե հանգեցնում է թուրքական ժխտողականության դիրքերի սպառմանը: Ընդ որում սա այն դեպքում, երբ Թուրքիան, ինչպես այդ մասին 2011-ի մարտի14-ին Կ. Պոլսո «Հայթեթ» կայքէջում գրել էր **Թոլգա Թանիշը**, ԱՄՆ-ի արդարադատության նախարարության տվյալներով, ընդամենը մեկ տարում՝ 2010-ին, այն էլ Նյու Յորքում ու Վաշինգտոնում միայն հայկական բանաձեւը չեզոքացնելու նպատակով 3.3 մլն դոլար է հատկացրել ամերիկյան լոբբիստական կառույցներին եւ հասարակայնության հետ կապի ընկերություններին:

Խնդիրը, սակայն, սոսկ ժխտողականության դիրքերը չեն, այլ Ցեղասպանության միջազգային ճանաչման պրակտիկ նշանակությունը: Ակնհայտ է, որ Թուրքիայի պես հսկա մի պետություն, օգտագործելով դիվանագիտական, քաղաքական եւ ֆինանսական ահռելի միջոցներ, եթե պայքարում է փոքրիկ Հայաստանի դեմ ու տանուլ է տալիս Ցեղասպանության պայքարը, ապա ինքնաբերաբար սասանվում է նրա միջազգային հեղինակությունը: Այսինքն Թուրքիան այդ պայքարում ընկրկում է Հայաստանի առջեւ: Ցեղասպանության գործընթացի ծավալմանը զուգընթաց նա ձեռք է բերում «ցեղասպան» պետության համբավ, դրանով սահմանափակում է Հայաստանի վրա քաղաքական ճնշում գործադրելու, առավել եւս միջազգային հեղինակավոր կառույցներում մեր հանրապետությանն անկյուն խցկելու, իսկ Ադրբեջանին անկաշկանդ աջակցելու նրա հնարավորությունները: Այս ամենի հետեւանքով նմանապես սահմանափակվում են նաեւ ղարաբաղյան հիմնահարցին միջամտելու Թուրքիայի հնարավորությունները: Ստեղծված իրավիճակում նա ակամա չափավորում է հայությանը կամք թելադրելու իր նկրտումները:

Էրդողանի ցավակցագիրը Ապրիլ 24-ի առթիվ

Նամակ Թուրքիո հայերի Պատրիարքի ընդհանուր փոխանորդ մեծարգո Արամ Աքեշյանին, 24.04.2019

Թուրքիո հայերի պատրիարքի ընդհանուր փոխանորդ մեծարգո Արամ Աքեշյան,

Իմ շատ հարգարժան հայ քաղաքացիներ,

Ձեզ ուրանց ողջունում, հարգանքներս եմ հայտնում:

Նախքան նամակիս անցնելը ես հարգանքով հիշում եմ մեծարգո պատրիարք Մեսրոպ Մութաֆյանին, որին կորցրել ենք 2019 թ. մարտի 8-ին. ցավակցություններս եմ հայտնում նրա ընտանիքին, հարազատներին եւ ողջ հայ համայնքին:

Առաջին Աշխարհամարտի դժվարին պայմաններում կյանքից հեռացած օսմանյան հայերին այս տարի եւս հարգանքով հիշատակում, ամենայն անկեղծությամբ ցավակցում եմ նրանց թոռներին:

Ինչպես ամեն մի կայսրության փլուզման շրջանին, այնպես էլ Օսմանյան կայսրության վերջին տարիներին մարդիկ երկրի ներսում թե հարակից տարածքներում ողբերգական օրեր են ապրել: Վարակիչ հիվանդությունների,արտագաղթերի, պետական իշխանությունների թուլացման հետեւանքով ակտիվացած ավազակախմբերի եւ զինյալ խմբավորումների առաջացրած խառնակչությունների պատճառով կյանքից հեռացած օսմանյան այլ քաղաքացիների համար նույնպես հայցում եմ Ալլահի ողորմությունը:

Հայ համայնքը օսմանյան թե հարյուրերորդ տարեդարձը բոլորելու շեմին գտնվող հանրապետության շրջանին մեծացրած շատ արժեքավոր զավակներով հսկայական նպաստ է բերել մեր երկրին:

Ինչպես երեկ, այնպես էլ ներկայումս մեր հայ քաղաքացիները, որպես երկրի իրավահավասար, ազատ քաղաքացիներ, կարեւոր դերակատարություն են ստանձնել մեր սոցիալական, քաղաքական եւ առեւտրական կյանքի բոլոր ոլորտներում:

Պատմության ընթացքում վիշտն ու ուրախությունը հավասարապես կիսող այս երկու ժողովուրդների վերքերի ապաքինումն ու առնչությունների էլ ավելի ամրապնդումը մեր ընդհանուր նպատակն է:

Մենք ձեր վշտերը թեթեւացնելու, ձեր առջեւ ծառացած խնդիրներին լուծում տալու հարցում շարունակելու ենք լինել ձեր կողքին:

Ուզում եմ հատկապես շեշտել հետեւյալ հանգամանքը. Մեր երկրում բնակվող հալ համայնքի անդորրը, անվտանգությունն ու երջանկությունը մեզ համար առանձնակի կարեւորություն ունի:

Նրանք ովքեր գեթ մեկ հայ քաղաքացու խորթության ու օտարման պատճառ կդառնան, իրենց դեմ մեզ են տեսնելու:

Օգտվելով առիթից հոգեւոր նոր առաջնորդի շուտափույթ ընտրություն եմ մաղթում հայ համայնքին եւ հաջողություններ ցանկանում: Հավատում եմ, որ համատեղ աղագա կերտելու ճանապարհը մեկ եւ միասնական լինելու մեջ է:

Հետեւաբար ցանկանում եմ առիթ չտալ նրանց, ովքեր կփորձեն խեղաթյուրել մեր համատեղ անցյալն ու պատմությունը կօգտագործեն որպես քեն, ատելություն, թշնամանք սերմանելու միջոց:

Այս մտքերով մեկ անգամ եւս հարգանքով հիշատակում եմ Առաջին Աշխարհամարտի տարիներին զոհված օսմանցի հայերին:

ՌԵՋԵՓ ԹԱՅԻՊ ԷՐԴՈՂԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

AZG NEW SHABAT 1.QXD 25/04/2019 22:54 Page 4

Ո՞Ր Է ՀԱՅԵՐԻՍ ՕՐԱԿԱՐԳԸ

⇨1 Շուտով կանհետանան վերջին վերապրածները, տատիկների ու պապիկների պատմածները լսածների սերունդն է անգամ արդեն անցնում, ո՞ւր է մեր անելիքը՝ վերը նշված հսկայածավալ եւ տիտանական աշխատանքից հետո: Այդ էինք ուզում լսել նոր իշխանությունից:

Չորս տարի առաջ, հայրենադարձակին, պատմաբաններն ասում էին՝ ճանաչման դարն ավարտվեց, պետք է սկսվի հատուցումը: Իհարկե, հատուցմանն ուղղված ջանքը դժվար, ահռելի ծախսատար, պետությունների քաղաքական շահերի երկաթյա պատին բախվող գործընթաց է, որն սկսողը պետք է մոռանա հանգստի մասին: Բայց արդյոք հայությունն այլ ելք ունի, ու արդյոք մի օր ճանաչման ու հատուցման գաղափարը չպետք է վերածվի այն զենքին, որից վախենում են թուրքերը՝ պատմականից ու բարոյականից բացի՝ ֆինանսական հիշեցումը: Այդ երկիրը, որ ֆինանսապես եւ տնտեսապես կրախի առաջ էր կանգնած մեկ դար առաջ, վերստին ծաղկեց հայերի ու մյուս փոքրամասնությունների ունեցվածքը խլելով՝ նրանց ոչնչացնելուց հետո: Նույնիսկ թուրք պատմաբան **Սաիդ Չեթինօղլուն** է ասում՝ Թուրքիայի ազգային կապիտալի 32 տոկոսը հայկական ունեցվածք է, թուրքերը մինչեւ հիմա փնտրում են հայերի գանձերը: Արդյոք չպետք է սկսվեն հատուցման առաջին հայցերի գոնե նախապատրաստական քայլերը: Ասենք՝ եթե ողջ աշխարհի հայությունը կարողանա սպասել կանգնել մեկ-երկու մասնավոր հատուցման հայցի հարուցմանը միջազգային դատարաններում, սա մի՞թե չի կարող դառնալ Թուրքիայի վրա մահակ բանեցնելու տեւական գործընթաց: Պատկերացնելով հանդերձ այլ պետությունների շահադասական ճնշումները մեր հանդեպ՝ այդպիսի քայլ անելու պարագայում:

Արեւմտյան Հայաստանի խոշոր հայկական կենտրոններում ունեցել ենք ֆաբրիկաներ, հյուրանոցներ, առեւտրական կետեր, խանութներ, միջազգային բրենդ դարձած արտանքսեսակներ, կալվածքներ եւ ագարակներ, եկեղեցական եւ մշակութային հարստություն: Մեկ այդպիսի դասը շատ ավելի հնչեղություն կտա Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը, քան հարյուրավոր ցույցերն ու երթերը: Մեր պետությունն, այո, դա իրեն թույլ տալ չի կարող որպես սուբյեկտ, բայց բարոյական աջակցություն եւ բարի կամք կարող է ցույց տալ՝ թեւ տալով սփյուռքին նման որեւէ գործընթաց սկսելու: Ամեն ինչ կարծես արել ենք՝ ծանրակշիռ հատորներ, նյութական, փաստաթղթային ապացույցներ, վերապրողների պատմածներով ֆիլմեր եւ գրքեր, մի՞թե շարունակելու ենք նույն, կարելի է անգամ ասել՝ կրավորական աշխատանքը, ու նոր շունչ չենք հաղորդելու գործընթացին:

«Ավրորա» միջազգային մրցանակաբաշխությունն, օրինակ, հենց դրա համար է գնահատելի, որ, թեեւ անուղղակի, բայց ճանաչել է տալիս Հայաստանն ու հայկական խնդիրները, ու այդ ձեռնարկին առնչվող յուրաքանչյուր անձ նաեւ անպայման իմանում է Հայոց ցեղասպանության պատմությունը. սա նորարական մոտեցում է, այդպիսի նոր հնարքներ պետք է մտածենք: Ինչու այլ մեծահարուստներ, ինչպես Ռուբեն Վարդանյանն ու Նուբար Աֆեյանը, չեն կարող միավորվել ու ասենք ֆինանսավորել որեւէ միջազգային մասնավոր դաս՝ Թուրքիայի դեմ հայցով:

Թե չէ՝ հուզիչ պատմությունները փնտրելը շարունակելով՝ չենք կարող առաջ շարժվել, այդ պատմություններն ամեն մեկս կրում ենք, որպես Ցեղասպանության զոհերի թոռներ ու ծոռներ: Կմեռնենք մենք, ու կանցնի նաեւ ուղիղ հիշողությունը: Իսկ միջնորդավորված հիշողությունը կբթացնի ցավը, հետզհետե ավելի առարկայական կդառնան հատուցումների համար վաղեմության ժամկետների վերաբերյալ միջազգային իրավական խոչընդոտները, ու ով գիտե՝ ինչպոր ժամանակ, Ասված չանի, հնարավոր կլինի պատմության ցավալի կրկնությունը....

Պետությունն, ուրեմն, այս առումով անելիք ունի, մինչդեռ այդպես էլ հասկություն չեղավ ապրիլի 24-ի պաշտոնյաների ելույթներում այդ հարցում, պատմաբաններ չխոսեցին, խոսող պաշտոնյաներն էլ լողոցեցին ասելիքը՝ որքան կարողացան, ենթադրել տալով, որ Ցեղասպանության ճանաչման ներկա գործընթացի էությունը փոխելու, նոր շեշտադրումների խնդիր դրված չէ, դրա մասին մտածելու դեռ ժամանակ չի եղել, գլուխները խառն է ներքին խնդիրներով՝ մինչեւ տեսնենք: Կամ էլ հավանաբար տեղում դոփելու խնդիր է դրվում առայժմ՝ անկախության առաջին տարիների լիդարիստական սկզբունքների կարոտախտով, չգիտենք:

Նիկոլ Փաշինյանի ուղերձում եւ ռուսական հեռուստաընկերության եթերում հնչած ուղիղ խոսքում եւս ոչինչ չհստակեցվեց. «Այժմյան Թուրքիան 104 տարի առաջվա իրադարձությունները ցեղասպանություն չի համարում եւ մինչեւ այսօր չի ճանաչում սեփական պատմության այդ ամոթալի էջը՝ մերժելով ինչպես հարյուր հազարավոր հայերին սրի քաշելու փաստը, այնպես էլ մերժելով դրա համար կրել բարոյական, պատմական եւ նյութական պատասխանատվություն», սանդարս խոսք էր հղել վարչապետը: Հետագայի մասին՝ ոչինչ, կամ ողղակի շեշտը դրվեց Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի վրա, «քանի որ այն շատ կարեւոր քայլ է երկրագնդի վրա բոլոր ապագա ցեղասպանությունների կանխարգելման համար»: Կանխարգելենք պիտի, ուրեմն, ուրիշների հնարավոր ցեղասպանությունները:

Մինչդեռ Հայոց ցեղասպանության հարյուրամյակին դեռ, համահայկական հռչակագրով նախատեսված էր Ցեղասպանության հետեւանքների հաղթահարման իրավական պահանջների թղթածրարի մշակումը հետագա տարիներին: Բոլոր դեպքերում, անգամ եթե քաղաքական բարենպաստ վիճակ չկա մեր երկրի շուրջ այդ առումով, այդ փաթեթը հարկ է մշակել, պատրաստ ունենալ, որ հենց բարենպաստ լինի մթնոլորտը՝ գործարկման դրվի: Սակայն պատմաբանների անտեսումը հենց միայն ապրիլի 24-ին, որոշ առումով պետության քաղաքականությունն արտացոլող Հանրային հեռուստատեսության եթերից, հուշում է, որ իշխանությունն այդպիսի խնդիր չի էլ դնելու իր առջեւ:

Այդպիսի փաթեթի առկայությունը մինչդեռ կգծագրեր մեր պահանջների սահմանն ու բովանդակությունը, որպեսզի չունենանք այլեւս «Փերինչեքն ընդդեմ Շվեյցարիայի» նմանություններ, կարծրացնելով մեզ համար բացասական նախադեպային իրավունքի առկայությունն աշխարհում: Որպեսզի ամեն ժիրինովսկի, իր երկրի տվյալ պահի շահից բխող մահակախաղը կիրառելով, պատեհ-անպատեհ չբղավի, որ հայերը պետք է հեռ գրավեն Կարսն ու Արդահանը, իսկ Արարատը Թուրքիան պետք է վերադարձնի հայերին՝ մեզ, հայերիս բան սովորեցնելով ըստ իր պետության տվյալ պահի շահի: Մե՛նք պետք է օրակարգ թելադրենք, ու ոչ թե ժիրինովսկիները՝ իրենց ձեռնածություններով, իրենց սեփական պետական ու ազգային շահերն ամեն տեսակ բարոյականությունից ու արդարությունից վեր դասելով ու սադրելով: Եթե ունենանք Ցեղասպանության ճանաչման եւ հետագա քայլերի վերաբերյալ ռազմավարության փաթեթը, ու միջազգային ասյաններում արդեն այդ փաթեթի առաջնահերթություններով շարժվենք, փաթեթի շուրջ միջազգային կոնսենսուս փորձենք ձեւավորել, միգուցե այն ժամանակ հնարավոր կլինի նաեւ միջազգային դատական գործընթացներից հաջողություն ակնկալել:

Բայց նախ՝ համահայկական քննարկումներ պետք է սկսվեն այս թեմայով՝ առանց վախուվիշի, պրագմատիկ ու առարկայական առաջարկներով եւ սթափ հայացքով, առանց կուսակցական խարդավանքների:

Կա՞ այդպիսի քննարկումների ցանկություն՝ ինչ-որ չի նկատվում:

Թե՞ դեռ պիտի շարունակենք ուրախանալ աշխարհի պետությունների՝ անգամ մանր համայնքային կառուցների ճանաչումներից, որպես ծույլ հոգու մխիթարանք: Եւ մնանք միայն քաղաքական մանր-մունր ճանաչումների վտանգավոր տեղապտույտի մեջ՝ ողջ թափով գլուխ բարձրացրած իսլամիստական շարժումների այս պիկում:

Մյուս կողմից՝ փաթեթի վերաբերյալ քննարկումներն ու բուն փաթեթի պատրաստումը նույնպես առ ոչինչ կլինեն, եթե հարցի վերաբերյալ սփյուռքն ու Հայաստանը համաձայնեցված մոտեցումներ չմշակեն:

Հիշողության մեր սիմվոլը...

⇨1 Մայր տաճարի վեհաշուք սվերում, «կռնակը» Հայոց հուշարձանին «դարձած» Վիլհելմ Երկրորդ կայսրն իր ձիարձանի բարձր պատվանդանից թերեւս հուշում է, որ Ստամբուլի հետ քույրացած քաղաքում՝ Քյոլնում թուրք- գերմանական դաշինքն այնքան ամուր է, որ գերմանական ճարտարապետական կոթողների սվերում անգամ չափերով փոքր, գերմանացի արվեստագետներ Շտեֆան Քայզերի եւ Մախս Շոլցի այդ հուշարձանը տեղ չունի: Գերմանացի արվեստագետները, հուշարձանն հենց այդ վայրում տեղադրելու անզիջում պայքարի ջատագովները դեռ անցյալ տարի մեր մասնավոր զրույցներում պնդում էին, թե իրենք ամաչում են, որ քաղաքային իշխանությունները ապամոնտաժեցին մի հուշարձան, որը մեղսակցությունից ինչ-որ չափով «սրբում» էր գերմանացիներին: Վիլհելմ Երկրորդի հրամանով նա՛եւ արտոնություն է տրվել բնաջնջել մի ժողովրդի, որի կենդանի մնացած ժառանգներն արվեստի խորհրդանշական գործով բոլորի՝ մարդկության ողջամիտ հասվածի ցավի մասին են հիշեցնում: Հիմա այն անիվների վրա է, շարժական, ինչպես իր բանաստեղծության մեջ Մուշեղ Իշխանն էր Արարատ լեռն այսպես տուն դարձնելու երազ փայփայում: Մտապատկերիս պատատառին երկու Գերմանիա է հառնում դարձյալ, հակադրությունների այսպիսի՛ խտացում՝ Ֆիլիարմոնիայի, Լուդվիգ թանգարանի հարեւանությամբ, հուշարձանն այս առայժմ ժամանակավորապես՝ մեկ օրով իր «գիրկն է առել» Հայնրիխ Բյոլ անունը կրող փոքրիկ հրապարակը, որ Հռենոսի ջրերին դիմահար, մեծաղյա իր արգելապատնեշ ցանկապատներից ի տես է անում սիրո եւ հավատարմության միլիոնավոր կողպեքներ: Գնացքների աշխույժ աղմուկի, մարդկանց հոսքի մեջ անհատների սերն այս տարածքում խտացնում է նաեւ հուշարձանը, եւ այն ոչ միայն չի հակադրվում, այլ խիստ ներդաշնակ է Բյոլի գրականությանը: Բայց... արտոնված չէ, ապրիլի 24- ի հիշատակի արարողությունից հետո դարձյալ լքելու է հրապարակը:

Քյոլնի «Կոմիտաս» եւ «Սիլվա Կապուտիկյան» միության միացյալ երգչախումբը Կոմիտաս է երգում, հուշարձանին ծաղկեփնջերն իրենց երփներանգն են ավելացնում, երիտասարդները հակիրճ ներկայացնում են Ցեղասպանությանը զոհ գնացած Զոհրապի, Կոմիտասի, Ռուբեն Սեւակի կենսագրականները, «Հիշելով ցեղասպանությունը» նախաձեռնող խմբի ղեկավար **Իլիաս Ույարը** շեշտում է, թե հայոց, արամեացի, ասորի, Պոնտոսի հույների հետ հիշում ենք նաեւ այն թուրքերին, որ իրենց ղեկավարների հրամանը գիտակցաբար շրջանցելով փրկեցին՝ սպանելու փոխարեն, իսկ օրվա գլխավոր բանախոսը՝ գերմանական հեռուստատեսության առաջին ալիքի՝ ARD- ի «Մոնիտոր» քաղաքական հաղորդման վարող **Գեորգ Ռեսթլեն** արդարադատում է Հայոց ցեղասպանության՝ չյուրացված դասին՝ ռասիզմին եւ ազգայնականությանը: Ու մինչ հաջորդ բանախոսը կմոտենա բացօթյա հրապարակում տեղադրված բարձրախոսին, անձրեւն ու քամին, ամպրոպը, որ շաբաթից ավել լքել էին Գերմանիան, վերադարձան: Հուշահանդեսն ընդհատվեց: Վիլհելմ Երկրորդի, Քյոլնի քաղաքապետարանի, թուրքերի կամքից վեր է երկնքի այս լացը, որ սովորաբար ուղեկից է լինում հայերիս արցունքներին:

Դեռ ճանապարհին եմ, երբ ժամը 20. 31- ին գերմանական տեղական թերթերից մեկն առցանց լրատվության մեջ իրազեկում է, թե Շտուտգարդում Հայոց ցեղասպանության հիշատակի երեկոն Լութերական եկեղեցում չի կայանալու՝ անանուն զանգահարողը զգուշացրել է, թե ռումբ է տեղադրված, եւ ոստիկանությունը շրջափակել է տարածքը: Այստեղ, ի տարբերություն մյուս վայրերի, ելույթ էր ունենալու երկրամասային խորհրդարանի՝ Լանդթագի պատգամավոր **Վիլլի Հալդերը**: Ահազանգը կեղծ է եղել: Առայժմ պարզ չէ, թե ում մտքով է անցել նման ձեւով խաթարել զոհերի ոգեկոչման արարողությունը: Համայնքի հոգեւոր հովիվ **Տիրատուր Սարդարյանը** դիմամատյանի իր էջում հետեւյալ հաղորդագրությունն է թողել՝ «Որոշ մարդկանց համար բավարար չէ, որ մեր նահատակները գերեզման չունեն, նրանք փորձում են մեզ արգելել հիշել Ցեղասպանության զոհերին կամ աղոթել նրանց հոգիների համար: Բայց դա նրանց չի հաջողվի: Միջոցառումը կկայանա: Մոմ օրերս կտեղեկացնենք»:

AZG NEW SHABAT 1.QXD 25/04/2019 22:54 Page 5

Գեներալները չեն փախչում

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

Դասական ակտերի հարկադիր կատարման ծառայության նախկին պետը հարկադրված է վերադառնալ Հայաստան: Գեներալ Միհրան Պողոսյանը, որի նկատմամբ մեղադրանք է առաջադրվել ու հետախուզում հայտարարվել, հայտնաբերվել է Ռուսաստանում եւ հիմա, ինչպես մեր ՀՔԾ-ն է ասում, ընթանում է գործընթաց՝ գեներալին Հայաստանին հանձնելու նպատակով: Ի տարբերություն մերձմոսկովյան խաղաղ երեկոները վայելող այլ հայ մեղադրյալների, գեներալ Պողոսյանը Ռուսաստանի քաղաքացի չէ եւ ուրեմն՝ Պողոսյանին չհանձնելու որեւէ

ցանկություն Ռուսաստանը կարող է չունենալ: Բայց գեներալը դիմել է այլ միջոցի: Ինչպես հայտարարել է Պողոսյանի փաստաբանը՝ ՀՀ ԴԱՀԿ նախկին պետը դիմել է Ռուսաստանին քաղաքական ապաստան ստանալու համար: Փաստաբանը մանրամասն չի հայտնել, բայց ենթադրվում է, որ Պողոսյանն իր խնդրանքը հիմնավորել է հանգամանքով, որ հայրենիքում իր հանդեպ քաղաքական վենդետա է կիրառվում, այն է՝ առաջ կարողանում էր եւ բանան ներկրել, եւ Պանամայի քարտեզին նայել, եւ ԴԱՀԿ-ն ղեկավարել, իսկ հիմա չի կարողանում. փրկեք: Չի բացառվում, որ Պողոսյանը, որը շեշտեմ՝ գեներալ է, խնդրագրին կցել է նաեւ այն դաժան հեռանկարը, որն իր կարծիքով իրեն սպասվում է, եթե Ռուսաստանն իրեն հանձնի Հայաստանին:

Թե ինչ կորոշի Ռուսաստանը, ինձ համար միշտ կարեւոր է, նույնը եւ այն, թե մինչեւ ո՞ւր կհասնեն ՀՀ ՀՔԾ-ի ձեռքերը, եւ որքանով են դրանք՝ կոնկրետ Ռուսաստանում ամուր: Սրանք իրավա-քաղաքական հարցեր են, իսկ ես դրանց մասնագետը չեմ: Ինձ հետաքրքրական է թվում այն, որ հայ գեներալը ըստ էության փախչում է հայրենիքից ու քաղաքական ապաստան է խնդրում, թեկուզ ռազմավարական դաշնակից, բայց օտար երկրից: Սա նշանակում է, որ Միհրան Պողոսյանը, երբ գեներալի ուսադիրներով համազգեստ է կրել, երբեք չի զգացել այդ ուսդրների ծանրությունը, ոչ մի գիրք չի կարդացել գեներալների մասին ու ոչ մի ֆիլմ չի նայել: Չգիտի, որ այդ ուսադիրներով մարդիկ միայն հայրենիքից փախչելու համար մեղադրելի են, անկախ նրանից այդ հայրենիքը ավազակաբարո ռեժիմի ճիրանների մեջ կծկված թփրտո՞ւմ է, թե՞ նոր է ազատվել արյունոտ ռեժիմի սարսափելի երախից: Գեներալը, այն էլ արդարադատության,

արդարադատությունից վախենա՞...Հասկանալի է, որ երիտասարդ մայրը կարող է վախենալ, որ ամուսնու պարտքերի պատճառով շուտով իրենց տուն կարող են գալ դատական ակտերի հարկադիր կատարողներն ու բռնագանձել նույնիսկ փոքրիկ երեխայի գիշերանոթը, բայց գեներալը վախի իրավունք ունի՞...Քանի՞ նման գեներալ ունենք, Միհրան Պողոսյանը միակն է, չէ՞...

Մյուս կողմից՝ բա ի՞նչ անի ԴԱՀԿ նախկին պետը: Չէ, հասկանալի է, որ ուսադիրները պարտադրում են վերադառնալ հայրենիք ու կռվել սեփական անմեղությունն ապացուցելու համար, բայց դա հնարավո՞ր է, եթե դու նախկին պաշտոնյա ես...Իմիջիայլոց, կա՞ նախկին պաշտոնյա, որը ոչ մի բանի համար չի մեղադրվում... Եթե չկա, ապա սարսափելի է, հայրենիքից փախած գեներալ ունենալու պես:

Ազգը կա, առաջնորդը՝ ոչ

Պետության լավ ղեկավարը նա չէ, որը ամեն հարցով դիմում է ժողովրդին ու անում այն, ինչը ժողովուրդն է ասում, այլ նա է, որը անում է այն, ինչը ինքն է որոշել ու սանում է ժողովրդի հավանությունը: Հատկապես ազգային հարցերում այսպես է: Օրինակ Բենյամին Նաթանյահուն հրեա ժողովրդին չի հարցրել, թե ինչպե՞ս իրենցը դարձնեն Երուսաղեմն ու Գոլանի բարձունքները, նա այնպես է արել, որ ԱՄՆ նախագահը Սուրբ քաղաքն ու այդ բարձունքները իսրայելական ճանաչի, այն նույն նախագահը, որը ապրիլի 24-ին այդպես էլ չի ասում ցեղասպանություն բառը: Թե ինչպե՞ս են իրապես ազգային առաջնորդները հասնում իրենց ազգային իղձ-երազանքների իրագործմանը ես չգիտեմ, բայց գիտեմ, որ ազգային առաջնորդը սովորական ղեկավարից տարբերվում է հենց այս ունակությամբ:

Մենք նման ունակություններով առաջնորդ չունենք: Հայաստանի վարչապետը, օրինակ ապրիլքանչորսյան իր ուղերձում հայտարարել է, թե ոճրագործը, առանց շեշտելու ի դեպ ոճրագործի ազգությունը, ոչնչացրեց մեր պոետներին, տունն ու գույքը չէ, պոետներին, եւ մենք, ըստ մեր վարչապետի, նրանց հիշատակը վառ պահելով, արդարության վերականգնման համար պայքարելով՝ ձեռք կբերենք անմահություն, ուստի հետեւողական ենք լինելու Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում:

Ինչպե՞ս: Լավ այդ ո՞ր հայը չգիտի, որ հետեւողական ենք լինելու Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում եւ այդ ո՞ր մեկս հետեւողական չէ: Կամ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը ո՞րն է, այն որ Բուրկինա Ֆասոն էլ ճանաչի՞, որի անվանումն ի դեպ, նշանակում է՝ արժանապատիվ մարդկանց հայրենիք: Ասենք ճանաչեց, ենթադրենք ամերիկյան վերջինը մնացած՝ Միսսիսիպի նահանգն էլ ճանաչեց, հետո՞, մեր ջանքերը համարելու ենք փոխհատուցվա՞ծ: Հատուցումը լավ բառ է: Մոռացված... Մի տեսակ նույնիսկ հիշում եւ պահանջում ենք, ոչ բոլորս, անշուշտ, որ վերականգնվի այս բառը համաժողովրդական բառապաշարում, ինչի մարդության եւ քարտացման պատասխանատվությունը, ի դեպ, նույնպես պետության ղեկավարինն է, եթե իհարկե նա լավն է: Նա ուրիշ ելույթներ պետք է ունենա ու այլ, կներեք, բայց կարեւոր ու թույլ տվեք՝ ազգային գործերով պետք է զբաղվի: Հայաստանը, իմիջիայլոց՝ հե՛նց ցեղասպանության հետեւանքով, այնքիսի երկիր է, որը պետության ղեկավար չի ընտրում, ազգի առաջնորդ է ընտրում: Նա չի կարող չասել, որ Վանն ու Կարսը մերը չեն, նա չի կարող չասել, որ Արցախն ու նրա շրջակա հողերը ազատագրված չեն՝ շեշտելով՝ վերջնականորեն: Նա չպետք է քննարկի այս հարցերը, քանի որ պետք է հասնի դրանց այս լուծումներին:

Երեւանի պետական համալսարանում Փաշինյանն ասել է, թե ժողովուրդը՝ Արցախի հարցով, պետք է գրի ու իրեն տա պահանջագիր, ինքն էլ դա պետք է անգիր անի ու գնա բանակցելու:

Բայց պետության լավ ղեկավարը նա չէ, որը ամեն հարցով դիմում է ժողովրդին ու անում այն, ինչը ժողովուրդն է ասում, այլ նա է, որը անում է այն, ինչը ինքն է որոշել ու սանում է ժողովրդի հավանությունը:

Հ. ԱՖՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ

Ասացե՛ք, փոքրիկ դսեղցու կյանքը փոխվելո՞ւ է

Կառավարությունը նախորդ շաբաթ որոշում էր ընդունել «Քաղաքացու օրվա» տոնի կապակցությամբ պետական գանձարանից դուրս գրել 124 միլիոն դրամ...

Օրեր առաջ Դսեղ էինք գնացել, Թումանյանի գյուղ՝ Ամենայն հայոց բանաստեղծին այցի: Շրջում էինք գյուղում, փորձում պատկերացում կազմել, թե Թումանյանը ժամանակին ինչպես է վազվզել գյուղի փողոցներում, հյուղերի կտուրներին ու մերձակա հանդերում: Իրոք զորեղ նկարագող է Թումանյանը, քանի որ այն, ինչ մեզանից ոմանք աչքով տեսնում էին այդ պահին, մտքով տեսել էին մանկության տարիներին՝ «Գիքորի», «Անուշի», «Մարոյի» ու «զըռ չոբանի» միջոցով: Կարծես ոչինչ չէր էլ փոխվել: Բնակիչներն էլ լավն էին, մի քանիսի հետ հաստրեցինք շփվել ու կարճ մտերմություն ստեղծել: Գյուղում զբոսնելու ժամանակ, ցավոք ուրի, առերեսվեցինք նաեւ աղքատության հետ, իսկական, գյուղի աղքատության: Հանդիպեցինք մի փոքրիկ տղայի, որն իր ամբողջությամբ հաստատում էր Թումանյանի տողերը.

«Մեր ապրուստն ի՞նչ է.- մի կտոր չոր հաց,
Էն էլ հրեն հա՜- երկնքից կախված:
Մի մարդ որ նրա երեսը պահի՝
Նըրա ապրուստը ի՞նչ պիտի լինի»:

Ես նույն վայրկյանին հիշեցի, որ ընդամենը մի քանի շաբաթ առաջ մեր կառավարությունը որոշել է պետական տոներն ավելացնել եւս մեկով՝ «Քաղաքացու օրով», եւ ընդամենը մի քանի օր առաջ հավանություն տվել՝ այդ օրը 124 միլիոն դրամ ծախսելու անմարդկային առաջարկին:

Անկեղծ ասած, ես լավ չեմ հասկանում՝ ո՞րն է այդ քաղաքացու օրվա իմաստը, որովհետեւ, որպես քաղաքացի, ես իմն եմ համարում տարվա բոլոր օրերը, եւ կարիք չկա դրանցից որեւէ մեկն առանձնացնելու. տարվա օրերը մարդիկ չեն, ո՛չ սեւ, ո՛չ սպիտակ, իսկ նախկին իշխանություններին որեւէ բան ապացուցելու համար օրացույցի օրերից մեկը կարմիրով նշելը խոհեմ որոշում չէ:

Բացի այդ՝ խորությամբ չեմ ընկալում՝ ինչպե՞ս է ծախսվելու այդ գումարը, գունավոր փուչիկների ու տարբեր ծավալի շշերով շամպայնների վրա՞, թե՞ հրավառությունների ու «կիսառաբիզ դասական» երաժշտության: Եվ ամենակարեւորը՝ ովքե՞ր են օգտվելու այդ ամենից, այն երեխաները, ովքեր ամեն ամանորի ժամանակ նեղանո՞ւմ են իրենց ծնողներից, քանի որ վերջիններս հնարավորություն չունեն որեւէ գույնի փուչիկ ու հրավառություն գնելու, թե՞ հենց նույն ծնողների, որոնք, արդեն երկար տարիներ, իրենց Ամանորի սեղաններին շամպայն չեն դրել, եւ այն պայթեցնելուց հետո չեն վայելել իրենց երեխայի աչքերի փայլը...

Լավ, անդրադառնանք Դսեղին ու փոքրիկ դսեղցուն: Այդ պատանին, որը, վստահ եմ, դասվում է վերոհիշյալ՝ վերջին խավի երեխաների ցանկին, որի հայրն ու մայրը դասվում են վերոհիշյալ ծնողների դասին, օգտվելո՞ւ է այդ 124 միլոն դրամից: Ինչպե՞ս է օգտվելու: Այդ տոնակատարություններից հետո նրա կյանքը փոխվելո՞ւ է, նա ամեն օր կարողանալո՞ւ է կուշտ փորով հաց ուտել, նրա կարկատված շորերը փոխվելո՞ւ են, իսկ ոտքերի մի քանի չափս մեծ ճտակոշիկնե՞րը: Ներեցե՛ք, տիա՛ր, բայց դուք 124 միլոն ծախսելու որոշման մեջ, մեղմ ասած, բարոյական չեք, եւ Սահյանն իր ժամանակին շատ ճիշտ է նկատել, որ «Երկիրը սովորաբար պատկանում է իշխանությանը, բայց հենց պատերազմ է սկսվում, անունը դնում են հայրենիք ու հանձնում ժողովրդին»: Դուք սա չեք կարող ժխտել, որովհետեւ սա է ճշմարտությունը, եւ դուք սրա կրողն եք, եւ ինքներդ էլ լավ գիտեք, որ կիսափաղ ու կիսամերկ երեխայի ծնողից գանձված հարկերի հաշվին հրավառություններ ու խրախճանքներ եք կազմակերպում ու կանգնում բոլոր միջոցառումների առաջին շարքերում, միաժամանակ գիտեք նաեւ, որ դուք այս պետության առաջին շահառուներն եք, բայց վաղը, Աստված մի արասցե, եթե պատերազմ սկսվի, դուք նույն դսեղցուն ու նրա հորը, նրանց հետ՝ նմանախավ բոլորին, կանգնեցնելու եք առաջին շարքերում:

Ի դեպ, մենք հիմա ապրում ենք մի իշխանության ժամանակ, որը նախկին ամբարտավան իշխանությանը մշտապես փնովում էր մարզերում բնակվող քաղաքացիներին ուշադրություն չդարձնելու պատճառով: Ես շատ լավ եմ հիշում իմ հրաշալի բոլորները, երբ դեռ գյուղում, մեր կիսաստրիճ հեռուստացույցով տեսնում էի, թե ինչպես է այսօրվա Հայաստանի վարչապետը խորհրդարանի ամբիոնից իշխանությանը կոչ անում «կենսաթոշակային ծամածռություններին» փոխարեն «նույն տասիկ-պապիկների «նիսյաները» փակել»: Կրկին ներողություն եմ խնդրում, բայց այս ամենը տեսնելով, այսօրն ապրելով, սկսում եմ համոզվել, որ «կենսաթոշակային ծամածռությունները» երկուսներ են եղել, թե՛ գաղափարի կողմնակիցների, թե՛ ընդդիմադիրների մոտ, որովհետեւ հեղափոխություն հորջորջված իշխանափոխությունը ցույց տվեց, որ «կուսակցությունը պետք է»:

Ես գտնում եմ, որ, եթե այդ ժողովրդասիրական ու ժողովրդագրավ հայտարարություններն, ըստ էության, համապատասխանեին իրականությանը, այսօր, վստահաբար, 124 միլիոն դրամից փոքրիկ դսեղցին դույզն ինչ կօգտվեր, դրանից նրա ծնողների «նիսյաները կփակվեին», նրա կյանքն էլ թերեւս կփոխվեր:

Շնորհավորում ենք

Օրերս լրացավ մեր ամենահայտնի թատերական գործիչներից, «**Ազգ**»ի էջերում բազմաթիվ հոդվածներ ստորագրած հեղինակներից **ՎԱՐՍԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ** ծննդյան տարեդարձը: Որտանց շնորհավորում ենք մեր բազմահմուտ աշխատակցուհուն, որն արժանավորապես կրում է ՀՀ արվեստի վաստակավոր գործչի կոչումը՝ բազմաթիվ այլ կոչումների, «Արտավազդ» եւ այլ մրցանակների կողքին: Առողջություն եւ ստեղծագործական անսպառ եռանդ ենք ցանկանում նրան:

AZG NEW SHABAT 1.QXD 25/04/2019 22:54 Page 6

Երկփեղկված ու եռապեղկված լրատվադաշտ

Օրերս Shabat.am կայքը տեսանյութ էր տարածել, որտեղ ներկայացվում էր հայկական մեդիադաշտի ուղղվածությունն ու դրանց պատկանելիությունը: Ըստ տեսանյութի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են 61 հայտնի լրատվամիջոցներ: Նույն աղբյուրը հայկական լրատվամիջոցները բաժանել է երեք խմբի՝ իշխանական, հակաիշխանական եւ ազատ:

Իշխանական են համարվում միայն 9 լրատվամիջոցներ. դրանք են՝ Հանրային հեռուստադառիոընկերությունը, Արմենպրեսը (որոնց սեփականատերը Հայաստանի Հանրապետությունն է), «ԱՐ» հեռուստաընկերությունը, որ պատկանում է վարչապետ Փաշինյանի մտերիմ Վարդանյան ընտանիքին, վարչապետի մենտոր Խաչատուր Սուքիասյանին պատկանող Araratnews.am-ը, առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին պատկանող Newsline.am եւ Ilur.am կայքերը, «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Թագուհի Թովմասյանի «Ժողովուրդ» թերթը՝ armlur.am-կայքով, Նարեկ Գալստյանին ու Գեւորգ Սաալեյանին պատկանող 24NEWS.am կայքը եւ Փաշինյանի ընտանիքին պատկանող «Հայկական ժամանակ» թերթը՝ armtime.am-կայքով:

Հակաիշխանական կամ, այսպես ասած, «հակահեղափոխական» են համարվում 36 լրատվամիջոցներ, որոնց մեծամասնությունը, իսկզբանե պատկանելով ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանին, երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի ձերբակալությունից հետո սկսվել են բաժանվել երկու խմբի՝ քոչարյանական ու սարգսյանական, քանի որ Քոչարյանի ձերբակալությունից հետո նրա մտերիմները մեծ արագությամբ կարողացան ձեռք բերել հայկական մեդիադաշտի մի զգալի հատված: Այդ լրատվամիջոցներից որոշները պատկանում էին Սերժ Սարգսյանին:

Ռոբերտ Քոչարյանն առաջինը գնեց «Արարատ» ՀԸ-ն՝ անվանափոխելով 5-րդ ալիքի: Դրանից հետո Արթուր Բաղդասարյանից գնեց Հ3-ը եւ անվանափոխեց MoTv-ի, այնուհետեւ կարողացավ լավ հարաբերություններ հաստատել «168Ժամ» թերթի սեփականատեր Սաթիկ Սեյրանյանի հետ: Հ2 ՀԸ-ն ու Yerevan Today-ը նույնպես հարում են քոչարյանական թեւին:

Այս շարքը համալրում է նաեւ վերջերս, նախկին ՀՀԿ-ական պատգամավորներ Արման Սաղաթելյանի, Կարեն Բեքարյանի, Միհրան Հակոբյանի եւ Սամվել Ֆարմանյանի կողմից ստեղծված «Քառյակ մեդիա» ընկերությունը, որը ներառում է «Թերթ էյ էմ» ՍՊԸ-ն, «Արմնյուզ» ՓԲԸ-ն, «Ռադիո 107 ՖՄ» ՍՊԸ-ն մեդիառեսուրսները:

Ընդդիմադիր լրատվամիջոցների շարքը, միտս միեւնույն՝ Shabat.am-ի, շարունակում են Atv եւ «Շանթ» հեռուստաընկերությունները:

Տեսանյութում Սերժ Սարգսյանի ակնհայտ կողմնակիցներ են համարվում Արա Սաղեթելյանին պատկանող Panorama. am-ը եւ «Այսօր» am-ը, Մենուա Հարությունյանին պատկանող Slaq.am-ը, Փիրուզա Մելիքսետյանին պատկանող «Իրատես» թերթը, Կոստանտին Տեր-Նակալյանին պատկանող «Բլոգ նյուզ» կայքը եւ Արթուր Դանիելյանի Antifake. am-ը:

Քոչարյանասարգսյանական թեւին հարող լրատվամիջոցներ են համարվում նաեւ «Լուսավոր Հայաստան» կուսակցության պատգամավոր Արման Բաբաջանյանին պատկանող 1.am-ը եւ «Ժամանակը», Հ3 դաշնակցությանը պատկանող Yerkir media ՀԸ-ն , Sputnik Armenia-ն, Հայր Թովմասյանի քրոջը պատկանող hayeli.am-ը, Արմեն Գեւորգյանին ու Վիկտոր Սողոմոնյանի ընկերոջը՝ Արա Թադեւոսյանին պատկանող Media-max-ը, Հովիկ Աբրահամյանի մտերիմ, ազգությամբ եզդի Բորիս Մուրազուն պատկանող Politik.am-ը, Սյունիքի նախկին մարզպետ Վահե Հակոբյանի paratv-ին, Արման Վարդանյանի Lurer.com-ը, Սամվել Բաբայանական 7or.am-ը, Անինա Հովհաննիսյանի Analitik.am, Արփինե Հովհաննիսյանի ու Գեւորգ Կոստանյանի մտերիմ Կարեն Զադոյանի iravaban.net-ը, Վահե Հովհաննիսյանի Zham.am-ը TopNews-ը, Mamul.am-ը, Փաստ.am-ը, Livenews.am-ը եւն:

Ազատ լրատվամիջոցներ են համարվում «Ազատություն» ռադիոկայանը, Factor.am-ը, Lragir.am-ը: Այս խմբում դժվարությամբ գովազդ ու միջոցներ հայթայթող լրատվամիջոցներ են համարվում GALAtv-ին, «Հրապարակ» օրաթերթը, «Հետքը», «Առավոտ» օրաթերթը, «Շաբաթ» լրատվական կայքը, «Ա1+-ը» «Ասեկոսեն» եւ այլ՝ նմանատիպ լրատվամիջոցներ:

Յուրահատուկ դիրքավորում ունեցողի կարգավիճակ է տրվում Գագիկ Ծառուկյանին պատկանող «Կենտրոն» ՀԸ-ին:

Հ.Գ. Յավոք սրտի տեսանյութը պատրաստողների տեսադաշտից հանիրավի վրիպել են այնպիսի լրատվամիջոցներ, որոնք կանգած են Հայաստանի երրորդ հանրապետության լրագրության ակունքներում եւ իրավացիորեն համարվում են հետանկախության շրջանի լրագրության երախտավորները, որոնցից է «Ազգ» շաբաթաթերթը (azg@azg.am), որի վերլուծականներից մի շարք լրատվամիջոցներ օգտվում են շատ հաճախ, բայց միտս խուսափում հղումներ տալուց:

Թեքեյանական օլիմպիադա

Հայտնի դարձան Թեքեյանական 9-րդ օլիմպիադայի հաղթողները: Ամենամյա մրցույթն իրականացվում է «Թեքեյան Կենտրոն» հիմնադրամի կողմից՝ սկսած 2010թ-ից: Այն ընդգրկում է երեք առարկա՝ մաթեմատիկա, անգլերեն լեզու, հայոց լեզու/գրականություն, եւ խրախուսում է բարձր առաջադիմությունը, ոգեւորություն է հաղորդում աշակերտներին, հնարավորություն է ընձեռում առողջ մրցակցության պայմաններում դրսեւորել իրենց գիտելիքներն ու արժանանալ մրցանակների, ինչպես նաեւ ծանոթանալ տարբեր մարզերում բնակվող հասակակիցների հետ:

Այս տարի եւս մրցույթում իրենց ուժերը չափեցին Հայաստանի՝ Երեւանի, Գյումրիի, Ստեփանավանի, Կարբի գյուղի, ինչպես նաեւ Արցախի՝ Բերձորի, Վ. Թեքեյանի անվան դպրոցների եւ Հայաստանի սիրիահայ համայնքի 8-րդ դասարանի աշակերտներ: Ջեռնարկի մասնակիցների ընդհանուր թիվն էր 85:

Մրցույթից հետո, մինչ մասնագիտական հանձնախումբը կամփոփեր արդյունքները, մասնակիցներին առաջարկվեց հյուրասիրություն եւ մշակութային ծրագիր Թումանյանական տարվա շրջանակներում՝ «Շունն ու կատուն» ներկայացումը Երեւանի Պատանի հանդիսատեսի թատրոնում: Այնուհետեւ միջոցառումը կրկին տեղափոխվեց Թեքեյան կենտրոն, որտեղ տեղի ունեցավ օլիմպիադայի մրցանակաբաշխության արարողությունը, եւ հայտարարվեցին հաղթող ճանաչված աշակերտների անունները: Սակայն պետք է նշել, որ չկային պարտվողներ, քանի որ բոլոր մասնակիցներին ԹԿՀ կողմից տրվեցին խրախուսական մրցանակներ՝ Հ. Թումանյանի բանաստեղծությունների եւ քառյակների ժողովածուներ եւ այլն:

Մրցանակաբաշխությանը ներկա էին ՀՀ ԿԳՆ սփյուռքի հետ կապերի բաժնի պետ Կարեն Մնացականյանը, ՀՀ սփյուռքի նախարարության համահայկական եւ միջազգային կազմակերպությունների հետ կապերի բաժնի պետ Անահիտ Դավթյանը, «Թեքեյան կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Վարդան Ուզունյանը (Լոնդոն), Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության ներկայացուցիչներ, դպրոցների տնօրեններ եւ այլք:

Ջեռնարկը մեկնարկեց երգ ու պարով, ասմունքով՝ մասնակից դպրոցների աշակերտների կատարմամբ: Այնուհետեւ հյուրերին եւ օլիմպիադայի մասնակիցներին ողջունեց «Թեքեյան կենտրոն» հիմնադրամի տնօրեն Արմեն Ծուլիկյանը: Շնորհավորելով հաղթողներին, նա կարեւորեց նմանատիպ ծրագրերի իրականացումը, որոնք նպաստում են հայ դպրությանն ու նոր սերնդի դաստիարակությանը: Տնօրենը նաեւ շնորհակալություն հայտնեց մասնագիտական հանձնախմբին ծավալուն եւ անկողմնակալ աշխատանքի համար:

Այնուհետեւ օլիմպիադայի մրցութային հանձնախմբը, որի կազմում էին «Ուսմունք» վարժարանի փոխտնօրեն Ա. Ավետիսյանը (հայոց լեզու եւ գրականություն), ԵՊՀ դասախոս Ա. Մարգարյանը (անգլերեն լեզու) եւ Մ. Գալշոյանի անվ. թիվ 148 դպրոցի փոխտնօրեն Ա. Գեւորգյանը (մաթեմատիկա), մասնագիտական կարծիք արտահայտեց եւ գովասանագրեր, պատվոգրեր եւ մրցանակներ՝ տեխնիկա ու գրքեր հանձնեց բարձր առաջադիմություն դրսեւորած աշակերտներին:

Թեքեյանական 9-րդ օլիմպիադայում առաջին մրցանակի՝ եռօրյա ուղեւորություն դեպի Արցախ եւ Հայաստան երկու անձի համար, արժանացան՝

«Հայոց լեզու եւ գրականություն» - Արմանուշ Մարգարյան (Բերձոր)

«Մաթեմատիկա» - Աշխեն Շահբազյան (Երեւան)

«Անգլերեն լեզու» - Սագո Պազարճեան (Սիրիա)

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայաստանի վաստակավոր լրագրող

Մարդեղենության քննություն

Ապրիլ 24-ին ազգովին նշեցինք Հայոց ցեղասպանության 104-րդ տարելիցը: Դա ինձ համար նաեւ անձնական մեծ վշտի օր էր՝ նախապապերս Վան-Վասպուրականի Ալջավազ քաղաքի, պապերս՝ Կարսի նահանգի Շատեւան գյուղի ծնունդ են: Անցյալ տարի զարմիկս, իբրեւ զբոսաշրջիկ, այցելել էր Արեւմտյան Հայաստան, գտել էր Շատեւան գյուղը, բայց Ալջավազ քաղաքը՝ ոչ: Հետը ժամանակակից Թուրքիայի անգլալեզու քարտեզ էր բերել, որի վրա գտա Շադեւան անունը: Պատմում էր, թե գյուղում հայերին հիշեցնող ոչ մի հետք չկար, բնակիչները թուրքեր ու քրդեր էին: Ալջավազ քաղաքը նույնպես քարտեզի վրա...չկա՛ր: Միգուցե նախապապերիս ծննդավայր-քաղաքի անունը փոխվե՞լ էր: Երբեւէ չեմ տեսել, բայց Ալջավազն ու Շատեւանը ի՛մն են, արյանս մշտամորմոք հիշողության մեջ, որ մանկության օրերից ինձ են փոխանցվել տաս ու պապերիս անվերջանալի պատմությունների հետ:

Այժմ դժվար չէ թեկուզեւ որպես զբոսաշրջիկ՝ Արեւմտյան Հայաստան գնալը: Բայց ես միշտ խուսափել եմ այդ հնարավորությունից: Ուղղակի անկարող եմ ինքս ինձ ստիպել, որ իմ նախապապերի ու պապերի հայրենիք՝ որպես հյուր կամ զբոսաշրջի՛կ գնամ: Վախենամ՝ սիրտս չդիմանա: Հայրենի եզերքի հանդեպ սերն-ատելությունը փոխանցվող այս ահռելի կարոտի մեծությունը երբեւէ կհասնի՞ Թուրքիայի պետական այրերի ուղեղներին: Կասկածում եմ: Նախ, նրանք թո՛ւրք են... Հայոց ցեղասպանության ոճիրն ուրացող անխտիր բոլոր թուրքերին անձամբ ես... մարդ չեմ համարում: Նույնիսկ Հայոց ցեղասպանության ոճիրն ընդունող ու դրա համար սեփական նախնիներին դատապարտող թուրքերի՛ն եմ դժվարանում լիարժեք ընդունել որպես մարդ: Քանզի անգամ «քաղաքակի՞րթ» թուրքերի բացարձակ մեծամասնության մտքովն անգամ չի անցնում, որ իրենք, որպես ցեղասպանների ուղղակի շառավիղ, պարտավոր են փոխհատուցում տրամադրել իրենց պապերի անագորույն ձեռքով ոչնչացված մի ամբողջ ժողովրդի վերապրող ժառանգներին: Հայոց ցեղասպանության 90 ամյակի օրերին Երեւանում անցկացվող միջազգային գիտաժողովում իմ ականջով լսեցի, թե ինչպես այդ ոճիրը դատապարտող թուրք պրոֆեսորներ Մուրադ Բելգեն եւ Թաներ Ակչամը, միմյանց հետ կիսաձայն խոսելով՝ զայրույթ էին արտահայտում: Իբր՝ տե՛ս է՞, սրանք համարձակվում են Թուրքիային փոխհատուցման պահանջ ներկայացնելու մասի՞ն մտածել... Թուրք պրոֆեսորների այդ խոսքերն ինձ համար թարգմանեց լեզուն հասկացող լուսահոգի ընկերս՝ Գրիգոր Գույումջյանը: Բայց քանի որ այս զուտ թրքական հեգնանքը հիշյալ պրոֆեսորների հրապարակային ելույթի ժամանակ չհնչեց՝ ես այդ մասին որեւէ տեղ չհիշատակեցի: Ուղղակի մտածեցի՝ եթե իբրեւ թե քաղաքակի՞րթ, Հայոց ցեղասպանության ոճիրն ընդունող ու դատապարտո՞ղ, հայերին «բարեկա՞մ» թուրքերն ա՛յս մակարդակի էին, հապա մյուսնե՞րի մասին ի՞նչ մտածենք...

Ես պատրաստ եմ ժամանակակից թուրքերի հետ քննարկել Հայոց ցեղասպանության համար Թուրքիայից մեզ տրվելիք փոխհատուցման ձեւերի հարցը: Դա կարող է լինել մեզնից բռնազավթած հողերի գոնե մի մասը մեզ վերադարձնելու, մեր նախնիների երբեմնի բնակավայրերում մեզ բնակվելու իրավունք վերապահելու, Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի համար «արյան գին» վճարելու, նաեւ՝ գույքի կորուստ՝ դիմաց վճարելու, միգուցե նաեւ՝ այլ ձեւերով: Քննարկմա՛ն խնդիր է:

Բայց այդպիսի փոխհատուցման հարց քննարկելու համար նախ եւ առաջ անհրաժեշտ է, որ թուրք պետությունը ազնվություն ունենա աշխարհին ի լուր հայտարարելու, որ ինքը, որպես Հայոց ցեղասպանությունը կազմակերպած թուրքական կառավարողների իրավահաջորդ, ընդունում ու դատապարտո՛ւմ է իր նախնիների մարդակերությունը: Նաեւ՝ ներում է խնդրում ոչ միայն հայ ժողովրդից, այլեւ ողջ մարդկությունից, որովհետեւ ցեղասպանության ոճիրը համայն մարդկության եւ մարդկայնության դեմ կատարված ոճրագործություն էր: Քանի դեռ թուրքական պետությունը, որպես թուրք ժողովրդին ներկայացնող հավաքական կառույց դա չի արել՝ մնացած ժողովուրդները չեն կարող վստահ լինել, որ թուրքերը իրենց նախորդների գազանությունը չեն կրկնի ո՛չ միայն մեր, այլեւ ուրիշների՛ վերաբերմամբ: Դա մարդեղենության քննություն կլինի անխտիր բոլոր թուրքերի համար:

Երբեւէ նրանք կկարողանա՞ն հանձնել այդ քննությունը՝ ցույց կտա ապագան: Գուցե եւ՝ շա՛տ հեռավոր:

AZG NEW SHABAT 1.QXD 25/04/2019 22:54 Page 7

Ոչ թե փնովենք, այլ օգտագործենք

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Մոսկվա

Սոցցանցում ուշադրություն գրավեց մի տեսանյութ՝ նվիրված ռուսաստանյան լրատվատարածքում... հայերի ու հրեաների գերակտիվության մասին: Բլոգերը՝ ռուս մի մարդ, դժգոհություն է հայտնում, թե ինչու հայերն ու հրեաները ամենատարբեր քաղաքական հեռուստահաղորդումներում հանդես գալով որպես ռուս-ռուսաստանցի, խելք են սովորեցնում երկրի բնակչության 80 տոկոսը կազմող բնիկներին, թե ինչպես նրանք պետք է ապրեն, ինչ ներքին ու արտաքին քաղաքականություն վարեն, ինչ հայացքներ դավանեն եւ այլն: Առանձնակի չարություն չկար հաղորդման հեղինակի մոտ, պարզապես գտնում էր, որ առաջին հերթին ռուսները պիտի իրենք իրենց խելք սովորեցնեն, տոկոսային հարաբերության իրենք պիտի գերիշխեն ռուսաստանյան լրատվամիջոցներում: Թե ինչու դա այդպես չէ, բլոգերը լռում է:

Անշուշտ մի հարթակի վրա դնել հայերի ու հրեաների քաղաքական լրատվական ազդեցությունը Ռուսաստանում, տեղին չէ: Հրեաները տնօրինում են ամբողջ հեռուստալիքներ, թերթեր, ամենատարբեր քաղաքականագիտական կենտրոններ, զբաղեցնում են համապատասխան վարչական բարձր պաշտոններ եւ այլն: Այդուհանդերձ մեր ներկայությունն էլ իրոք նկատելի է:

Եվ այսպես, անհատապես ո՞վքեր էին ներկայացվել տվյալ տեսանյութում. Մարգարիտա Սիմոնյան, Սերգեյ Կուրղինյան, Սեմյոն Բաղդասարով, Գեւորգ Միրզայան, Տիգրան Քեոսայան, Կարեն Շահնազարով, Միխայիլ Շահնազարով, Արայիկ Ստեփանյան, Ռոման Բաբայան: Ես չգիտեմ, կասկածներ է հայտնում բլոգերը, թե ինչպես են իրենց հայ զգում այս մարդիկ, ինչպես են կապված իրենց հայրենիքի՝ Հայաստանի հետ, բայց ահա նրանք բոլորը «մեր երկիրը», «մեր ժողովուրդը» ասելով հասկանում են Ռուսաստան եւ ռուս ժողովուրդ: Կարծես մենք կորցրել ենք մեր ազգային ինքնությունը՝ ստանում է ռուս մարդը: Քոչում են այս հայերը մի հաղորդումից մյուսը, հանդես են գալիս մի լսարանից մյուսի առջեւ: Նույն հայերը:

Իսկապես ակտիվ են մեր հայրենակիցները, եւ նրանց հետ հաշվի են նստում: Հետաքրքրական է, որ նշված քաղաքականագետներից միայն մեկն է հայաստանածնունդ՝ Երեւանից՝ Արայիկ Ստեփանյանը: Մյուսները լույս աշխարհ են եկել Կրասնոդարում, Մոսկվայում, Միջին Ասիայում, Ռիգայում, Բաքվում:

Հիմա այն մասին, թե ինչպանով են հայ այս անձինք: Նրանցից ոչ ոք չի ժխտում իր ազգային պատկանելությունը: Սակայն ասել, թե նրանք ռուսական լրատվատարածքում ատամներով պաշտպանում են Հայաստանի ու հայության շահերը, իրատեսական չի լինի: Այս հայերը Հայաստանի շահերը տեսնում են Ռուսաստանի միջով, այն իմաստով, որ մեր երկրի միջազգային անվտանգության գլխավոր երաշխավորը հենց Ռուսաստանն է ու ամեն մի հակառուսական քայլ կարող է բացասաբար անդրադառնալ երկու պետությունների հարաբերությունների վրա՝ ի վնաս մեզ:

Եվ այս պարագան, ի դեպ, անբավականությամբ է ընդունվում Հայաստանում: Մասնավորապես, Երեւանում խոր վրդովմունք առաջացրեց աշխարհասփյուռ ՌՏ-ի գլխավոր խմբագիր Մարգարիտա Սիմոնյանի հրապարակային ֆնադատական խոսքը հայոց մայրաքաղաքում անցկացված միջազգային մի սիմպոզիումի կապակցությամբ, որտեղ հայրենական թավշյա հեղափոխության հենքի վրա ֆնարկվել էր... ԱՊՀ երկրներում եւս նման հեղափոխություններ իրականացնելու տեխնոլոգիաների հարցը: Ասել է թե ամերիկացիների փողերով Երեւանում հավաքված ԱՊՀ-ական սկսնակ «փորձագետները» իմաստնանում են քաղաքական երկարակյացներ Պուտինին, Լուկաշենկոյին, միջինասիական միապետներին տապալելու նրբություններում: Մերժելի Սերժին գահընկեց անելու փորձի հենքի վրա: Եվ ո՞րն էր Սիմոնյանի, այսպես ասած, մեսիջ-մաղթանքը: Որ՝ սիրելի հայրենակիցներ, ամերիկացիներին հաճոյանալու տենչով դուք ուզում եք ձեր դեմ տրամադրել Ռուսաստանի, հեսխորհրդային տարածքի տիրակալների՞ն: Ծանր ու վտանգավոր բեռ չե՞ք վերցնում ձեր նորամարզ ուսերին: Արդյո՞ք իրավացի չէ ռուսասեր ընդբոս հայությունը:

Կարծում ենք ոչ թե պետք է պատճառներ փնտրել մոսկվացի հայազգի քաղաքականագետների ոչ «հայանպաստ» գործողությունները դատապարտելու համար՝ նրանց համարելով գործիք ռուսների ձեռքին, այլ փորձել ակտիվ հարաբերություններ հաստատել նրանց հետ՝ վերջիններիս դրդելով առավել հայամետ գործունեության: Հայաստանի վարչապետը, օրինակ, որ երկիր որ այցելում է, պարտադիր հանդիպումներ է ունենում տեղի հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Դրանց մեջ մեծ խորհուրդ կա: Ինչու Սերժ Սարգսյանը խուսափում էր նման շփումներից: Սակայն մասնավորապես Մոսկվա կատարած այցերի ժամանակ իմաստ կունենար, որ Հայաստանի ղեկավարը հատուկ հանդիպում կազմակերպեր հենց հայանդամ քաղաքագիտական-փորձագիտական հանրությունների հետ, որպիսիք Ռուսաստանում կան ու ճանաչված են: Իրենց հերթին հայաստանյան համապատասխան կազմակերպությունները կարող են այդ ազդեցիկ քաղաքական գործիչներին հաճախ հրավիրել Երեւան ու ակտիվ շփումների միջոցով Ռուսաստանում մեծացած ու ձեւավորված անձանց մեջ զարգացնել եւ ուժեղացնել հայկական ոգին, հայացնել նրանց: Սրանք տեխնիկական հարցեր են՝ միանգամայն լուծելի:

Երբեմն նույնիսկ ափսոսանք ես ապրում: Նույն Մարգարիտա Սիմոնյանի հետ հաշվի է նստում նույնիսկ ներկայիս ռուսաց ամենազորը՝ Վլադիմիր Պուտինը: Սիմոնյանը ցանկալի հյուր է ռուսական ամենաբարձրակարգ քաղաքական հեռուստահաղորդումների համար: ՌՏ-ն գլխացավանք է դարձել արեւմտյան շատ երկրների համար, քանզի նրա հաղորդումները նորաբնույթ ու հավասարակշիռ են եւ իրենց անսովորությամբ գրավում են արեւմտյան լսարանի ուշադրությունը: Եվ չօգտագործել այդ եւ համանման ուժերը, այլ զբաղվել սոսկ փնովումներով, լուրջ զբաղմունք չէ: Ինչ արժե, օրինակ, որ մի պայծառ օր հայոց նորաթուխ խորհրդարանը Երեւան հրավիրի Մարգարիտա Սիմոնյանին, կարելի է նույնիսկ ամուսնու՝ Տիգրան Քեոսայանի հետ եւ հրապարակային բանավեճեր ծավալի ռուս-հայկական հարաբերությունների ու դրանց մեջ ռուսահայ համայնքի դերի շուրջ: Տեսանելի է , որ նորակազմ խորհրդարանի նույն դեմքերը սկսում են հոգնեցնել միմյանց: Թարմություն է պետք մտցնել:

Ա. Միկոյեանի անծանօթ երեսը

«Ազգ»ի վերջին թիւերուն մէջ յօդուածաշարք մը անակնկալի բերաւ զիս: Անաստաս Միկոյեանը, հակառակ Խորհրդային Միութեան ամենակարկառուն եւ տոկուն մէկ ղեկավարը ըլլալուն, տեղ չունեցաւ Հայաստանի մէջ. ոչ իր արձանը կանգնեցուած է, ոչ իր անունով փողոց կամ դպրոց կայ, եւ հասկնալի է, քանի որ, հակառակ իր հայ ըլլալուն,- ըստ լսուածներուն,- Հայաստանին բարիք մը չէ ըրած, օգտագործելով իր դիրքը Սովետ. Միութեան փոլիթպիւրոյին մէջ, ինչպէս ըրած էր Հայտար Ալիեւը Ատրպէյճանին... Առաւել՝ փաստեր կան, որ ան հարիւրաւոր հայերու ձերբակալութեան, ախտորի, նոյնիսկ գնդակահարութեան հրամանագիր ստորագրած է:

Հակառակ վերեւը նշուածին, յայտնաբերուած այս փաստաթուղթին մէջ մանրամասնօրէն գրի առնուած է 1962-ին Ա. Միկոյեանի հետ հայ գրողներու զրոյցը, ուր որոշ լուսաւորում մը կը մեղմացնէ մթագնած պատկերը այդ անձնաւորութեան: (Հետաքրքրողները կրնան ծանօթանալ ամբողջական յօդուածաշարին «Ազգ»ի մարտ 29-ի թիւէն սկսեալ յաջորդող երեք թիւերուն մէջ):

Ուշադրութիւնս գրաւողը՝ հայ գրողներու ներկայացուցած որոշ առաջարկներուն եւ գանգատներուն հանդէպ Միկոյեանի դրական կեցուածքն է: Օրինակ՝ երբ իրեն կ՚ըսուի, թէ թրքական մամուլին մէջ խիստ յարձակումներ կան հայ ժողովուրդին դէմ, իսկ մենք «լռում ենք», Միկոյեանը կ՚ըսէ «Իսկ ինչո՞ւ էք լռում»: Երբ կ՚ըսեն՝ «թուրքերի ամենամոլի ռասիստները մեզ վարկաբեկում են, եւ մենք չենք պատասխանում», «Պէտք է պատասխանել», կ՚ըսէ Միկոյեան: (Այսինքն, «Թուրքիան մեր բարեկամն է, պէտք չէ նեղացնել» չկայ): Ցմոռնանք որ այս դէպքէն երեք տարի եսք ժողովրդական ցոյցերով նշուեցաւ Մեծ եղեռնի 50-ամեակը, որուն յաջորդեց Ցիծեռնակաբերդի Յեղասպանութեան յուշահամալիրի կառուցումը:

Սակայն, ամենահետաքրքրականը այն է, որ երբ իրեն կ՚ըսուի «պարտիա, ռեսպուբլիկա, ռեւոլիւցիա եւ այլ բառերու փոխարէն ինչո՞ւ չօգտագործենք հայերէն խորհուրդ, կուսակցութիւն, հանրապետութիւն, յեղափոխութիւն , սահմանադրութիւն եւ այլն: Միկոյեան համաձայն կ՚ըլլայ օտար բառերը հայերէնով փոխարինելու. «Մտածեցէք եւ արեք ինչպէս յարմար էք գտնում», կ՚ըսէ ան:

Ճիշդ է, որ Ստալինի մահէն առէն մօտ տասնամեակ մը անցած էր եւ ժողովուրդը սկսած էր քիչ մը ազատ շունչ քաշել, սակայն Խորհրդային Միութիւնը կը մնար Խորհրդային Միութիւն, իր «թաղուներով» եւ յայտարարուած ազատութիւններուն վրայ հսկողներով, այնպէս որ հայ գրողներու համարձակութիւնը այսպիսի հարցեր ներկայացնելու, ան ալ Հայաստանի առաջին դէմքի՝ 3. Զարոբեանի գրասենեակին մէջ, իսկապէս անանախադէպ էր, մասնաւորաբար որ սովետներու երկիրը իր գաղափարականով դէպի միջազգայնացում ընթացող պէտք է ըլլար: Իսկ այս պարագային, տրուած հարցերը զուտ ազգային էին:

Նախ՝ խորհրդահայ գրողներու մասին տարածուած սխալ տպաւորութիւնը, թէ անոնցմէ շատեր ազգայինը երկրորդ փլան մղած են եւ սովետներու աչքին լաւ մարդ երեւնալու համար դիմափոխուած են, կը չեզոքանայ այստեղ, քանի որ իրենց կեցուածքով իրենց ազգային արժէքներուն փարած ըլլալը կ՚պարզուցուի: Երկրորդ՝ անոնք ցոյց կու տան, որ իրենք սոսկական գրողներ չեն միայն, այլեւ ազգի առաջնորդներ եւ ազգի հարցերով մտահոգուողներ:

Ահա՛ այստեղ հարց պէտք է տրուի. «Եթէ այն օրերուն նախանձախնդրօրէն փափաք կը յայտնուի հայերէնով փոխարինել լատիներէնէ եկած ռուսերէն բառերը, ինչպէ՞ս վարուիլ այն գրողներուն հետ այսօր, որոնք առանց պարտադրանքի օտար բառերը կ՚որդեգրեն եւ մեր մամուլն ու հեռարձակուող խօսքը կ՚աղաւաղեն: Անոնց հայերէնները չկա՞ն, չե՞ն գիտեր: Կա՛ն, գիտե՛ն, սակայն պիտի կապկեն, չէ՞, հայերէն լեզուն պիտի «հարստացնեն», չէ՞...

Օրինակ՝ «Երեւանի տրանսպորտը պէտք է զարգանայ եւ դիվերսիֆիկացվի...»:

Յարգելի գրող-լրագրող-խօսնակներ, օտար բառերով մեր լեզուն պղտորելը ձեզի պատիւ չի բերեր: Պահպանեցէք մեր մաքուր բառապաշարը, որպէսզի ապագայ սերունդներուն կտակէք զանոնք, ապա թէ ոչ, պատմութեան դատաստանին կ՚արժանանաք:

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

Մահացել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի գլխավոր խմբագիր Տիգրան Ֆարմանյանը

Երկարատեւ ծանր հիվանդությունից հետո, ապրիլի 24-ին իր մահկանացուն է կնքել «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի երկարամյա գլխավոր խմբագիր, ՀԽՍՀ ժուռնալիստների միության անդամ, ՀԺՄ «Ոսկե գրիչ» մրցանակակիր, ՀՀ վաստակավոր լրագրող Տիգրան Ֆարմանյանը:

Տիգրան Ֆարմանյանը 1970-75թթ. սովորել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժնում: Աշխատանքային գործունեությունը սկսել է «Երեկոյան Երեւան» թերթում, որտեղ 1976-87թթ. եղել է թերթի թղթակից, ավելի ուշ՝ բաժնի վարիչ, 1987-90թթ՝ ՀԿԿ Երքաղկոմիտեի գաղափարախոս, բաժնի հրահանգիչ, 1990-95 թթ.՝ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի մեկնաբան, գլխավոր խմբագրի տեղակալ, «Փետրվար» երիտասարդական հավելվածի խմբագիր, 1995-2001թթ. ՝ ՀՀ ՆԳՆ «02» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր, 2001թ.ից՝ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի գլխավոր խմբագիր:

«Ազգ»ը խորապես ցավակցում է հարազատներին, ընկերներին, «Հայաստանի Հանրապետություն» թերթի մեր գործընկերներին:

AZG NEW SHABAT 1.QXD 25/04/2019 22:54 Page 8

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

Երբ պարզ չէ, թե ով՝ ով է

Կամ՝ կլինի՞ ՀՀ-ում բաժնետիրական հեղափոխություն

Հայաստանի Հանրապետությունում մի քանի տասնյակ հազար երիտասարդ, իսկ գուցե նաեւ հարյուր հազար մարդ երազում ու ցանկանում է պետական պաշտոնյա դառնալ, ասենք որեւէ նախարարության բաժնի վարիչ կամ վարչության պետ: Այդ դիրքում նա արդեն տեղում կուսումնասիրի իր հնարավորությունները, որոշակի դիրք ու հեղինակություն կստեղծի ու տեսար նոր պաշտոնի առաջարկ ստացավ, ասենք փոխնախարարի: Առաջարկն առաջարկ, բայցեւ հարկ է սեփական հնարավորությունները գնահատել, ուժերն ու ժամանակը հաշվարկել: Եթե համարժեք թեկնածուներ չկան, մեկ հարց է, եթե կան՝ գործընթացը մասամբ բարդանում է, քանզի կարող են ամենատարբեր խնդիրներ ծագել, որոնց հաղթահարումը շատ դեպքերում առավել բարդ խնդիրների է հանգեցնում, որոնց շրջանցելն էլ արդեն գերլարումների է հասցնում, անելանելի վիճակի առջեւ կանգնեցնում: Պարզ է չէ՞, որ այդ կառույցում հենց այնպես չեն գործի վերցրել, ընթացքում ստիպել են, երբեմն ինքն է ստիպված եղել հաշվել զանազան տարօրինակությունների հետ: Ասենք չտեսնելու է տվել վարչության պետի զանցանքը, նա էլ իր հերթին ինքնարկման հարց չի դարձրել ենթակա բաժնի վարիչի գործողությունները: Հետո էլ, կյանք է, տեսար աշխատանքային ընկերների շրջապատում մեկն ավելին է ծախսում, թասիբպատվի խնդիր կա, ինքն ումից է պակաս, գումար ստեղծելու հնարավորություն ունի, առերեւույթ խանգարող էլ չկա, վարչության պետն էլ ակնարկ արել է... Արդյո՞ք կարելի է հույս տածել, որ պետական աշխատողի կամ ծառայողի, պաշտոնյայի թե ղեկավարի այս տեսակն է, որ պետք է կազմակերպի տնտեսական հեղափոխություն հռչակվածի որեւէ ասպեկտը, տա մեկնարկը: Հարցը հնչեցվում է, քանզի գործընթացի վերաբերյալ ոչինչ պարզ չէ, բացի գլխավոր պատասխանատու դիտարկվող ՀՀ շարքային քաղաքացու, որն իրական կյանքում հռչակագրերով չէ որ գործարար նպատակներ է իրականացնում:

Ներկայացվածը մեր պետական կառավարման ոլորտում տիրող ընդհանուր միջավայրի այն համառոտ նկարագիրն է, որը բարձրագույն ղեկավարությունը հիմնականում բնորոշում է որպես հակահեղափոխության տարածք, ուր իր ձեռքն առայժմ չի հասնում: Ինչ-որ առումով տարօրինակ է, քանզի փոխնախարարին ու դասավորին հասնում է, գյուղապետին ու դպրոցի տնօրենին նույնպես, մախսավորին ու պոլիկլինիկայի վարիչին առավել քան, իսկ ահա միջին օղակի պետական ծառայողին՝ ոչ: Իդեպ նրանցից ոմանք իրենց տեղն ու դերը յուրօրինակ ձեւերով արդարացնում են, ցանկալի վստահության հույս ներշնչում: Թերեւս ինչ-որ առումով այդտեղ ծնվեց 50 հազար նոր աշխատատեղերի մասին հաղորդումը: Նախարարությունների, այլ պետհատուցությունների բաժիններում ամենայն բծախնդրությամբ մոտեցան իրենց անմիջական պարտականություններին, հաս հաս հաշվեցին ու հաշվառեցին յուրաքանչյուր աշխատատեղը, դրանք ամփոփեցին փոխնախարարներն ու նախարարները եւ հպարտորեն դրեցին գործադիրի ղեկավարի աշխատասեղանին: Շատ հնարավոր է, որ դրանցում լինեն, ասենք ուղեւորատար տրանսպորտում նոր աշխատատեղերի մասին տվյալներ: Ոչ վարորդների, այլ ավտոմեքենաների ներքին ու արտաքին սանիտարական տեսքը պատշաճ պահելու կոչվածների, որոնց թիվը կարող է մի քանի տասնյակի հասնել: Զգում եք չէ՞, ինչ է սպասվում. հանկարծ ու ՀՀ վարչապետը Ռանչպարի ու մախսական օրինակով անակնկալ այց ձեռնարկի ավտոբուսա-տրոլեյբուսային որեւէ փոխադրամիջոց, որը վերջին անգամ մաքուր տեսք է ունեցել մի քանի տասնամյակ առաջ: Ասում եք կխղճա՞ քաղաքապետին. չեմ կարծում: Այնպես որ եթե իրոք ավտոբուսներն ու տրոլեյբուսները մաքրելու կոչված աշխատակիցներ կան, ինչ-ինչ ծախսեր են իրականացվում, ինչո՞ւ են դրանց տեսքերն այսչափ վանող, կեղտաշաղ, եթե չասենք զզվելի:

Շաբաթներ առաջ քաղաքապետարանի զեյթունաբնակ մի պաշտոնյայի, որը մշտապես մասնակցում է յուրաքանչյուր երկուշաբթի ընթացող խորհրդակցություններին, խնդրանքի տեսքով առաջարկեցի բարձրացնել կանգառներում տեղադրված չվերթերի մասին հուշող վահանակներն ըստ պատկանելության ծառայեցնելու հարցը: Խոսքն այն մասին էր, որ ուղեւորատարանսպորտի ուղերթերի մասին հուշող ցուցանակների տեղեկատվությունը գրեթե ամբողջությամբ ծածկված է այլեւայլ հայտարարություններով, գովազդերով, կուսակցությունների ու հասարակական կազմակերպությունների կոչերով: Դրանց հեղինակները հայտնի են, գիտեն որ կարգ են խախտել, որոնց դիմաց պատիժներ կան սահմանված, այնպես որ հարցի լուծումը բարդ չէ: Գիտե՞ք ինչ պատասխանեց պաշտոնյան. քաղաքապետարանը տրանսպորտային բարեփոխումներ է նախատեսել, այնպես որ անհանգստանալու կարիք չկա, դրանց շրջանակում խնդիրը կլուծվի: Մեր համաքաղաքացիներն անշուշտ տեղյակ են քաղաքապետի այն հայտարարությունից, որ հիշյալ գործընթացը կսկսվի 2-4 տարիների ընթացքում: Այնպես որ խնդիրն այսօր է պետք լուծել, անգամ մի քանի տարի անց այն վերանայելու պարագայում: Եթե ղեկավարել-պաշտոնավարելն այդքան դյուրին գործ լիներ, մենք վաղուց երազային Երեւանում ու երկրում կապրեինք, որը տարօրինակորեն թե ցավալիորեն չունենք:

Ինչո՞ւ. այս առումով հանրությունը որոշակի ակնկալիքներ է ունեցել իր բոլոր տարիների ղեկավարներից: Ասենք մեզանում հաճախ են հնչում հայաստանյան երբեմնի տնտեսությունն անվերադարձ քանդել-կործանելու ահազանգերը, մեղավորների փնտրտուքը, պատասխանատվության կանչելու հարցը: Տողերիս հեղինակը նման դեպքերում բերում է Երեւանի էլեկտրալամպերի ամբողջապես կանգուն գործարանի օրինակը: Էլեկտրական լամպն ինքնին բարդ սարք չէ, մեծ ծավալների ծախս չի պահանջում, արտադրանքը հարյուր հազարներով պահանջարկ ունի, այստեղ աշխատած շարքային մասնագետներից մինչեւ արտադրության կազմակերպիչներից շատերը ողջ-առողջ են: Ուրեմն ինչը կամ ովքեր են խոչընդոտում նման մի հզորությունը աշխատեցնելուն, որը հսկայական խնդիրներ կլուծի, մարդկանց աշխատանք կտա, երկրին էլ ֆինանսական միջոցներ: Արդյո՞ք սա կառավարության մտահոգությունների շրջանակի խնդիր չէ, լուծում պահանջող ու պարտադրող հարց: Ինչ ձեւով-ը եւ ինչ միջոցներով-ը մասնագիտական որոշելիք է, դրա բացակայությունը՝ այդ մտքի պակասի ապացույց: Նկատենք, որ տարիներ շարունակ յուրաքանչյուր նախարարափոխությունից հետո հնչում են կադրային ջարդ չիրականացնելու մասին հայտարարություններ, այն հիմնավորումներով, որ դրանցում առկա են որակյալ մասնագետներ ու կադրեր: Պակաս ոգեւորող չեն հայաստանցիների նախաձեռնելու եւ գործելու մասին հավաստիացումները, որոնք գործնականում հաստատվելու կարիք ունեն:

Պարզ մի հարց դիտարկենք: Իշխանության եկած կուսակցության հիմնական քարոզամիջոցներից մեկը 1+1+1= հաղթանակի կոչն էր, որը քաղաքական առումով իրեն արդարացրեց: Հետագա քայլը տնտեսական հեղափոխությունն է, ուր հիշյալ մոտեցումն առավել կիրառելի է: Խոսքը համաշխարհային տնտեսվարումում օգտագործվող բաժնետիրական ընկերությունների կազմավորմանն է ուղղված: Արդյո՞ք նպատակահարմար չէ իշխանության որեւէ կառույցում դիտարկել հենց թեկուզ նշված էլեկտրալամպերի գործարանի բազայի վրա բաժնետիրական ընկերություն հիմնելու խնդիրը: Առաջնահերթն այստեղ վստահության հարցն է, որն իշխանության ներկայացուցիչները նախորդ դեկտեմբերին զգալի պաշարով ստացել են: Մնում է իրենց կազմավորած կառավարության գործիմացությունն ու կազմակերպական հստակ քայլերը, անշուշտ կարեւորելով ապագա բաժնետերերի մոտ հուսալի միջավայրի ձեւավորումը: Որ մեր մարդիկ 1+1+1 մոտեցումով կանդամագրվեն համանման բաժնետիրական ընկերությունների, կարող եմ հաստատել ՀՀ քաղաքացուս շրջապատի, այդ թվում կենսաթոշակառուների պատրաստակամությամբ: 10 հազար դրամը նրանցից շատերի համար գուցեեւ փոքր գումար չէ, սակայն նրանք պատրաստ են ներդրումներ կատարել ի նպաստ տնտեսական հեղափոխության, հույս ունենալով, որ լավագույնս ու լրջագույնս հաշվարկված ծրագրի արդյունքում դրանք առաջիկայում շահաբաժին կապահովեն, իրենց հույսերն ու սպասումները կարդարացնեն:

Այսօրինակ գործընթացներից թերեւս միակ անվստահությունն առնչվում է թե ո՛վ կամ շահագրգիռ ո՛ր կառույցն է նախաձեռնելու եւ իրականացնելու ՀՀ-ում բաժնետիրական համակարգի հաստատումը: Մեզանում հայերիս տնտեսություն վարելու գերունակությունից մինչեւ տնտեսագիտության ոլորտում նվաճումների մասին հայտարարությունների պակաս չկա, որը գործնականում նշմարել կամ տեսնել չի հաջողվում: Ապացույցը հենց օրերս ՀՀ կառավարության նիստում քննարկված «խելացի անասնագոմեր» ծրագրի ընթացքում ՀՀ գյուղնախարարի պաշտոնակատարի այն հայտարարությունն էր, որ գործընթացը նախաձեռնել է CARD կազմակերպությունը: Այս հարավման տակ գործում է ԱՄՆ-ի գյուղատնտեսության աջակցությամբ ստեղծված «Ագրոբիզնեսի եւ գյուղի զարգացման կենտրոն»-ը, ԱԳԶԿ-ն, որը ՀՀ-ում հաստատվել է 2005 թվականին, թե ինչ արդյունավետությամբ, գնահատեք ինքներդ: Օրերս հեռարձակված մի հեռուստահաղորդման ընթացքում ԱԳԶԿ-ի երեւանյան գրասենյակի պատասխանատուն ներկայացվեց որպես Քարդ ընկերության հիմնադիր, որպիսի շփոթի ստեղծումը պարզապես տարօրինակ է:

Կա նաեւ երկրորդ օրինակը, երբ Երեւանի քաղաքապետարանը մայրաքաղաքի տրանսպորտային համակարգի բարեփոխման ծրագրի մշակումը վստահեց անգլիական մի ընկերության, վճարելով 800 հազար դոլար: Այնպես որ եթե ՀՀ ֆինանսա-տնտեսվարական համակարգն իզորու չէ լրջագույնս հիմնավորված եւ վստահություն ներշնչող բաժնետիրական ընկերություններ հիմնելու ծրագրեր մշակել, բոլորովին անպատվաբեր չէ այլոց դիմել, ինչպես այլք են օգտվում մեր տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ծառայություններից:

Միանշանակ պետք չէ յուրօրինակ պահվածք դրսեւորել եւ այնպիսի տեսք ընդունել, թե մեզանում առկա խնդիրները չեն լուծվում ծրագրերի պակասի պատճառով: Նախաձեռնությունների պակասը իշխանության հոգսն է, որը փորձ է արվում բարդել շարքային քաղաքացուց սկսած մինչեւ համաշխարհության ղեկավարի ու համայնքապետի վրա: Մի առիթով արդեն գրել եմ, որ հիմնականում արտերկրների հարազատներից ստացվող ֆինանսական միջոցների շնորհիվ հայաստանաբնակների մի որոշակի հատված միայն հարաբերականորեն կարելի է աղքատ համարել, քանզի իրական աղքատ է 1 բնակչի հաշվով բյուջետային հազիվ 1000 դոլար ունեցող ՀՀ կառավարությունը, երբ այլոց մոտ սույն թիվը 10-50 հազար դոլար է: Այնպես որ մեզանում անգամ 40-50 հազար դրամ ստացող կենսաթոշակառուներն են պատրաստ վստահություն ներշնչող բաժնետիրական ընկերությունների պարագայում իրենց ամենամսյա ծախսերից մի 10 հազարական դրամ էլ հատկացնել նշված նպատակին: Տնտեսագիտական միտքը, որքանով որ այն կա, նման գործընթացը ֆինանսների գեներացիա է որակում, ասել է թե՝ երկրում շրջանառելու միջոց: Այնպես որ ասվածն ընդամենը տնտեսական հեղափոխություն իրականացնելու բազմաթիվ քայլերից մեկն է, որով է պայմանավորված խոսքից կոնկրետ քայլ կատարելու գործընթացը:

Լիահույս գտնվենք եւ ակնկալենք այս օրերին ՀՀ կառավարության նախաձեռնած «ՀՀ ներդրումային հետաքրքրությունների ֆոնդ» հերթական կառույցի արձագանքը: Ինչ մնում է շահագրգիռ հետաքրքրվածներին, թիվ 1 թեկնածուս պատրաստ է...

22.04.2019 թ. Երեւան

AZG NEW SHABAT 1.QXD 25/04/2019 22:54 Page 9

Ունե՞նք արդյոք բավարար ներուժ տնտեսական հեղափոխության համար

ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ

Քաղաքական վերլուծաբան

Թավշյա հեղափոխությունից մեկ տարի անց մենք մեզ հարց ենք տալիս, թե որքանո՞վ են իրականացել մեր ցանկություններն ու սպասելիքը, որքա՞ն են առաջացել ավելի արդար ու բարեկեցիկ հասարակություն ունենալու մեր ձգտումները: Ոմանք ասում են, որ մեկ տարին լիուլի բավական պետք է լիներ հայտարարություններից գործողությունների անցնելու համար եւ մենք պետք է տեսնենք այն նոր հասարակական կյանքի ու տնտեսական հարաբերությունների բողբոջները, որոնք կտրամադրեին սպասելու մինչեւ դրանք հասուն ծառ ու ծաղիկ դառնան: Մյուսները պնդում են, որ մեկ տարին բոլորովին էլ բավարար չէ լուրջ գործնական քաղաքական քայլերի համար եւ պետք է հնարավորություն տալ հեղափոխական նպատակներ հռչակած իշխանությանը հանգիստ ու հետեւականորեն անելու իր գործը: Ինչեւէ, այն, որ երկրում իրավիճակ է փոխվել, սկզբունքորեն հասկանալի է, բայց աղոտ նշմարելի, եթե համեմատում ես անելիքի շատ ավելի ծանր բեռի հետ: Այս վերլուծականի նպատակը լոկ հարցադրումներ ձեւակերպելն է, առանց որոնց պատասխանելու մեր հանրային ու տնտեսական հարաբերություններում մենք շատ առաջ գնալ դժվար թե կարողանանք:

Սպասումներ հասարակական-քաղաքական դաշտից

Վերջին խորհրդարանական ընտրություններից հետո էր, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հռչակեց տնտեսական հեղափոխությանը տանող 15 կետերը: Սպասելիքն այնքան մեծ էր, որ դրանց առնչությամբ առանձնապես քննարկումներ չծավալվեցին եւ այդպես էլ պարզ չդարձավ, Հայաստանում վճռական դերակատարություն ունեցող հասարակական-քաղաքական եւ տնտեսական վերնախավերը ունե՞ն արդյոք կոնսենսուս տնտեսական հեղափոխության եւ դրա իրականացման հարցում: Անցած մեկ տարում պարզվեց, որ մեր հասարակության մեջ չկա լուրջ ընկալում այս հարցում եւ չի էլ նշմարվում, թե մեր վերնախավերը ինչպե՞ս են պատկերացնում առաջնորդել իշխանական եւ ընդդիմադիր ուժերին տնտեսական բարգավաճման ճանապարհով: Կարծում եմ մի ամգամ եւս ապացուցվեց այն ճշմարտությունը, որ արտասահմաններից հուշում էին մեզ կիսաձայն: Ժողովրդավարությունը կարեւոր արժեք է, բայց ոչ ինքնանպատակ: Ժողովրդավարության հաստատումը ուղղակիորեն չի հանգեցնում տնտեսական զարգացման եւ բարգավաճման: Ժողովրդավարական բարեփոխումները կարեւոր են ավելի արդար կառավարում, ավելի արդար հասարակական-քաղաքական հարաբերություններ ունենալու, ավելի ներդաշնակ ու համերաշխ հասարակություն ունենալու համար: Այս ասպարեզում ժողովուրդը սպասում է հեսագա հեսեւորդական քայլերի, եւ իշխանությունները ակնհայտորեն իրավունք ունեն հայտարարելու, որ գնում են այս ճանապարհով, արձանագրել են առաջին հաջողությունները եւ կարող են իրենց հաշվին գրանցել դեռ էլի նոր հաջողություններ: Իշխանությունը ընդդիմություն այսօրվա բանավեճը քաղաքական ապագայի հարցերում ընթանում է հասարակության աչքի առաջ, բավականաչափ տրամադրող ու թափանցիկ մթնոլորտում, եւ այստեղ առանձնապես մեծ հակասություններ ու անհասկացողություններ չկան:

Սակայն այն հարցում, թե ինչպիսի՞ն է լինելու ապագա Հայաստանի տնտեսական պատկերը, լուրջ բանավեճ մեզանում դեռ չի էլ սկսվել: Վարչապետ Փաշինյանը հայտարարել է, որ ինքը Հայաստանի տնտեսության թռիչքը կապում է երեք ուղղությունների՝ բարձր տեխնոլոգիաների, նոր սերնդի արդյունաբերության եւ զբոսաշրջության հետ: Մի քանի օր առաջ նա տնտեսագետներից փորձում էր իմանալ, թե ի՞նչ կոնկրետ առաջարկություններ կան, որոնք ուղղված են տնտեսական հարաբերությունների առողջացմանն ու տնտեսության զարգացմանը: Սակայն մի անգամ էլ պարզ դարձավ, որ հայ տնտեսագետների բազմահազարանոց բանակի ճնշող մեծամասնությունը լոկ մեկնաբաններ են եւ վերաշարադրողներ, եւ որ շատ սակավ են տնտեսագետներ, ովքեր կարող են իրենց գիտելիքով, իրենց ճշգրիտ կանխատեսումներով, իրենց հուսադրող վերլուծություններով նպաստել տնտեսական հեղափոխության առաջնահերթությունների ձեւակերպմանը: Հանուն արդարության նշենք, որ մերօրյա Հայաստանում եզակի տնտեսագետներ են իվիճակի անելու լուրջ մշակումներ հանձնարարված արդիական թեմաներով, բայց նույնիսկ նրանց ներուժը բոլորովին պահանջարկված չէ:

Սրա մասին մենք դեռ էլի կխոսենք վերլուծականի վերջում, իսկ հիմա արդիական հարցադրումներ, որոնք ծագում են տնտեսական զարգացման ուղիների մասին դատողությունների ընթացքում: Արդյոք իրեն չի՞ սպառել տարեային շուկայական հարաբերությունների վրա, լիբերալ տնտեսության հիմունքներով մի կերպ կառուցված Հայաստանի տնտեսակարգը եւ կարելի՞ է արդյոք արձանագրել նոր էական հաջողություններ տնտեսական զարգացման մեջ, ղեկավարելով այդ տնտեսակարգի ռեժիմով: Արդյոք չի՞ սպառել իրեն հայ օլիգարխիայի պոզիտիվ դերակատարությունը մեր ազգային տնտեսության կառուցման մեջ: Արժե՞ արդյոք սպասել հայկական խոշոր կապիտալից հայրենանվեր նախաձեռնություններ Հայաստանը աղքատ երկրների շարքից դուրս բերելու եւ զարգացող երկրների շարքը մտցնելու ճանապարհին: Ինչպե՞ս բանակցել հայկական խոշոր կապիտալի հետ, որպեսզի նա տարեկան մեկ միլիարդ դոլար չփախցնի Հայաստանից դեպի արեւմտյան բանկերն ու օֆշորները: Ո՞րն է ավելի ճիշտ. Հայաստանի առաջին երկու հարյուրամյակի պայքարի քառուղիներից: Ի՞նչ ազդակ պետք է ստանա օրինակ գիտությունը կառավարող պետական լիազոր մարմինը, որպեսզի մեր տնտեսական, հասարակական, միջազգային քաղաքական իրողությունն ուսումնասիրող մասնագետները տրամադրվեն աշխատելու հանուն արդիական ինչողություն ունեցող թեմաների: Ինչո՞ւ են լռում գիտության կազմակերպիչները, ինչի՞ են նրանք պասում: Արդյոք իրեն-իրեն այդ թեմաները բնական օրինաչափությունների օրենքով կարո՞ղ են ճանապարհ հարթել ուսումնասիրվելու համար: Թե՞ պետք է ապահովել պետության կազմակերպող ու կարգավորող ներգործությունը այս ասպարեզների վրա: Ի՞նչ են ասում մեր մասնագետները եվրասիական ինտեգրման, եվրոպական ասոցացման, չինական եւ մյուս ահռելի ծրագրերում մեր ավելի կառուցողական ու ավելի շահագրգիռ մասնակցության մասին: Ժամանակը չէ՞ արդյոք, որ պետությունը խթանի ոչ միայն հետազոտություններն այս ուղղություններում կառավարության պատվերով եւ դիմի միջազգային (անդրազգային) կառույցներին ստեղծելու միջազգային հզոր ու ներգործուն հարթակներ փորձագիտական ու գիտական ներուժը կառուցողական առաջարկների վերածելու համար: Մտածե՞լ ենք արդյոք մենք այն մասին, թե յուրաքանչյուր հեղափոխություն, այդ թվում՝ տնտեսական, կարող է հաջողություն ունենալ միայն այն դեպքում, երբ ունի բավարար սոցիալական հենարան: Կուզենա՞ արդյոք այսօրվա իշխանությունը ընդլայնել իր սոցիալական հենարանը: Կուզենա՞ արդյոք այսօրվա իշխանությունը ձեռք բերել նոր դաշնակիցներ հասարակության մեջ արդեն ձեւավորված ուժերի արդեն կայացած մարդկանց շրջանում: Կարծում եմ, որ կուզենա: Բայց գտնվե՞լ է արդյոք փորձագիտական ու գիտական ներուժը բացահայտելու, այն հասարակության կարիքներին ծառայեցնելու համար: Կարծում եմ, որ՝ ոչ: Չորս ամիս առաջ մենք քննարկում նախաձեռնեցինք այն հարցով, թե ժամանակը չէ՞ արդյոք, օրինակ, Եվրասիական տնտեսական միությունում ունենալու, պայմանականորեն անվանված, Եվրասիական կրթական հումանիտար միջազգային հիմնադրամ, որն ամբողջովին միտված կլիներ ԵԱՏՄ շրջանակներում երկկողմ եւ բազմակողմ գիտահետազոտական ծրագրերի իրականացմանը: Նրան մասնակցող պետությունների հասկացումների միջոցով կարելի էր պատկառելի թվով գիտական ու փորձագիտական կոլեկտիվներ ուղղորդել դեպի տնտեսական, սոցիոլոգիական, քաղաքագիտական, հումանիտար, մշակութային եւ այլ ճյուղերում համատեղ գործունեություն: Հայաստանն այս տարի նախագահում է ԵԱՏՄ-ում եւ կարող էր այս կարգի նախաձեռնություններով ամրապնդել իր իմիջը որպես կառուցողական գործընկեր:

Կառավարելով ֆինանսական հոսքերը

Յուրաքանչյուր իշխանության ամենաէական գործառույթը ֆինանսական հոսքերը կառավարելն է, դրանք իր նպատակներին ծառայեցնելը: Մենք պետք է դեռ գնահատական տանք, թե ինչպես են ձեւավորվել այդ հոսքերն առաջներում եւ ինչ նպատակների են ծառայել: Բայց այսօր պակաս կարեւոր չէ մի հաստ կարմիր գիծ քաշելը անցյալի իրողությունների տակ, նպատակ ունենալով հաստատել այնպիսի տնտեսական հարաբերություններ, որոնք, լինելով թափանցիկ, լինելով հասկանալի խաղի կանոնների դաշտում, կարող են տրամադրել ամենատարբեր մարդկանց իրենց հույսերը կապելու Հայաստանի վաղվա օրվա հետ: Ամենակարեւոր հարցերից մեկն այն է, թե ինչպիսի՞ տրամադրություն են ունենալու մոտակա տարիներին այն մարդիկ, որոնք անկեղծորեն հավատացել են, որ կարելի է ապրել, ստեղծագործել ու արարել ավելի արդար հասարակական հարաբերությունների պայմաններում:

Այս տողերը գրելիս ես շատ լավ հասկանում եմ, որ Հայաստանը շատ փոքր երկիր է գլոբալ տնտեսական հորձանուտում սեփական խաղի կանոններ ունենալու համար: Բայց ես խորապես համոզված եմ, որ մեր անկախ պետականությունը առողջ եւ կենսունակ պահելու, մեր ինքնիշխանությունը եւ հավասական «ես»-ը ամրապնդելու եւ առաջ մղելու ճանապարհին պետք է գտնվեն լուծումներ: Մենք անընդհատ դժգոհում ենք այն բանից, որ փող չկա: Մյուս կողմից, մեր պետության ղեկավարն անընդհատ կրկնում է, որ կա փող, բայց չկան ծրագրեր: Իրողությունն այն է, որ աշխարհում հայկական կապիտալների գերակշիռ մասը չի գալիս Հայաստան: Եվ սրա պատճառները պետք է կարողանալ խոստովանել բարձրաձայն: Եթե չլուծվի Հայաստանի տնտեսության զարգացման համար լավագույն խթաններ գտնելու հարցը, ժողովրդին կարող են հեստաբրբական չլինել ժողովրդավարության եւ ավելի արդար կառավարման մյուս ուղղություններում ձեռք բերված անցումային հաջողությունները:

Վերջին միտքը, որ կուզեինք այս վերլուծականում ընդգծել այն է, որ այսօրվա իշխանությունը տեւական հաջողություն ունենալու համար պետք է ոչ միայն տակտիկական մարտեր վարի իր գաղափարական հակառակորդների հետ գաղափարների դաշտում, այլեւ իր մեջ ուժ գտնի մոբիլիզացնելու հասարակության առողջ ուժերը եւ դրանք ծառայեցնի համընդհանուր շահին, պայմանականորեն անվանելով այն «հայկական տնտեսական հեղափոխություն»:

AZG NEW SHABAT 1.QXD 25/04/2019 22:54 Page 10

ՆԱՏՕ-ի հետ խզված հարաբերություններ

«Դաշինքի խնդիրը ոչ թե հակառակորդի հետ պայմանավորվելն է, այլ սեփական կամքը թելադրելը»

Նախորդ շաբաթ Ռուսաստանի ԱԳՆ-ում հայտարարել էին ՆԱՏՕ-ի հետ քաղաքացիական եւ ռազմական համագործակցությունն ամբողջովին դադարեցնելու մասին: Նման հայտարարություն էր արել ՌԴ փոխարտգործնախարար **Ալեքսանդր Գրուշկոն** ՌԻԱ գործակալությանը տված հարցազրույցում:

Դիվանագետն ասել էր, որ ժամանակին ՆԱՏՕ-ն ստեղծվեց Արեւմուտքի երկրները ԽՍՀՄ-ի հարձակումից պաշտպանելու նպատակով: Եվ ներկայումս ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար **Յենս Ստոլտենբերգը** հայտարարում է, որ ՆԱՏՕ-ն ժողովրդավարության եւ ազատական կարգի պաշտպանության գրեթե միակ կառույցն է: Բայց, ըստ երեւույթին, դաշինքի գլխավոր իմաստը առավել ընդգրկուն ձեւով արտահայտել է ՆԱՏՕ-ի առաջին գլխավոր քարտուղար լորդ **Իսմեյը**, այն է՝ պահել ամերիկացիներին Եվրոպայում, ռուսներին Եվրոպայից դուրս, իսկ Գերմանիան՝ Եվրոպայի տակ: Գրուշկոյի խոսքերով՝ այն տպավորությունն է ստեղծվում, թե վերոհիշյալ պնդման երրորդ մասը տակավին այժմեական է:

Գրուշկոն նշել է, որ դաշինքում առաջվա պես գլխավոր դերակատարը ԱՄՆ-ն է, եւ նայած թե ինչպես են փոփոխվում ԱՄՆ-ի ու Ռուսաստանի փոխհարաբերությունները, ըստ այդմ էլ ձեւավորվում են ՆԱՏՕ-Ռուսաստան հարաբերությունները: «ՆԱՏՕ-ն ինքն է հրաժարվել Ռուսաստանի նկատմամբ դրական օրակարգից: Այն գոյություն չունի, եւ ՆԱՏՕ-ում չգիտեն, թե ինչպես կարելի է դուրս գալ այդ փակուղուց: ՆԱՏՕ-ն չափազանց հեռու է գնացել Ռուսաստանի հետ առճակատման խորացման մեջ, եւ առայժմ չի երեւում, թե երբ եւ որտեղ ողջախոհությունը կգերակշռի: Այսօր ՆԱՏՕ-Ռուսաստան փոխհարաբերությունների արտառոց բնույթը ամենից լավ է հիշեցնում «սովորական» իրավիճակը, որի (սառը պատերազմի) պայմաններում ստեղծվեց ՆԱՏՕ-ն», հայտարարել է Գրուշկոն:

Նրա խոսքերով, Ռուսաստանի եւ ՆԱՏՕ-ի փոխհարաբերություններում ներկայումս գոյություն ունեցող ճգնաժամը ամենատեւականն է պատմության մեջ: Ըստ որում, ՆԱՏՕ-ի քաղաքական խորհրդի շրջանակներում երկխոսությունը շարունակվում է, թեեւ 2019 թ. հունվարին տեղի ունեցած խորհրդի վերջին նիստը որեւէ գործնական արդյունքի չհանգեցրեց: Փոխարտգործնախարարի խոսքերով, Ռուսաստանը բացասաբար է վերաբերվում Սեւ ծովում ՆԱՏՕ-ի ռազմական ակտիվության ընդլայնմանը: Վերջինս չի նպաստում տարածաշրջանի անվտանգությանը, այլ միայն աղակայունացնում է այն:

Միեւնույն ժամանակ, Գրուշկոն ընգծել է, որ ՆԱՏՕ-ի հետ ռազմական հակամարտություն չի սպասվում, քանի որ դա աղետ կլիներ ամբողջ մարդկության համար:

Մարտի վերջերին Գրուշկոն տեղեկացրել էր Ռուսաստանի սահմանների մոտ ՆԱՏՕ-ի ակտիվացման մասին: «Մտացածին ռուսական սպառնալիքի պատրվակով ՆԱՏՕ-ն ուժեղացնում է իր ռազմական ներկայությունը Արեւելյան Եվրոպայում, ռազմականացնում Սեւծովյան տարածաշրջանը, ակտիվացնում հետախուզական գործունեությունը ՌԴ սահմանների երկայնքով: Բացի դրանից, դաշինքի քաղաքականությունն ազդում է Եվրասլանության տարածշրջանի կայունության վրա», ասել է Գրուշկոն ՌԻԱ գործակալության թղթակցին:

Թրամփը վտանգավոր խաղ է սկսել Իրանի դեմ

Նավթի գնման արգելք մայիսի 2-ից

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի վարչակազմում որոշել են չերկարաձգել պատժամիջոցների հարցում Իրանից նավթ գնող որոշ երկրների համար արված բացառությունը, որպեսզի Իրանին զրկեն եկամուտների կարեւոր աղբյուրից: Atlantic Council վերլուծական կենտրոնի փորձագետների կարծիքով, դա կարող է հանգեցնել նավթի գների բարձրացմանը եւ իրանական նավթ գնող երկրների համատարած դժգոհությանը:

«Իրանի աղագա» նախաձեռնողական խորհրդի տնօրեն **Բարբարա Սլավինը** նշում է, որ Թրամփի որոշումը վնասում է հասարակ իրանցիների շահերին եւ անարդյունավետ է, քանի որ թույլ չի տալիս Իրանի վերադարձ բանակցությունների սեղանի մոտ:

Սպիտակ տան ապրիլի 22-ի որոշման մեջ ասվում է, որ դրա նպատակն է իրանական նավթի արտահանությունը իջեցնել զրոյի՝ վարչակարգը զրկելով եկամուտների հիմնական աղբյուրից: Թրամփի վարչակազմը ընդգծում է, որ ԱՄՆ-ի հակահրանական պատժամիջոցներից դուրս մնացած բոլոր երկրները զգալիորեն կրճատել են իրանական նավթի գները: Մասնավորապես, Իտալիան, Հունաստանը եւ Թայվանը ներմուծումը հասցրել են զրոյի:

Պատժամիջոցների բացառությունը չեղարկելու որոշումը կվնասի հատկապես Թուրքիային, Հնդկաստանին ու Չինաստանին, կարծում է Բրենթ Սկոուքրոֆթի անվան միջազգային անվտանգության կենտրոնի ավագ գիտաշխատող **Սուլտանը**: Ըստ նրա, նկատի ունենալով F-35 ռազմօդանավերի համատեղ մշակմանը մասնակցելուց Թուրքիայի հրաժարումը, իրանական նավթի գնումների արգելքը դժվար թե Անկարային սթիպի հարմարվել Վաշինգտոնին:

Իրանական նավթի գնումների արգելքը գործելու է մայիսի 2-ից, այնպես որ այդ նավթից չհրաժարվող ամեն մի երկիր կբախվի ԱՄՆ-ի պատժամիջոցներին:

Բեռնարգելքի պատճառով նավթի գները կտրուկ բարձրացել են: Նավթի շուկաների արձագանքը ցույց է տալիս, որ դրանք այնքան էլ պատրաստ չէին բեռնարգելքին: Վերջին տվյալները վկայում են, որ առաջարկը, ըստ երեւույթին, անբավարար է դարձել, ինչը դժվար թե հնարավոր լինի լրացնել մոտ ապագայում, գտնում է Սուլտանը:

ԱՄՆ պետքարտուղար **Մայք Պոմպեոն** հայտարարել է, որ Սաուդյան Արաբիան եւ ԱՄԷ-ն պարտավորվել են փոխհատուցել Իրանի նավթային մատակարարումների կրճատումը: Սակայն սաուդցիների նավթի նախարարի հայտարարությունը ցույց է տալիս, որ նրանց երկիրը չի շտապի օգտվել նավթի բարձր գներից նախքան սեփական մատակարարումների ընդլայնումը:

BBC-ն տեղեկացնում է, որ Իրանը որեւէ ձեւով չի խախտել մի քանի տարի առաջ իր միջուկային ծրագրի շուրջ կնքված բազմակողմ համաձայնագիրը: Ատոմային էներգիայի միջազգային կազմակերպությունը՝ ՄԱԳԱՏԷ-ն, նշում է, որ Իրանում գործում է սուլգումների խստագույն ռեժիմ, կազմակերպության տեսուչները 2016 թվականից ի վեր 11 անգամ համոզվել են, որ Իրանը կատարում է իր ստանձնած պարտավորությունները: Սակայն ԱՄՆ-ը իրանցիներին համալիր պահանջների փաթեթ է ներկայացնում: ԱՄՆ պետքարտուղար Մայք Պոմպեոն Իրանից պահանջում է Սիրիայում դադարեցնել Բաշար Ասադին ցուցաբերվող աջակցությունը, չօգնել եմենցի ապստամբներին եւ ուրիշ երկրներում գործող շիա ռազմականացված կազմավորումներին, «հրաժարվել Իսրայելի վրա ճնշում գործադրելուց եւ նրա գոյության իրավունքը մերժելուց»: Այսինքն, Թեհրանից պահանջում են լիովին վերանայել իր քաղաքականությունը Մերձավոր Արեւելքում՝ չափազանց ծանր իրավիճակ ստեղծելով իրանական դիվանագիտության համար:

Այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե ամերիկացիները փորձում են կոչտ պատժամիջոցներով Իրանը տանել դեպի «արաբական գարուն»: Թուրքիան եւ Չինաստանը արդեն դատապարտել են ԱՄՆ-ի գործողությունները, բայց հայտնի չէ, թե ինչպես կվարվեն ապագայում: Հնդկաստանն առայժմ լռում է: Չնայած բեռնարգելքին, այդ երկիրը շարունակում է իրանական նավթ գնել՝ վճարելով հնդկական ռուփիով: Իսկ Սաուդյան Արաբիան եւ ԱՄԷ-ն ավանդաբար ամերիկամետ դիրք են բռնել:

Իր հերթին, Իրանը սպառնում է շրջափակել ռազմավարական կարեւորություն ունեցող Օրմուզի նեղուցը, որտեղով իրականացվում է նավթի համաշխարհային փոխադրումների 20 տոկոսը: Դա տեղի կունենա, եթե իրանցիներին թույլ չտան արտահանել սեփական նավթը: Նման սպառնալիքներով երկիրը հանդես է գալիս ոչ առաջին անգամ:

Ընդամենը մի քանի տասնյակ խարսխային ականների տեղադրումը նեղուցն անանցանելի կդարձնի արաբական նավթատար նավերի համար: Սակայն Օրմուզի նեղուցի ականապատումը կարող է հարուցել միջազգային ընկերակցության կոչտ հակազդեցությունը: Ականի վրա որեւէ նավթատար նավի պայթյունը կարող է բնապահպանական անդառնալի հետեւանքներ ունենալ:

Գերմանիայի արտաքին քաղաքականության ընկերության աշխատակից **Հենինգ Ռիկեն** կարծում է, որ ԱՄՆ-ը Իսրայելի միջոցով կփորձի խարխլել ռուս-իրանական դաշինքը՝ օգտվելով տարածաշրջանում նրանց շահերի բախման հանգամանքից: Գերմանացի փորձագետը չի բացառում նաեւ հակառակը. «Թրամփը ճնշում է գործադրում Թեհրանի վրա, որի հետեւանքով աճում է Իրանի կախվածությունը Ռուսաստանից»:

ԱՐԵՎԻԿ ՔԵՇԻՇՅԱՆ

Երեւան քաղաքի օդերեւութաբանության համառոտ պատմությունը

175 ամյա տարեգրություն



Հետաքրքրական է, որ առաջին անգամ Երեւանում օդերեւութաբանական դիտարկումներ կազմակերպել է Խաչատուր Աբովյանը: Դեռեւս 1844թ. Դորպատի համալսարանի երկրաբանության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Հերման Աբիխը Հայաստանում կատարած շրջագայություններին ժամանակ ծանոթացել է Խ. Աբովյանի հետ եւ նրան մասնակից դարձրել իր գիտարշավին: Հենց նրա խնդրանքով էլ Երեւանի գավառական ուսումնարանում կազմակերպվել են օդերեւութաբանական դիտարկումներ: Երեւան քաղաքում՝ 1844-45թթ իրականացվել են արտաքին օդի ջերմաստիճանի եւ ճնշման, քամու արագության, ուղղության, տեղումների եւ այլ պարամետրերի դիտարկումներ: Նմանատիպ անկանոն դիտարկումներ իրականացվել են նաեւ 1873-75թթ.:

Հայաստանի տարածքում օդերեւութաբանական առաջին չափումները կազմակերպվել են 1843 թվին Ալեքսանդրապոլում (ներկայումս՝ Գյումրի): Միայն 1885 թվին է Երեւանի կենտրոնում կազմակերպվել առաջին օդերեւութաբանական կայանը՝ հիմք ընդունելով Թիֆլիսի ֆիզիկական դիտարանի (այն ժամանակ Կովկասի օդերեւութաբանական ծառայության կենտրոնը) հրամանը:1915 թվականին Երեւանի օդերեւութաբանական կայանը տեղափոխվում է ուսուցչական սեմինարիայի նոր շենքի բակը եւ գործում մինչեւ նույն տարվա դեկտեմբերը: Կայանում նոր կանոնավոր դիտարկումներ վերսկսում են իրականացնել 1929թ. մայիսից մինչեւ 1934թ. պրիլ ամիսը, երբ սեմինարիայի շենքում տեղավորվել էր գյուղատնտեսական ինստիտուտը:

1900թ. հուլիսին Զանգու գետի աջ ափին,ուր խաղողի այգիներ էին, կազմակերպվում է օդերեւութաբանական կայան: Այն աշխատում է մինչեւ 1908թ. փետրվարը:1912թ. այստեղ կրկին կազմակերպվում է կայան, որն անխափան աշխատում է մինչեւ 1935թ. դեկտեմբերը: 1928-35թթ. Երեւանի տարբեր շրջաններում օդերեւութաբանական դիտարկումներն անկանոն էին: Այս շրջանին է վերագրվում Հայաստանի օդերեւութաբանական ծառայության կազմակերպումը:

1914 թ. Հիդրոօդերեւութաբանական ցանցում շահագործվել են 24 օդերեւութաբանական կայաններ եւ 17 հիդրոլոգիական դիտակետեր

1921 թ.ի Երեւանի օդերեւութաբանական կայանում սկսել են իրականացնել ագրոօդերեւութաբանական դիտարկումներ:

1934 թ. - Երեւանի օդանավակայանում բացվել է առաջին ավիաօդերեւութաբանական կայանը:

Երեւան քաղաքի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 11.60C: Ամենացուրտ ամիսը համարվում է հունվարը (-40C), հատկապես՝ երկրորդ տասնօրյակը: Սակայն, առանձին տարիների ձմռան մյուս ամիսներին ջերմաստիճանները կարող են ավելի փոքր լինել: Օրինակ, 25%-ով փետրվար ամսվա միջին ջերմաստիճանը փոքր է հունվար ամսվա միջին ջերմաստիճանից: Ընդ որում, տարբերությունը կարող է հասնել 2(30C (1937 թ., 1967թ.): Դիտարկված տարիների ընթացքում հունվար ամսվա ամենացուրտ միջին ջերմաստիճանը նկատվել է 1964թ. (-13.40C), իսկ ամենաբարձրը՝ 50C (1966թ.): Փետրվար ամիսը տաք է հունվար ամսից 2.70C-ով: Նրա միջին ջերմաստիճանը կտրուկ բարձրանում է 6-70C-ով եւ ավելի՝ փետրվար ամսվա համեմատությամբ: Մարտ ամսվա միջին ամսական ջերմաստիճանը մոտ դրական է:

Նոյեմբեր ամսին Երեւանի միջին ջերմաստիճանը կազմում է 6.20C, իսկ ամենացածրը՝ -2.20C: Այն նկատվել է 1948թ:

1962թ. Հայաստանում գործել են 82 օդերեւութաբանական կայաններ, 46 օդերեւութաբանական եւ 163 հիդրոլոգիական դիտակետեր:

Անհրաժեշտ է նշել, որ հինգերորդ դարի պատմիչ Մովսես Խորենացին «Հայոց պատմություն» աշխատությունում նկարագրել է հայկական լեռնաշխարհի կլիման:

Կարծում եմ այս տարի կարելի է նշել այս հոբելյանը պատշաճ մակարդակով:

ՍՏԵՓԱՆ ՊԼՊԴԻԿՅԱՆ
Հայկական էներգետիկական ակադեմիայի հիմնադիր նախագահ, Տեխնիկական գիտությունների թեկնածու

AZG NEW SHABAT 1.QXD 25/04/2019 22:54 Page 11

Իրանը ԱՄՆ-ի մերձավորարեւելյան խաղի կենտրոնում

Ինչո՞ւ ԻՀՊԿ-ն հենց հիմա հայտարարվեց ահաբեկչական կազմակերպություն

ԱՐԵՎԻԿ ՔԵՇԻՇՅԱՆ

Վաշինգտոնը Իրանի Իսլամական Հեղափոխության պահապանների կորպուսը (ԻՀՊԿ) հայտարարել է արտասահմանյան ահաբեկչական կազմակերպություն: Այդ մասին Սպիտակ տանը իր ելույթում հայտնել է նախագահ **Դոնալդ Թրամփը**: Նրա խոսքերով՝ ԻՀՊԿ-ն «ակտիվորեն մասնակցում է այն ահաբեկչության ֆինանսավորմանն ու աջակցմանը, ինչը Իրանն օգտագործում է սեփական շահերի առաջմամբ եւ համաթարափակ ահաբեկչական արշավի իրականացման համար»:

Սակայն ԱՄՆ ֆինանսների նախարարությունը նախքան այդ էլ քանիցս պատժամիջոցներ էր կիրառել մի շարք ֆիզիկական եւ իրավաբանական անձանց նկատմամբ, որոնք ԱՄՆ վարչակազմի կարծիքով, կապված են ԻՀՊԿ-ի գործունեության հետ: Ինչո՞ւ հենց հիմա կատարվեց աննախադեպ քայլ, որով ահաբեկչական կազմակերպությունների ցանկի մեջ ներառվեց օտար պետության պաշտոնական մարմիններից մեկը: Ավելի վաղ, բազմաթիվ լրատվամիջոցներ Վաշինգտոնի որոշումը շաղկապել էին ապրիլի 9-ին Իսրայելում անցկացված խորհրդարանական ընտրությունների հետ: Ընտրություններից հետո իրավիճակը կարծես թե պետք է փոխվեր, բայց դա տեղի չունեցավ: Թրամփը Իրանի դեմ ուղղված վճռական գործողություններ է իրականացնում: Կովկասի եւ Մերձավոր Արեւելքի հարցերի փորձագետ **Սանիսլավ Տարասովի** կարծիքով՝ դա կապված է նոր միջուկային համաձայնագրի կնքման առնչությամբ Իրանի հետ ԱՄՆ-ի ինչ-որ գաղտնի բանակցությունների ձախողման հետ:

Ինչպես գտնում է Գերմանիայի արտաքին քաղաքականության ընկերության աշխատակից **Հեննինգ Ռիկեն**, Իրանի միջուկային ծրագրի հարցը ինքնին ԱՄՆ-ի համար երբեք կարեւոր չի եղել: Իրանի նկատմամբ նրա հավակնությունները միշտ բազմակողմ են եղել, օրինակ՝ հարեւան երկրներում շիա ռազմական խմբավորումների աջակցումից հրաժարումը, Իսրայելի գոյության իրավունքի ճանաչումը, մարդու իրավունքների խնդիրը, Սաուդյան Արաբիայի հետ հակամարտությունը, Սիրիայում եւ Իրաքում իրանցիների դերը: «Վաշինգտոնի տեսակետից, սկզբնապես Իրանի հետ համաձայնագիրը ստորագրվել էր այն նպատակով, որպեսզի ուշադրություն հրավիրվի միջուկային խնդրի վրա եւ ինչ-որ չափով զարկ տրվի Իրանի ղեկավարության հետ վարվող բանակցություններին: Բայց դրան չհաջողվեց հասնել, քանի որ ԱՄՆ-ը սկսեց «կարքանդ» անել իր պահանջների փաթեթը»: Այժմ ԱՄՆ-ը բացեիբաց հայտարարում է իրանական վարչակարգը կոտրելու եւ Իրանում, իբր, ժողովրդավարությունը վերականգնելու մտադրության մասին:

Թրամփին ակտիվորեն պաշտպանում է ազգային անվտանգության գծով նրա օգնական **Ջոն Բոլթոնը**, որի խոսքերով, «հարկավոր է Իրանի ժողովրդին օգնել վերագտնելու սեփական ազատությունը», իսկ պետքարտուղար **Մայք Պոմպեոն** իր հերթին պահանջում է Թեհրանի վրա առավելագույն ճնշում գործադրել մինչեւ որ նա հրաժարվի իր մահաբեր նկրտումներից: Բայց սրանք խոսքեր են, իսկ ի՞նչ կարելի է անել իրականում: Ամերիկյան Washington Free Beacon հարթակի տվյալներով, Անվտանգության խորհրդում արդեն քննության է առնվել Իրանի դեմ ուղղված գործողությունների ռազմավարություն, որը մշակվել է Բոլթոնի հետ սերտորեն կապված Security Studies Group վերլուծական կենտրոնի կողմից: ԱՄՆ վարչակազմում թերեւս միակ մարդը, որը այցելում է Թեհրան, շփվում իրանցի այլախոհների հետ, հենց Բոլթոնն է:

Այդ սցենարի հիմնական իմաստը հետեւյալն է՝ Իրանի վրա գործադրել քաղաքական, տնտեսական, արտաքին-ռազմական ճնշում՝ նախքան նոր վարչակարգի հաստատումը այդ երկրի իրադրությունն ապակայունացնելու նպատակով ու հարվածներ հասցնել Իրանի պետական կառույցներին (ինչպիսին է ԻՀՊԿ-ն), ինչը եւ տեղի է ունենում: Շեշտը դրվում է կրոնական եւ էթնիկական փոքրամասնությունների խաղաթղթի խաղարկման վրա, իսկ մյուս ձեռնարկումները կունենան հարակից բնույթ, ինչը Թեհրանի ուշադրությունը պետք է տարածաշրջանային խնդիրներից տեղափոխի ներքին խնդիրների վրա: Իրենք՝ ամերիկացիները, չեն պատրաստվում պատերազմել, բայց դեմ չէին լինի եւս մեկ տարածաշրջանային պատերազմի հրահրմանը, որին մասնակցելը Իրանի համար «կդառնար անխուսափելի»: Իհարկե, Թեհրանում այս ամենը տեսնում են, գնահատում իրենց սպառնացող տարածաշրջանային ու մյուս վտանգները եւ պատասխանում: Իրանի Ազգային անվտանգության բարձրագույն խորհուրդը ԱՄՆ զինված ուժերը ներառել է ահաբեկչական կազմակերպությունների սեփական ցանկում:

ԱՄՆ-ի գործողությունները Իրանում ամրապնդում են այսպես կոչված «պահպանողական ճամբարի» դիրքերը, եւ թուլացնում «ազատականներին», որոնց հետ Եվրոպայում պայմանավորվածության են հասնում: Պատահական չէ Իրանի նախագահ **Հասան Ռոհանիի** այն հայտարարությունը, թե Վաշինգտոնի գործողությունները սոսկ մեծացնում են ԻՀՊԿ-ի ժողովրդականությունը:

Իրադարձությունների ընթացքին առանձնակի տգնապով են հետեւում Իսրայելում: Օրինակ, հատուկ ծառայություններին մոտիկ կանգնած իսրայելական «Դեբկա» կայքը գտնում է, որ ԻՀՊԿ-ն կարող է Սիրիայում եւ Իրաքում վերահսկողություն հաստատել ամերիկյան հրամանատարական կետերի վրա, ինչը մի կողմից սպառնում է Թեհրան-Վաշինգտոն առճակատմամբ, կամ մյուս կողմից՝ Իրան-Իսրայել առճակատմամբ: Իրանական ԶԼՄ-ները նշում են, որ Թեհրանը մեծ ուժով եւ դաժանությամբ կիակազդի իրեն սպառնացող յուրաքանչյուր վտանգի: Իսկ առաջմ կողմերը լոկ «ազդանշաններ» են փոխանակում:

Ի դեպ, Թուրքիան պաշտոնապես դատապարտել է ԻՀՊԿ-ն ահաբեկչական կազմակերպություն ճանաչելու ԱՄՆ վարչակազմի որոշումը: Արտգործնախարարության տարածած հայտարարության մեջ նախարար **Մեւլութ Չավուշօղլուն** նշել է, որ ԱՄՆ վարչակազմի որոշումը ուղի է հարթում տարածաշրջանի իրադրության ապակայունացման համար:

Ուկրաինայի վեցերորդ նախագահ դարձավ Վլադիմիր Զելենսկին

«Ես ոչ թե ձեր հակառակորդն եմ, այլ ձեր դատավճիռը»

Ուկրաինայում ապրիլի 21-ին անցկացված նախագահական ընտրությունների երկրորդ փուլում համոզիչ առավելությամբ հաղթանակ է տարել Վլադիմիր Զելենսկին: Ընտրական տեղամասերի փակումից արդեն տասը րոպե անց նախագահ Պետրո Պորոշենկեն ընդունել է իր պարտությունը: Ընտրատեղամասերի արձանագրությունների 99 տոկոսի մշակման արդյունքների համաձայն, շոումեն եւ դերասան Զելենսկին ստացել է բոլոր քվեների 73,22%-ը, նրա օգտին քվեարկել է 13,4 մլն մարդ: Գործող նախագահ Պետրո Պորոշենկոն ստացել է 24,46 տոկոս:

Հատկանշական է, որ երկրի ընտրազանգվածի երեք քառորդը տեղամասերում քվեարկել է ոչ թե հօգուտ Զելենսկու, այլ ընդդեմ Պորոշենկոյի: Ճիշտ նույն ձեւով ընտրությունների առաջին փուլում ուկրաինացիների ավելի քան 30 տոկոսը քվեարկել էր Ուկրաինայի ընդհանուր քաղաքական համակարգի դեմ:

Ֆրանսիական Liberation թերթի գնահատմամբ, չնայած նախագահի փոփոխությանը, Մոսկվայի հետ հարաբերությունները դժվար կլինի վերանայել, քանի որ դրանք անչափ վատացել են վերջին հինգ տարիներին: Պորոշենկոն իր ընտրարշավը կառուցել էր «Ես կամ Պուտինը» կարգախոսով: Կրեմլը դրան որեւէ ձեւով չէր արձագանքել:

R.Politik վերլուծական ընկերության ղեկավար **Տատյանա Ստանովայան** նշում է, որ Ռուսաստանը պատրաստվում էր այնպիսի սցենարի, երբ Պորոշենկոն ակնհայտորեն կկեղծի ընտրությունների արդյունքները, ինչը Մոսկվային հնարավորություն կտար չընդունել ընտրությունների կասկածելի արդյունքները եւ արմատապես խզել բոլոր հարաբերությունները Ուկրաինայի հետ:

Ուկրաինացիների մեծամասնությունը Զելենսկու օգտին քվեարկեց փոփոխությունների ակնկալիքով: Ստանովայան ընդգծում է, որ Զելենսկու հանդեպ վերաբերմունքը երկակի է. առայժմ հայտնի չէ, թե նա որքանով է ինքնուրույն, որչափով կկարողանա համաձայնության հասնել Ուկրաինայի վերնախավի հետ եւ ինչ ծրագիր ունի Դոնբասի վերաբերյալ:

Ինչպես Das Erste հեռուստալիքի կայքի իր հոդվածում գրել է **Դեմիան ֆոն Օստենը**, Զելենսկու հաղթանակը պայմանավորված է ավելի շատ նրանով, որ նախագահ Պորոշենկոն չկարողացավ կատարել իր խոստումները: Այժմ Զելենսկին պետք է ջանա չկրկնել իր նախորդի սխալները, այն է՝ վերջ դնել Դոնբասի հակամարտությանը եւ երկրում տարածված կոռուպցիային: Իբրեւ ապացույց հոդվածագիրը մեջբերում է ապրիլի 19-ին Կիեւի մարզադաշտում բանավեճի ժամանակ Պորոշենկոյին Զելենսկու ասած խոսքերը. «Ես ձեր սխալների արդյունքն եմ: Ես ոչ թե ձեր հակառակորդն եմ, այլ ձեր դատավճիռը»:

2014 թ. հեղաշրջումից հետո նախագահ դարձած Պորոշենկոն խոստացել էր երկու շաբաթվա ընթացքում վերջ դնել Դոնբասի պատերազմին, այնինչ դա շարունակվում է մինչեւ օրս: Բացի դրանից, նա խոստացել էր վերջ դնել կաշառակերությանը, բայց միայն հակակոռուպցիոն բյուրոյի ստեղծումը բավարար չէ. հակակոռուպցիոն դատարանը այդպես էլ չկսեց աշխատել, չիրականացվեց դատական բարեփոխում: Այժմ Զելենսկին նույնպես համանման խոստումներ է տալիս:

Խոստումների թվում է երկրի արեւելքում պատերազմի ավարտումը: Հակամարտության Ուկրաինային ոչ ձեռնտու ավարտը մտահոգության պատճառ է Պորոշենկոյի եւ իր կողմնակիցների համար: Պորոշենկոն իր Twitter-ում այն տեսակետն է հայտնել, որ անփորձ Զելենսկու հաղթանակը ուրախացնում է Կրեմլին, որը հույս ունի Ուկրաինան վերադարձնել իր ազդեցության ոլորտ:

Սակայն, ինչպես նշում է հոդվածագիրը, Զելենսկու նպատակն ուրիշ է. նա ուզում է շարունակել Ուկրաինայի ճանապարհը դեպի Եվրոմիություն, ինչպես նաեւ համաձայնության հասնել ՆԱՏՕ-ին անդամակցելու շուրջ: Պորոշենկոյի կողմնակիցները վախենում են, որ Զելենսկին իր անփորձության պատճառով

կարող է զիջումներ անել, որոնց արդյունքում Ուկրաինան տարածքներ կկորցնի:

Այժմ Զելենսկին պարտավոր է ուշադրությունը կենտրոնացնել առաջիկա խորհրդարանական ընտրությունների վրա, որտեղ նրա «Ժողովրդի ծառա» կուսակցությանը անհրաժեշտ կլինի ապահովել խորհրդարանական մեծամասնություն:

Գերմանական Handelsblatt հրատարակությունը հիշեցնում է, որ քաղաքականության հետ Զելենսկու միակ առնչությունը կությունը հիշեցնում է, որ քաղաքականության հետ Զելենսկու միակ առնչությունը թերեւս այն է, որ նա սեփական սերիալում կատարել է պատմության ուսուցչի դեր, որը իր հակակոռուպցիոն օրակարգի շնորհիվ ընտրվում է պետության ղեկավարի պաշտոնում եւ միավորում երկիրը:

Սակայն մեկ այլ տեսանկյունից Զելենսկու ընտրությունը կարելի է համարել հստակ ազդանշան: Դա ցույց է տալիս, որ ժողովուրդը հրաժարվում է վերընտրել քաղաքական վերնախավին: Վերջին տարիներին ընտրություններին մասնակցում են միեւնույն մարդիկ, թեեւ արդեն մի քանի անգամ պարտություն են կրել: Handelsblatt-ի հոդվածագիրը Զելենսկու ընտրությունը համարում է կոռուպցիայի, օլիգարխների եւ քավոր-սանիկության մերժում:

Հրատարակությունը նշում է, որ Զելենսկու խոսքերին պետք է հաջորդեն գործեր, մասնավորապես, նա պետք է դիմադրություն ցույց տա իր հովանավորին՝ օլիգարխ Իգոր Կոլոմոյսկուն (վերջինս Պորոշենկոյի քաղաքական հակառակորդն է), որը ձգտում է հետ ստանալ ազգայնացված «ՊրիվատԲանկ»-ն ու «Укрнафт» նավթային կոնցեռնը:

ԱՐԵՎԻԿ ՔԵՇԻՇՅԱՆ

AZG NEW SHABAT 1.QXD 25/04/2019 22:54 Page 12

Ահռելի բարձունքներ հաղթահարողը՝ Արա Խաչատուրյան

«Ես բոլորին ասում եմ, որ յուրաքանչյուրս էլ ունենք մեր սեփական Էվերեստը: Դա կարող է լինել աշխարհի ամենաբարձր գագաթը նվաճելը կամ քո որոնած ճիշտ աշխատանքը գտնելը: Դա երկար ճանապարհ է եւ պահանջում է համբերություն, ջանասիրություն եւ հաստատակամություն: Բայց գագաթը նվաճելուց կամ նպատակիդ հասնելուց հետո քեզ պատած զգացմունքը ամենագեղեցիկ պահն է աշխարհում: Այդ պատճառով էլ ես միշտ հարցնում եմ իմ խոսակցին կամ դպրոցական աշակերտին՝ ո՞րն է քո Էվերեստը», այս խոսքերով է ներկայանում «Միրոր Սփեթեյթրի» էջերում լրագրող **Մայքլ Մելքոնյանին** 51 տարեկանում Էվերեստի 8848 մետր բարձունքը հաղթահարած լեռնագնաց **Արա Խաչատուրյանը**:

Նա լեռնագնացի փորձառություն չի ունեցել: Ծնվել է Բեյրութում (Լիբանան) 1964-ին էրզրումցի ծնողների ընտանիքում: Մեծացել է հայկական թաղամասում եւ սկսել զբաղվել ոսկերչությամբ: Երկրում այսպես կոչված քաղաքացիական պատերազմի բռնկումով 19 տարեկանում ստիպված է եղել հեռանալ ծննդավայրից եւ տեղափոխվել Մարսել:

Ֆրանսիայում նյութականի եւ լեզվի իմացության պակասն ստիպել են նրան շաբաթական յոթը օր եւ օրական տասնվեց ժամ աշխատել, որպեսզի կարողանար ծայրը ծայրին հասցնել եւ գոյատեւել: Բարեբախտաբար, Մարսելի հայկական համայնքի ջերմ թթնոլորտը մեղմել են նրա դժվարին կացությունը եւ նպաստել, որ նա առավել սերտորեն առնչվի իր հայկական արմատների հետ՝ ներկա գտնվելով հայկական երգ ու պարով համեմված միջոցառումների: Նա նաեւ խորացրել է իր գիտելիքները ոսկերչության ասպարեզում: Զբաղվել է սպորտով, մասնակցել մարաթոնյան վազքերի: Երբ Ֆրանսիայում նոր ձեռք բերած ընկերներից մեկը լսել է այդ մասին, առաջարկել է նրան ընկերակցել իրեն Եվրոպայի բարձրագույն գագաթը՝ Մոնբլանը նվաճելու իր ծրագրում:

Մոնբլանը ճանաչված է որպես աշխարհում ամենամահացու լեռը, որի մագլցողներից տարեկան շուրջ հարյուր հոգի է մահանում: Մինչ օրս 6000-ից 8000 մահվան դեպք է գրանցվել աշխարհում:

Ֆիզիկական լավ մարզավիճակում լինելով Արան ընդունել է «մարտահրավերը» եւ լեռնագնաց մասնագետի մոտ կարճ ժամանակ դասերի հաճախելով ու օգտակար խորհուրդներ լսելով պատրաստվել բացահայտելու իր համար նոր հորիզոններ:

Իր ընկերոջ եւ մարզիչի հետ դժվարանցանելի բարձունքը նա նվաճել է առավոտյան 6.30-ին եւ հիացել արեւածագի ապշեցնող տեսարանով: Սա ոգեւորել է նրան եւ երբ դրանից հետո Արա-

ras լեռն է բարձրացել, խոստովանել է, որ «մեծագույն հաճույք պատճառող ամենագեղեցիկ բարձունքն է նվաճել»: Այնուհետեւ, սիրահարվելով լեռնագնացությանը, նա նվաճել է նաեւ Աֆրիկայում Կիլիմանջարո լեռան գագաթը եւ իր առջեւ նպատակ դրել հաղթահարել Էվերեստի բարձունքը: Նա մտադրվել է խստապահանջ մարզումների եւ աշխարհի մի շարք լեռներ մագլցելուց հետո ձեռնամուխ լինել այդ դժվարին նախաձեռնությանը 2015-ի գարնանը՝ ի նշանավորումն Հայոց ցեղասպանության 100-ամյակի հիշատակություններին:

«Գաղտնիքը վախը հաղթահարելու մեջ է», խորհուրդ է տալիս ապագա լեռնագնացներին եւ ավելացնում. «Ամենասարսափելի մասը այսպես կոչված «մահվան գոտին» հաղթահարելն է: Այդ եզրը լեռնագնացներն են հորինել բնորոշելու համար 8000 մետր բարձրության վրա գտնվող հատվածը, որտեղ շնչելը առավել դժվարանում է, եւ մարդիկ կարող են ընդամենը թթվածնի 30 տոկոսը շնչել: Սովորաբար այս հատվածում են տեղի ունենում ամենաշատ մահացության դեպքերը, եւ մահացածները սառած վիճակում հավերժ մնում են այնտեղ, որովհետեւ հնարավոր չէ նրանց տեղափոխելը: Այն հարցին, թե ի՞նչ էր նա զգացել այդ դիակները տեսնելիս, Արան պատասխանել է. «Դրանք է՛լ ավելի ուժեղացրին գագաթը նվաճելու իմ ձգտումը: Ես դա պետք է իրականություն դարձնեի ոչ միայն ինձ, այլեւ իմ ժողովրդի եւ իմ ընկեր լեռնագնացների համար»:

Նա իրականություն դարձնում է իր երազանքը, բայց ոչ առանց կորուստ: Ցրտահարության որպես հետեւանք նա կորցնում է ոտքի երկու բութ մատների վերջույթները: Վերջին հատվածը նա 12 ժամում է հաղթահարում եւ հասնում գագաթը օրվա կեսօրին: Ընկերները ոգեւորված հետեւում են նրան: Տարիների մարզումները, մտավոր ու ֆիզիկական կարգապահությունը, ինչպես նաեւ հետեւողական ջանասիրությունը նպաստում են, որ նա 51 տարեկանում հպարտորեն կանգնի աշխարհի

բարձրագույն լեռան գագաթին, ինչը աշխարհում միայն 4000 մարդու է բախտ վիճակվել: Իր ընկերների հետ նա այնտեղ մնում է 30 րոպե, իսկ ամբողջ ընթացքը՝ սկսած մինչեւ գագաթ տեւում է մի ամսից մի փոքր ավելի: Այդ ժամանակահատվածի մեծ մասը կլիմային ընտելանալու վրա է ծախսվել:

Նա այժմ մի նոր փորձության է նախապատրաստվում: Նպատակ է դրել հաղթահարել 1903 ծովային մղոններ եւ Միջերկրականով նավարկել Մարսելից Բեյրութ՝ իր նոր բնակավայրից դեպի իր ծննդավայրը:

Հաջողություն մաղթենք նրան ցանկանալով, որ նա անփորձանք հաղթահարի նաեւ այս փորձությունը:

Թարգմ ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Arm. Mirror-Spectator)

Մեծարգո խմբագիր,

Լրատվամիջոցներից տեղեկացանք, որ օրերս լրացել է քաղաքագետ, դիվանագետ, արտակարգ եւ լիազոր դեսպան պարոն Արման Նավասարդյանի 80 տարին:

Մենք՝ Գյումրիում գործող «Թռչունյան տան» սաներս եւ աշխատակազմը, սիրով միանում ենք մինչ այս եղած շնորհավորանքներին, երկար ու առողջ կյանք մաղթում մեր սիրելի պապիկին:

Նրա շնորհիվ մենք տարիներ առաջ ունեցանք առաջին լրիվ կահավորված դասասենյակ:

Շնորհակալություն, մեր լավագույն մաղթանքները Ձեզ, սիրելի պապիկ՝ Արման Նավասարդյան:

" ԹՌՉՈՒՆՅԱՆ ՏՈՒՆ "
ՄԱՆԿԱՏՈՒՆ

"TRCHOONIAN HOME"
ORPHANAGE

Հասցե՝ 377515, ՀՀ, գ. Գյումրի, Դարպի խճուղի 3/1
Հեռ. 0-312-30165, ֆաքս. 0-312-30165
0-312-30158 , 0-91-435594

Address: 3/1 Gharsi st. Gyumri, RA
Phone: +374-312-30165, Fax: +374-312-30165
374-312-30158 , 0-91-435594

10. 01. 2008թ.

Հարգարժան պարոն Արման Նավասարդյան

Ձեր այցելությունը մանկատուն և Ձեր նվերները մեծ ոգևորություն պարգևեցին մեզ:Մենք հավաստիացանք,որ մանկատունը կգոյատևի,քանզի աշխարհում կան Ձեր նման բարի և գորովագութ մարդիկ:Մանուկների անմեղ աղոթքները կհասնեն առ Աստված և Դուք կստանաք Տիրոջ օրհնանքը:

Լավագույն բարեմաղթանքներով՝

" Թռչունյան տուն "
մանկատան տնօրեն՝ Ս.Սիմոնյան

Ս.Սիմոնյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից միանգամյա օգտագործման կնիքներ ձեռքբերելու նպատակով կազմակերպության ընտրության հրապարակային մրցույթի կազմակերպման մասին

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է հրապարակային մրցույթ ՀՀ կենտրոնական բանկի կողմից միանգամյա օգտագործման կնիքներ ձեռքբերելու նպատակով կազմակերպություն ընտրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել այն անձինք (այսուհետ Մասնակից), որոնք ունեն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական որակավորում, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ, նյութական եւ աշխատանքային ռեսուրսներ:

Մրցութային առաջարկությունները անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6:

Մրցութային հայտերի ընդունման վերջին ժամկետը 2019թ. հունիսի 12-ին, ժամը 16:00:

Մրցույթի հայտերի բացման օրն ու ժամը 2019թ. հունիսի 17-ին, ժամը 16:00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2019թ. հունիսի 24-ին, ժամը 16-00:

Մրցույթին մասնակցելու իրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու իրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Ներքին ծառայությունների վարչություն, 59-28-05, 59-28-02, ներքին 18-05, 18-02:

ՀՀ ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

VIVA CELL MTS

«1000 ու 1 SMS», «Միասին», «Միասին գիշերային», «Հիմնական գիշերային» եւ «Համար 5» արխիվացված սակագնային պլաններով ծառայությունների տրամադրման դադարեցում

ՎիվաՍել-ՄՏՍ-ը տեղեկացնում է, որ ծառայությունների որակի բարձրացման նպատակով համակարգերի վերազինմամբ եւ արդիականացմամբ պայմանավորված՝ «1000 ու 1 SMS», «Միասին», «Միասին գիշերային», «Հիմնական գիշերային» եւ «Համար 5» արխիվացված սակագնային պլաններով ծառայությունների տրամադրումը 2019թ. ապրիլի 30-ից տեխնիկական պատճառով կդադարեցվի, եւ նշված սակագնային պլանների բաժանորդները 2019թ. ապրիլի 30-ից կսկսեն օգտագործել առավել շահավետ պայմաններ առաջարկող «Viva 1500» սակագնային պլանը:

«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԸ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԹԵՔԵՅԱՆ ՓԱԲԼԻՇԻՆԳ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azgdaily@gmail.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածը՝ «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Թեթեյան Փաբլիշինգ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 25.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 25.4.2019, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2:

AZG NEW MSHAKUIT.qxd 25/04/2019 17:51 Page 1

ՀԱՅԵԼԿԱԾ
Ազգ-Մշակութ

Թիվ 16(428)
26 ԱՊՐԻԼ
2019

Նաիր ՅԱՆ

Մերժվածները

«Կանչ», «Աղբյուր», «Ծիածան», «Խաբարբզիկ» մանկական պարբերականները զրկվել են պետական ֆինանսավորումից: Խմբագիրները վռռվված ու վիրավորված են: Տարեսկզբին ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունը մանկապատանեկան թերթերի ու ամսագրերի մրցույթ էր հայտարարել. վերոնշյալ պարբերականները հայտ էին ներկայացրել՝ փաթեթում նշելով իրենց ծրագրերն ու բյուջեն: Մանկապատանեկան պարբերականներին ընդհանրապես պետբյուջեից տարեկան 47 միլիոն դրամ է հատկացվում: Բացի «Կանչից», «Աղբյուրից», «Ծիծեռնակից» ու «Խաբարբզիկից», մրցույթին մասնակցել է եւս երեք ընկերություն. հենց նրանց հայտերը չեն մերժվել: Իսկ մերժված թերթ-ամսագրերի խմբագիրներն իրենց հայտերի մերժման միակ պատճառը ֆինանսականն են համարում. իրենց ներկայացրած բյուջեն անհամեմատ մեծ է եղել, քան չմերժվածներինը: Չմերժվածների բյուջեն չի անցնում 2,5 միլիոնը: Իսկ մերժվածները ներկայացրել են 2,5-ի կրկնակին ու եռակին:

Մերժված խմբագիրները վիրավորված են. «Կրթության եւ գիտության նախարարությունից, հանձնաժողովից եւ ոչ մեկը մեզ չառաջարկեց հանդիպել, զրուցել, քննարկել, թե ինչ պատկերացում ունեն մանկապատանեկան հանդեսների մասին, ինչ ձեւ ու բովանդակություն կուզեին տեսնել: Առհասարակ որեւէ մեկը մեր աշխատանքի գնահատականը չի տվել, չի ասել՝ լա՞վ ենք աշխատել, թե վատ: Ընտրության համար միակ հիմքը բյուջեն է եղել՝ քիչ կներկայացնեիք, կանցնեիք, շատ ենք ներկայացրել, դրա համար էլ մերժվել ենք»: Խմբագիրներին աղոտեցնում է, որ կրթության եւ գիտության նախարարությանը, փաստորեն, չի հետաքրքրում՝ մրցույթն անցած ընկերություններն ինչ բովանդակությամբ թերթ ու ամսագիր են տպագրելու: Հաղթած ընկերությունները, բացի մեկից՝ «Մարի» ամսագրից, մինչեւ հիմա տպագրված որեւէ օրինակ չունեն, որպեսզի ընթերցողը, այդ թվում կրթության եւ գիտության նախարարությունը պատկերացում կազմի, թե ինչ որակի մասին է խոսքը: Այսինքն՝ նախարարությունն անփորձ մածունը փորձված թանից գերադասել է: Մերժված խմբագիրները հաշվարկ են արել ու պարզել, որ հաղթած ընկերությունների՝ պետությունից ստանալիք գումարն ընդհանուր առմամբ 20 միլիոնը չի անցնում. այդ դեպքում մնացած 27 միլիոնն ինչի՞ վրա է ծախսելու: «Էլի խնայելու վրա՞ են շեշտը դրել, էլի նոպատակը սրա-նրա հաշվին գումար ստեսե՞լն է: Թող գային, նստեին մեզ հետ ու ասեին՝ այսպես ենք պատկերացնում ձեր հետագա աշխատանքը: Կենսագրություն, պատմություն ունեցող թերթեր եք, բայց կուզեինք, որ այսինչ բանը փոխեիք, այնինչին ավելի մեծ ուշադրություն դարձնեիք:...Ոչինչ չեն ասել ու գրչի մի հարվածով մեզ զրկել են պետական հովանավորությունից: Մենք խմբագրակազմ ունենք, նկարիչ, գրող, լրագրողի աշխատավարձ ենք տալիս, հազար ու մի ծախսեր ունենք, հիմա ինչպե՞ս ենք հրատարակելու մեր թերթերն ու ամսագրերը»,- վրդովվեցին մերժված խմբագիրները: Նրանք դաշտը լավ են ուսումնասիրել, ասում են, որ մանկապատանեկան այլ թերթ ու ամսագիր հրատարակողները մեծ մասամբ իրենց նյութերը, անգամ նկարներն արտասպում են, իսկ իրենք սեփական արտադրանքով են հանդես գալիս: Երեխաներն իրենց ձեռքերով են նկարազարդում էջերը, ստեղծագործում են, պատմվածք, բանաստեղծություն գրում իրենց պարբերականների համար: «Կանչի», «Աղբյուրի», «Ծիծեռնակի», «Խաբարբզիկի» կապը երեխաների հետ ամենօրյա է: Բայցի այդ, տասնամյակներ շարունակ այս ամսագրերում են տպագրվում մեր մանկագիրները:

«Կանչ» մանկապատանեկան թերթը նախկին «Պիոներ կանչն» է, որ արդեն 95 տարի տպագրվում է: 1923 թվականին սովահար, աղքատ, որբերով լի Սովետական Հայաստանի իշխանությունները հասկացել են, որ մանուկների համար պետք է անպայման թերթ տպագրել, որտեղ կբացահայտվեն ստեղծագործող երեխաները: Որոշել են ու Հայաստանի սուղ բյուջեից գումար հատկացրել: 1925 թվականին Սովետական Հայաստանի իշխանությունները ստեղծել են «Պիոներ կանչ» թերթը, որպեսզի դրա միջոցով դպրոցականների շրջանում նաեւ կոմունիզմի գաղափարախոսությունը քարոզեն: Բայց անուրանալի է թերթի դերը ստեղծագործող երեխաների համար: Տասնամյակների ընթացքում հազարավոր դպրոցականներ գրական առաջին քայլերն այստեղ են արել: Սիլվա Կապուտիկյանը միշտ վկայակոչում էր «Պիոներ կանչը»՝ նշելով, որ 15 տարեկանում առաջին բանաստեղծությունն այստեղ է տպագրել, 18-19 տարեկանում Էդվարդ Իսաբեկյանը նկարչական ձեւավորումներ է արել այս թերթում: 1950-ականներին Գրիգոր Խանջյանն է համագործակցել «Պիոներ կանչի» հետ: Մարտիրոս Սարյանը եւս աշխատակցել է թերթին: 1946 թվականին Ավետիք Իսահակյանը, կարեւորելով այս պարբերականի դերը, հրապարակավ խոստացել է միշտ գրել թերթի համար ու իր խոստումը կատարել է: Ծանր ու դժվարի 90-ականներին նորանկախ Հայաստանի իշխանությունները եւս վերահաստատել են, որ մանկապատանեկան պարբերականներին պետք է անպայման պետբյուջեից հատկացումներ անել:

Եթե անկեղծ ու ազնիվ լինենք, չենք կարող ասել, թե տասնամյակների կենսագրություն ունեցող վերոնշյալ պարբերականներն այսօր էլ նույն համբավը, հեղինակությունն ու պահանջարկն ունեն, ինչ 30-40 տարի առաջ: Ընդհանրապես տպագիր մամուլը, գրքերը դժվար են ընթերցվում. երեխաներն այսօր հետաքրքրությունների այլ վեկտորներ ունեն: Բայց պետությունը պարտավոր է նրանց աշխատանքին գնահատական տալ, ասել՝ ինչն է լավ, ինչը՝ վատ, ինչը փոխել, որ ավելի լավ ու նպատակային լինի, ոչ թե մի ստորագրությամբ վերջ դնել տասնամյակների կենսագրություն ունեցող, արդեն կայացած, անուն վաստակած պարբերականներին: Ի՞նչ սկզբունքով ու չափորոշիչներով է առաջնորդվել կրթության ու գիտության նախարարությունը, միայն ֆինանսակա՞ն, բյուջեն որքան քիչ, հաղթելու եւ տպագրվելու հավանականությունն այնքան մե՞ծ: Ո՞ւմ հաշվին են խնայողություններ արվում. մանուկնե՞ր: Մանուկներ: Եթե թերթեք վերոնշյալ պարբերականների համարները, ապա պարզ կդառնա, որ նրանցում կրթադաստիարակչական որակյալ, հետաքրքրական նյութեր կան: Հատկապես «Խաբարբզիկը»: Այն լույս է տեսնում 1990-ականներից: Բյուջեն 200 հազար դրամից հասցվել է 2 միլիոնի: Ընդամենը: Շատ լրագրողներ իրենց առաջին տողերը հենց այս ամսագրի էջերում են գրել: «Խաբարբզիկի» յուրաքանչյուր հոդված եւ էսսե գրական-գեղարվեստական լուրջ տարրեր է պարունակում, յուրաքանչյուր լուսանկար անհատական ձեռագրի արդյունք է: «Խաբարբզիկը» լուրջ, բարձր նշանող է: Հետաքրքրական է՝ կրթության եւ գիտության նախարարության՝ մանկապատանեկան թերթ-ամսագրերի մրցույթով զբաղվողները «Խաբարբզիկ» հանդեսին ծանո՞թ են: Ծանոթ չեն: Եթե գոնե մի էջ կարդացած լինեին, այդ հայտի տակ մերժման ստորագրություն չէին դնի:

Մելանյա ԲԱԴԱԼՅԱՆ

Ընտրելով եզնարտությունը «Առանց դիմակի»

Աշխարհի բազմազանության մեջ լուսանկարչի հայացքը որսում է իր համար անկրկնելի պահեր, երեւույթներ, որոնք խոսում են ստի հետ, նա արձանագրում, վավերացնում է դրանք, իմաստ, բովանդակություն է տեսնում դրանց մեջ, հիշողություն, կամ զուտ գեղեցկություն: Նա ստեղծում է իր պատմությունը, իր ժամանակը: Ի՞նչ է որոնում **Մեսրոպ Մեսրոպյանի** լուսանկարչական միտքը, ի՞նչն է կարեւորում նրա հայացքը:

Դիմանկարների այն շարքը, որ այս օրերին ցուցադրվում է «Նարեկացի» արվեստի միությունում, շատ բան է պատմում այդ մասին: Մինչ այս ցուցադրությունը նրա լուսանկարչական արվեստին ծանոթ էի հայրենի բնաշխարհի՝ իր բազմաթիվ բացահայտումներին. բնության հրաշալի կտորներ, լեռներ, հարթավայրեր, լճեր: Իր լուսանկարների մեկ այլ շարքում դրսեւորվում է նրա վերաբերմունքը հայ հոգեւոր ճարտարապետության նկատմամբ, որ գնահատանք է, ակնածանք է, սեր է: Ինչպես ինքն է ասում, մեր եկեղեցիների ու վանքերի ասկետիզմն է հարազատորեն գրավում իրեն՝ ճարտարապետական զուտ ձեւերը, ներքին այն մտերմիկ պարզությունը, որով մարդու հոգին խոսեցնում է իր հետ, հաշտեցնում, խաղաղեցնում:

Մի քանի տարի առաջ այս նույն սրահում նրա «Արեւմտյան Հայաստան. Կորուսյալ դրախտ» ցուցահանդեսը կարոտի ու ցավի արտահայտություն էր: Եվ ահա այս նոր ցուցադրությունը՝ խորագրված «Առանց դիմակի». կերպարներ, դեմքեր՝ պարզ մարդկանց, արվեստագետների, հիմնականում՝ ավագ սերնդի ու տարեցների: Այս շարքում միանգամայն տարբեր է նրա մոտեցումը եւ շարժառիթը՝ այլ: Նա փորձում է գտնել կյանքի ճանապարհ անցած մարդու ապրումների, նրա հույսերի ու հիասթափությունների, ուրախությունների ու տխրությունների այն հետքերը, որ ակոս առ ակոս դաջվել են դեմքին, գտնել այն դեմքը, հայացքը, որ այլեւս անդիմակ է, որի միջով կարելի է թափանցել ներս, կարդալ անցյալը.-ներքին վիճակ, որ արդեն հաշտվել է կյանքի խաղերի, գոյության անցողիկության հետ:

➥Գ

AZG NEW MSHAKUIT.qxd 25/04/2019 17:51 Page 2

Տաղանդներ բացահայտող Ալին Քեշիշյանը բացահայտում է ինքն իրեն

Տաղանդներին հանրությանը ներկայացնող ֆիլմարտադրության եւ մենեջմենտի հարցերով զբաղվող «Lighthouse Management and Media» ընկերությանն անդրադառնալով Լոս Անջելեսից լրագրող **Քեթի Կաթրինոն** «Արմինյն Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթում ընդարձակ հոդված էր նվիրել այդ ընկերության հիմնադիր եւ գործադիր տնօրենի պարտականությունները կատարող Ալին Քեշիշյանին, որին բնութագրել է որպես այդ բնագավառում ամենահարգված ու ամենապահանջված անձնավորության: Նրա քաջալերությամբ հանրության ներկայացված տաղանդների շարքում են Ջենիֆեր Անիստոնը, Սելենա Գոմեսը, Գվինեթ Փալտրոուն, Օլանդո Բլումը, Մարկ Ռուֆալոն, Ջեյսոն Բեյթմենը, Ջաստին Թերուն, Լորա Լինին, Էմիլի Մորթիմերը, Քեթրին Հանը, Միրանդա Քերը, ռեժիսորներ Մայա Ֆորբսը, Ուոլի Ուոլոդարսկին եւ Ջեսի Պերեցը:

Քեշիշյանի առաջին «հաճախորդը» եղել է Նաթալի Պորտմանը (նախքան «The Professional» ֆիլմում հայտնվելը), որին նա առաջարկել է հանդես գալ Դարեն Արոնովսկու կողքին «Black Swan» (Սեւ կարապը) ֆիլմում: Արդյունքում Պորտմանն արժանացել է Օսկարի՝ լավագույն դերասանուհի անվանակարգում:

Պորտմանին զուգահեռ, երբ Քեշիշյանը 2016ին հիմնել է իր ընկերությունը, Սելենա Գոմեսն է նրան խնդրել դառնալ իր մենեջերը՝ երաժշտության եւ ֆիլմերի ասպարեզներում, ինչը մեծ հաջողություններ է բերել նրան: Նրա «Good for you», «Same Old Love» եւ «Hands to Myself» սինգլները ռադիոհեռարձակումներում առաջին հորիզոնականն են զբաղեցրել, բավական երկար ժամանակ դարձնելով Գոմեսին 2015-ի ամենաշատ սինգլներ վաճառող երգչուհին: Քեշիշյանը նաեւ որպես պրոդյուսեր է հանդես եկել «My Idiot Brother» (Իմ հիմար եղբայրը), «Life of Crime» (Հանցագործություններով հագեցած կյանք) եւ «Pride and Prejudice and Zombies» (Հպարտություն, նախապաշարմունք եւ զոմբիներ) ֆիլմերի համար:

Ալինը Հարվարդ համալսարանի շրջանավարտ է: Նրա հետ հանդիպման ժամանակ Քեթի Կաթրինոյի հարցին, թե ինչպես են իր ընտանեկան նախադրյալները նպաստել նրա հետագա հաջողություններին, Ալինը պատասխանել է . «Ծնողներս մեծ դերակատարություն ունեն դրանում: Նրանք չափազանց աշխատասեր են եղել, տիրապետել են հինգ լեզուների: Հայրս Բեյրութում մանկաբույժ էր եւ գրող (*): Մ. Նահանգներում նա դարձավ վկայված ռենտգենաբան: Ամերիկա տեղափոխվեցինք 1968-ին, որպեսզի եղբայրս՝ Ալեքը եւ ես ստանանք համալսարանական կրթություն: Ընտանիքս միշտ սերտորեն կապված է եղել իր հայկական արմատների հետ: Մ. Նահանգներում Ալեքն ու ես ընդունվեցինք Հարվարդի համալսարան: Ծնողներս հպարտ էին մեզանով: Գեղարվեստի բաժնի մագիստրատուրայում սովորելիս պիեսներ եմ բեմադրել: Կրթությանս բազմակողմանիությունն ու խստապահանջությունը մեծ դեր են խաղացել իմ կյանքում: Նաեւ անշուշտ ամուսինս, որին հանդիպեցի առաջին կուրսում սովորելիս: Համալսարանական ընկերներիցս շատերը՝ Դարեն Արոնովսկին, Ջեսի Պերեցը, Մայա Ֆորբսը շարունակում են մնալ մեր լավագույն ընկերները:

Ձախից՝ Ալին Քեշիշյանի Սելենա Գոմեսի հետ

Կաթրինոն.- Ի՞նչը դրդեց Ձեզ հասնելու, նեցուկ կանգնելու նոր տաղանդներին:

Քեշիշյան.- Ես միշտ հետաքրքրասեր, խանդավառ եւ էներգիայով լի անձնավորություն եմ եղել, չափազանց աշխատասեր իրականացնելու համար իմ երազանքները: Սիրել եմ կինոնկարներ, պիեսներ դիտել: Մեծ հարգանք ունեմ տաղանդների հանդեպ, սիրում եմ քաջալերել նրանց: Կարծում եմ այդ բոլորը ես պարտական եմ ծնողներիս, որոնք ինձ սովորեցրել են անկախ լինել եւ կարողանալ ինքս ինձ վստահել ու առաջ գնալ. «Ամուսնությունը տարբերակ է, ասում էր հայրս, ոչ պահանջ»: Ճիշտ է, ես երջանիկ եմ, որ ամուսնացա եւ զավակներ ունեմ, բայց պրոֆեսիոնալ առումով ես անկախ եմ եւ փորձում եմ նորելուկ տաղանդներին փոխանցել այդ անկախությունը, ինքնուրույնությունը:

- Ի՞նչ է սովորեցրել Ձեզ ուրիշների հետ աշխատելը:

- Նախ շնորհակալ ու երախտապարտ լինել այն ամենի համար, ինչ դու ունես, ինչին հասել ես: Միաժամանակ որոնել նոր հորիզոններ, չբավարարվել ձեռք բերածով եւ փորձել դառնալ անփոխարինելի: Ապա ամբողջությամբ նվիրվել գործին, ինչ ծրագիր էլ այն լինի, որովհետեւ մեկ ծրագիրը մյուսին է նախապատրաստում քեզ եւ հետզհետե դու որոշակի հեղինակություն ես ձեռք բերում: Չպետք է խնայել ուժերդ:

- Որո՞նք են այն գործոնները, որոնք էթիկայի, հոգեւոր եւ զգացական բնագավառներում ձեզ օգնում են ամուր կանգնած մնալ ձեր սկզբունքներին:

- Պետք է գիտակցել, որ կյանքը լի է վերիվայրումներով: Պետք է կարողանալ իրական, անկեղծ կապեր հաստատել մարդկանց հետ: Մենք սովորական մահկանացուներ ենք, եւ հետեւաբար յուրաքանչյուրս ենթակա ենք միեւնույն բեռը տանելու: Հաջողությունը, ձախողումը, հիվանդությունը, ծերությունը, հարազատին կորցնելը բոլորիս համար է. պետք է սիրտն ու միտքը միշտ պատրաստ պահել նման երեւույթներին: Հորս կորցնելը 2018-ին մեծ, անհավատալի դատարկություն առաջացրեց իմ կյանքում: Ճիշտ է, նա 87 տարեկան էր եւ անակնկալ ոչինչ չկար նրա վախճանման մեջ, բայց մենք շատ մոտիկ էինք եւ նա իմ մեծագույն երկրպագուն էր: Այդ պատճառով էլ բաժանումը խիստ ծանր էր: Բայց այդ ընթացքում ինձ շրջապատող մարդիկ՝ ընկերներ, բուժքույրեր, հաճախորդներից մեծամասնությունը եւ նույնիսկ անծանոթներ այնքան ջերմությամբ ու հոգատարությամբ ինձ շրջապատեցին, որ զգալիորեն մեղմացրին իմ ցավը: Ես երախտապարտ եմ նրանց այդ մեծ սիրո եւ աջակցության համար:

- Որո՞ն է գլխավորապես տղամարդկանց գերիշխանության տակ գտնվող ժամանցի (entertainment) բնագավառում առաջնային դիրք գրավելու ձեր՝ որպես կնոջ մարտավարությունը:

- Դժվար հարց եք տալիս, բայց փորձեմ պատասխանել: Երիտասարդ տարիքում նման բնագավառ մուտք գործելիս, ես վճռեցի, որ արտակարգ լավ պետք է կատարեմ իմ գործը: Իմ կողմից վերահսկողությունը կատարածս գործի նկատմամբ պետք է լինի անթերի: Անշուշտ այդ գործում ինձ նախապատրաստել էին իմ լեգենդար մենտորները՝ դասատուները, ինչպիսիք Ջուլիետ Թեյլորն էր, Սեմ Կոնը եւ ուրիշներ: Ցանկը բավական երկար է: Նաեւ այս հարափոփոխ աշխարհում կինը, ընդհանրապես, պետք է լինի հաստատակամ եւ պահանջի, անշուշտ համապատասխան տվյալներն ունենալու դեպքում, տղամարդուն հավասար հարգանք եւ վարձատրություն: Նա պետք է գիտակցի խոսքի արժեքը: Երախտապարտ եմ մորս իր կենդանի օրինակ ծառայելու համար: Մայրս՝ Սեսիլ Քեշիշյանը իրավաբանական ֆակուլտետ չի ավարտել, բայց գիտի բառերի ուժը եւ ունի համոզելու կարողությունը: Նա այժմ ութսունն անց է, բայց գիտի ինչպես պաշտպանել իրեն եւ իր դատը:

- Ո՞րն է Ձեր գերագույն երազանքը եւ ի՞նչ ժառանգություն եք ցանկանում թողնել:

- Վերջերս, հատկապես հորս մահից հետո, շատ եմ մտածել այդ մասին: Մարդկանց սովորաբար հիշում են իրենց կատարած գործի համար: Ես փորձում եմ շատ չկենտրոնանալ, թե ի՞նչ է, կամ ո՞րն է վերջնանպատակս: Կարծում եմ մի փոքր տեղ պետք է թողնել իրադարձությունների զարգացմանը, որովհետեւ ամեն ինչ չէ, որ կարող է ընթանալ քո որոշած կամ նախասիրած ձեւով: Երբեմն կարող է նույնիսկ ավելի լավը լինել, քան դու պատկերացնում կամ երազում ես:

Ինչ վերաբերում է ժառանգության, ուզում եմ, որ մարդիկ ինձ հիշեն որպես յուրօրինակ մտածողի, ով ինչ որ դրական փոփոխություն է առաջ բերել մարդկանց կյանքում: Ուզում եմ նաեւ, որ իմ ստեղծագործական խումբը կարողանա ինչ-որ ձեւով դեպի լավը փոխել աշխարհը: Եվ ամենակարեւորը, ցանկանում եմ, որ զավակներս ամուսնուս եւ ինձ հիշեն ինչպես ես եմ հիշում իմ ծնողներին՝ ջանասեր, ազնիվ, անկեղծ, հետաքրքրասեր եւ անշուշտ ընտանիքին անմնացորդ նվիրված:

Թարգմ. ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Arm. Mirror-Spectator)

**) Ալինի հայրիկը՝ Գեւորգ Քեշիշյանը, Թեհեյան մշակութային միության Կենտրոնական վարչության երկարամյա անդամ եւ ատենապետ, Ռամկավար Ազատական կուսակցության ղեկավարներից էր: Իսկ եղբայրը՝ Ալեքսը, հայտնի պրոդյուսեր է ամերիկյան մի շարք դերասանների եւ երգչուհիների, որոնցից է նշանավոր Մադոննան:*

Հայ պատանիները՝ բալետային փառատոնի մրցանակակիրներ

2019 թվականի մարտի 27-ից 30-ը Թբիլիսիում անցկացվել է Վախթանգ Ճաբուկիանիի անվան VI միջազգային բալետային մրցույթ-փառատոնը:

Ռաֆֆի Գալստյան

Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի բալետի պարող **Ռաֆֆի Գալստյանը** «Դասական պար» անվանակարգում արժանացել է առաջին, իսկ «Ժամանակակից պար» անվանակարգում՝ երկրորդ մրցանակի:

Նույն թատրոնից մեկ այլ պարող՝ **Մուշեղ Ավետիսյանը**, «Դասական պար» անվանակարգում արժանացել է առաջին մրցանակի եւ մրցույթ-փառատոնի մասնակցության դիպլոմի:

Մուշեղ Ավետիսյան

Հայաստանից մրցույթ-փառատոնին մասնակցել են Երեւանի պարարվեստի պետական քոլեջի 24 սաներ: Կրտսեր խմբում «Դասական պար» անվանակարգում երրորդ մրցանակը ստացել է **Նարեկ Արամյանը**, երկրորդ տեղը՝ **Ելիզավետա Խաչատրյանը**, իսկ առաջին տեղը՝ **Էլյա Ասլանյանը:** Ավագ խմբում «Դասական պար» անվանակարգում երրորդ մրցանակը ստացել է **Գոռ Սարգսյանը**, երկրորդը՝ **Նատալի Սուքիասովան**: «Ժամանակակից պար» անվանակարգում **Գոռ Սարգսյանը** արժանացել է առաջին մրցանակի, իսկ կրտսեր խմբում առաջին մրցանակը ստացել է **Նարեկ Ջուլհակյանը**: «Հանձնաժողովի համակրանք» մրցանակին արժանացել է **Սաթենիկ Ղազարյանը**: «Դասական պար» անվանակարգում մրցույթ-փառատոնի դափնեկիրներ են դարձել **Ալեքս Խաչատրյանը, Գեւորգ Խաչատրյանը, Յուրա Մարտիրոսյանը** եւ **Հասմիկ Ոսկանյանը**:

Ավելացնենք, որ մրցույթ-փառատոնի ժյուրիի կազմում ընդգրկված է եղել նաեւ «Բեռլինի Պետական բալետ» խմբի մենակատար **Արշակ Ղալումյանը**:

Ա. Ք.

AZG NEW MSHAKUIT.qxd 25/04/2019 17:52 Page 3

Արծվի ԲԱԽՉԻՆՅԱՆ

Ռուս գրականության Թեւեքելյանները

Բազմաթիվ են հայազգի ռուսական գրողները, որոնք, որպես կանոն, Ռուսաստանում ծնված անձիք են՝ արեւելահայ արմատներով, հաճախ՝ խառնամուսնություններից...:

Սակայն ռուս գրականության մեջ եղել է մեկը, որը ծնվել էր Արեւմտյան Հայաստանում, Ցեղասպանության ժամանակ ազատվել սպանդից եւ հաստատվելով Մոսկվայում՝ դարձել է ռուսագիր գրող: Խոսքը արձակագիր Վարդգես Թեւեքելյանի մասին է, որի դուստրը՝ Դիանա Թեւեքելյանը, նույնպես իր անունն է թողել ռուս գրականության մեջ...

Արեւմտահայ գաղթականը՝ ռուսական գրող

Վարդգես Թեւեքելյանը զորավար Անդրանիկի եւ Թորոս Թորամանյանի համախոհացին էր, ծնվել է 1902-ին, Շապին Գարահիսարում: Տասներկու տարեկանից աշխատել է, եղել հոտաղ, բանվոր, հացթուխ, գրաբար... Մանկության տարիներին Վարդգեսը սիրել է ընկերների հետ խաղալ խաղաթի բարձունքում գտնվող հռոմեական ժամանակներից մնացած ամրոցում, որը 1915-ին պիտի աղասարան դառնար հայերի համար: Տղայի հայրը՝ Հարություն Թեւեքելյանը, գլխավորել է տեղի հայերի ինքնապաշտպանությունը: Մեկ ամիս շարունակ դիմադրելուց հետո հայերը հասկացել են, որ դաշտարված են զոհվելու, ուստիւ Վարդգեսին եւ մի քանի այլ պատանիների բաց են թողել ամրոցից, որպեսզի նրանք աշխարհին պատմեն, թե ինչ կատարվեց Շապին Գարահիսարի հայերի հետ: Բարեհաջող փախուստ կատարելով ամրոցից՝ Վարդգեսը հեսագայում կատարել է այդ պատվիրանը իր գրականության միջոցով... Նա ողջ կյանքում խորին կսկիծով է հիշել ամրոցում մնացած եւ զոհված հարազատներին ու համախոհացիներին:

Գաղթելով նախ Իրան, ապա՝ Ռուսաստան, Թեւեքելյանը բնակություն է հաստատել նախ Ղրիմում, ապա՝ Մոսկվայում, մասնակցել է Ռուսաստանի քաղաքացիական կռիվներին: 1932-ին ավարտել է Մոսկվայի Արեւելյան ժողովուրդների ինստիտուտը: Հայերենից եւ թուրքերենից բացի նա տիրապետել է հունարենին եւ պարսկերենին, իսկ կատարելապես տիրապատելով հանդերձ ռուսերենին՝ ողջ կյանքում խոսել է թեթեւակի առոգանությամբ: Աշխատել է Հայաստանում, Ղրիմում, Մոսկվայում, դիվանագիտական աշխատանքներ կատարել արեւելյան մի քանի երկրում: 1937-1952 թթ. Թեւեքելյանն աշխատել է տեսչի արդյունաբերությունում, եղել մոսկովյան երկու ֆաբրիկաների տնօրեն: Սակայն իր կյանքի փորձառությունը նրան թելադրել է գրիչ վերցնել եւ թղթին հանձնել տարիների ընթացքում իր մեջ կուտակվածը: Այդպես մեկը մյուսի հետեւից ծնունդ են առել

Վարդգես Թեւեքելյանի «Կյանքը ինչպես որ կա» (1950) վիպակը, «Կյանքը սկսվում է նորից» վեպը (1951, հայերեն հրատարակությունը՝ 1955), «Երբ հորդում են գետերը» (1956), «Մոսկվա գետից այն կողմ» (գիրք 1 2, 1960-1966), «Երկու ճակատագիր» (հայերեն թարգմանությունը՝ 1961), «Գրանիտը չի հալվում» (1962, հայերենը՝ 1966), «Պարոն Կոչեկի գովազդի բյուրոն» (1967, հայալեզու հրատարակությունը՝ 1984) գրքերը: Դրանք վերաբերում են խորհրդային արտադրությանը, չեկիստներին, հետախույզներին, Արեւելքի ժողովուրդների պայքարին, ինչպես նաեւ՝ հայ ժողովրդին:

Թեւեքելյանին այսօր անդրադառնալով՝ ցանկանում ենք հիշեցնել մի կարեւոր եւ անհայտ իրողություն: Դեռեւս Ստալինի կենդանության օրոք, երբ Հայոց ցեղասպանության նյութի շուրջ լռություն էր պահպանվում, նա առաջին անգամ խորհրդային գրականության մեջ անդրադարձել է այդ թեմային իր «Կյանքը սկսվում է նորից» ինքնակենսագրական ասաղձ ունեցող վեպում (բնականաբար՝ խորհրդային գաղափարախոսության դիրքերից): Գլխավոր հերոսը՝ շապինգարահիսարցի պատանի Մուրադ Սարյանը, ազատվում է թուրքական յաթաղանից եւ իր նման որբ պատանիներ Քաջազի, Մուշեղի, Հաբեթի պես դատապարտվում է թափառական կյանքի, շրջում երկրներկիր՝ Հունաստան, Ֆրանսիա, Սիրիա, բայց չի կարողանում գտնել աշխատանք եւ ապրուստ: Տղաները սովորում են ամերիկյան դպրոցում, բայց գիշերները թաքուն կարդում են հայ գրողներին, ինչի համար Մուրադին վռնդում են դպրոցից Վեպի վերջին գլխում տղաները հայրենադարձվում են Հայաստան Հաբեթը մեկնում է ռազմաճակատ, իսկ նրա կին Սիրանուշը գուրգուրանքով է շրջապատում Նորքի մանկատանն ապրող ծնողազուրկ ռուս երեխաներին...

Վեպին անդրադարձել է Երեւանի «Սովետական Հայաստան» ամսագիրը (1952, թիվ 2), որից մի հատված՝ «Ստախանովյան հավաքում», հրատարակվել է նույն համարում (էջ 23-25) Անստրագիր հոդվածում նշվել է. «*Վեպի հերոինակը հայկական ջարդերի ժամանակ մոտիկից տեսնելով եւ իր կաշվի վրա զգալով թյուրք բարբարոսների վայրագությունները՝ ականատեսի աչքերով ռեալիստական ճշմարտությամբ այն վերարտադրել է իր վեպում ....Վ. Թեւեքելյանը նկարագրում է թյուրք բռնակալների դեմ հայ ժողովրդի հերոսական պայքարի դրվագները և միաժամանակ մերկացնում դաշնակների նողկալի, կործանարար դերը հայ ժողովրդի կյանքում*»:

Անկախ գաղափարախոսական պարտադրանքներից՝ վեպն չի կորցնում իր արժեքը որպես պատմական վավերագիր, ուստիւ պատահական չէ, որ 2015 թվականին Հայոց ցեղասպանության հարյուրամյակի առթիվ «Կյանքը սկսվում է նորից»-ը վերահրատարկվել է Մոսկվայում...

Վարդգես Թեւեքելյանը եղել է ԽՍՀՄ Գրական հիմնադրամի նախագահը, պաշտոնավարել որպես գրողների միության քարտուղար: Ու չնայած զբաղեցրած բարձր պաշտոններին՝ նա չի եղել իշխանություններին ծառայող անհոգի չինովնիկ: Հայտնի է, որ երբ բարձր մակարդակով թունավորելիս են եղել ռուս մեծ բանաստեղծ Բորիս Պաստերնակի կյանքը եւ Թեւեքելյանին թելադրել են բանաստեղծին հեռացնել Գրական հիմնադրամից, հայազգի գրողը մերժել է անել դա՝ «միամտորեն» պատճառաբանելով, որ Պաստերնակը բարեխղճորեն մուծում է իր անդամավճարը...

Արեւմտահայ արմատներով այս ռուսական գրողը մահացել է 1969-ին, Մոսկվայում, թաղված է տեղի հայկական գերեզմանատանը:

«Խմբագրական աշխատանքի մարմնացումը»

Թեւեքելյանի եւ նրա ծնունդով կարսեցի կնոջ՝ Փեփրոնիայի դուստրը՝ Դիանա Թեւեքելյանը (ամուսնական ազգանունը՝ Շչյոկինա), ծնվել է 1932-ին, Մոսկվայում: Ավարտել է Մոսկվայի պետական համալսարանի լրագրության բաժինը, աշխատել «Նովի միր» («Նոր աշխարհ») ու «Մոսկվա» ամսագրերի խմբագրություններում եւ «Սովետսկի պիսատել» («Խորհրդային գրող») ու «Սլովո» («Բառ») հրատարակչություններում: Դիանա Վարդգեսովնան հայտնի էր որպես ռուս գրողների ստեղծագործությունների հմուտ խմբագիր: Բավական է նշել, որ նա աշխատել է Բուլգակովի «Վարպետը եւ Մարգարիտան» վեպի առաջին հրատարակության (1966, «Մոսկվա» ամսագրում) եւ Բորիս Պաստերնակի երկերի՝ 11 հատորից բաղկացած առաջին լիակատար ժողովածուի վրա: Ժառանգած լինելով հոր համարձակությունը՝ նա կարողացել է խորհրդային գրաքննության առջեւ պաշտպանել Բուլգակովի եւ Պաստերնակի նման հեղինակների իրավունքները: Դիանա Թեւեքելյանն է հրատարակել նաեւ աննախադեպ մի մատենաշար՝ «Պուշկինյան գրադարանը», ոչ ավելի, ոչ պակաս՝ 100 հատորով... Որպես հրատարակիչ նա նախաձեռնել է նաեւ «Ռուսական դասական գրադարանը» եւ արտասահմանյան գրականության շարք (Հոմերոսից մինչեւ ժամանակակից գրողները)՝ դարձյալ 100-ական հատորով, «Անունների վերադարձ», «Իմ ամենա... բանաստեղծությունները» եւ այլ մատենաշարեր: Ռուսաց լեզվի բոլոր նրբություններին տիրապետող Դիանա Վարդգեսովնան Մոսկվայի գրական շրջանակների համար դարձել է անփոխարինելի խմբագիր եւ ոճաբան: Նրան անվանել են «խմբագրական աշխատանքի մարմնացում»: Բանաստեղծ Եվգենի Եվտուշենկոն մի հարցազրույցի ժամանակ հիշել է, թե ինչպես 2007 թվականին ինքը բողոքել է «Սլովո» հրատարակչության «*չափազանց համբերատար իմ հայ բարեկամներին՝ Դիանա Թեւեքելյանին, Նատաշա եւ Գրիգորի Երիցյաններին, որոնք այնքան բան են անում ռուս գրականության համար, որ իմ «Ռուսական պոեզիայի տաս դարը» անթոլոգիան.... պատրաստ չի լինելու: Եվ այդտեղ առանց կեղծ համեստության, բայց եւ առանց որեւէ հույսի, գոչեցի. «Մյ եթե այսպիսի մի գիրք ստեղծեինք՝ «Ողջ Եվտուշենկոն»: Եվ այդտեղ ես տեսա, թե ինչպես նրանց բոլորի աչքերը լամպերի նման մեկը մյուսի ետեւից վառվեցին: «Իսկ ինչո՞ւ ոչ», ժպտաց Դիանան, ինչպես միայն նա կարող՝ միաժամանակ ծակող հեգնանքով ու քնքշանքով...*»:

Դիանա Թեւեքելյանը հանդես է եկել նաեւ որպես գրականագետ՝ հրատարակելով «Հոգսերի օրը. խորհրդածություններ 60-70-ական թթ. քաղաքային արձակի մասին» (1982), «Վերա Պանովա» (1980) եւ այլ աշխատություններ, ինչպես նաեւ «Արգելոց» եւ «Հետաքրքրություն անձնական կյանքի հանդեպ» (2006) գեղարվեստական գործերը:

«Վարպետը եւ Մարգարիտայի» առաջին խմբագիր Դիանա Թեւեքելյանը մահացել է 2011-ին, Մոսկվայում, երկարատեւ ծանր հիվանդությունից հետո: Ինչպես վկայել է նրա զարմուհին՝ «Սլովո» հրատարակչության գլխավոր խմբագիր **Նատալյա Ավետիսյանը**, Թեւեքելյանը մինչեւ վերջին շունչը ծրագրել է նոր հրատարակություններ՝ մահից երեք օր առաջ անգամ կատարելով խմբագրական աշխատանքներ...

Ընտրելով ճշմարտությունը «Սրանց դինակի»

Հնարավո՞ր է արդյոք ճանաչել մարդուն, ինչպե՞ս հասկանալ նրա մեջ ապրող էակին: Ճանաչողության այս շրջապտույտում հաճախ ենք հայտնվում ինքնախաբկանքի հուսահատության մեջ: Այս բարդ ընթացքը լուսանկարիչը փորձել է հաղթահարել տարիների աշխատանքով, մարդկային բնույթը, նրա մութ ու լուսավոր կողմերը ուսումնասիրելու փնտրտուքներով. փորձել է շոշափել մարդու ներքին կերպարը, լուսանկարչական օբյեկտիվը արձանագրել է նրա բնական վիճակը, առանց դիմակի, մի բան, որ ինչպես ինքն է ասում, պարտադրված է մեզ, ուզած թե չուզած կրում ենք: Սակայն լինում են մարդիկ, որ չունեն դրա կարիքը, կամ էլ կյանքի մի հանգրվանում հասկանում են, որ պետք է լինել այնպիսին, ինչպիսին են. բաց՝ կյանքի ճշմարտության դեմ: Երեք տարի որոնել է նրանց: «Թվում էր՝ ինչ կարող էի առաջարկել մի իրականության պայմաններում, երբ բոլորը սեփական գեղեցկությամբ ու շահեկան դիրք ընդունելու մտահոգությամբ են տառապում: Ժամանակի պահանջն է. հավերժ երիտասարդություն, բարեկեցություն եւ հաջողակություն: Արդիականության կուռքերը առիթը բաց չեն թողնում հիշեցնելու, որ դու արժանի ես «լավագույնին», որ պարզապես պարտավոր ես լինել երիտասարդ, սլացիկ ու երջանիկ, որ եթե այդպես չէ, ձախողված ես ու թույլ: Եզակի բացառություն են, թերեւս, երեխաները, որ խուսափել են այդ համընդհանուր կեղծիքի ծուղակից. նրանց դիմանկարներն առանձին մոլորակ են՝ ջինջ ու սպասելիքներով լի: Երեւի սա էր պատճառը, որ առաջին դիմանկարներիս հերոսներին գաղտնի էի լուսանկարում, փորձելով գտնել այն պահը, երբ դիմակը սահում է, եւ երեւում է իրական դեմքը: Երբեմն ոչ այնքան գեղեցիկ, անցած տարիների թողած անջնջելի հետքերով: Երբեմն հոգնած, կնճռապատ: Երբեմն սրընթաց թռչող տարիների դեմ պայքարից հուսահատված, ու արդեն ամեն ինչի անցողիկ լինելու գաղափարի հետ հաշտված: Այս հաշտության պահն է, որ ներկա է իմ գրեթե բոլոր դիմանկարներում: Ոչ ոք պարտավոր չէ լինել հավերժ երիտասարդ ու հաջողակ: Եվ երբ գիտակցում ես դա, դիմակին փոխարինելու է գալիս ներքին լույսը: Անցած ճանապարհի քարտեզն արտացոլվում է դեմքիդ ու դրանով ես դառնում եզակի եւ արժեքավոր»,- այսպես է բացում լուսանկարիչը մտքի փակագծերը՝ դեպի մարդու ներաշխարհ տանող նուրբ ու դժվարին ուղիները:

Ներկայացված աշխատանքների մեջ մի դիմանկար կա՝ վերնագրված՝ «Ցուցահանդեսների թագուհին»: Քաղաքի մշակութային գրեթե ամեն միջոցառման նա ներկա է: Կերպարը հաջողված է: Սրահում ինձ մոտենում է մի կին ու, ցույց տալով այդ նկարը, հարցնում.

«Կարո՞ղ եք ասել՝ ո՞ւմ դիմանկարն է»: Զարմացած նայում եմ. «Ձեր դիմանկարն է»: Ինքն էլ իր հերթին է զարմանում. «Այդքան նմա՞ն է...»:

Կենտրոնական պատին աչքի է ընկնում դեմքը ձեռքերի մեջ առած կնոջ դիմանկարը՝ խոհուն, համակրելի, լուսավոր.- լուսանկարչի մոր դիմանկարն է՝ լավագույն գործերից:

AZG NEW MSHAKUIT.qxd 25/04/2019 17:52 Page 4

Կոմոզիտոր Անտոն Մայիլյանի երաժշտագիտական եւ լուսավորչական գործունեությունը

ԱՆՆԱ ԱԴԱՄՅԱՆ

Երաժշտության մասին նյութեր փնտրելիս երբեմն անցյալի հայ տպագիր մամուլում հանդիպում ենք հայ կոմոզիտորների կողմից գրված հազվադեպ հոդվածների, որոնց մասին, գուցե, շատերս պատկերացում չունենք: Կոմոզիտորները հաճախ միայն շաղկապվում են երաժշտություն ստեղծող անհատների հետ եւ հազվադեպ ենք ուշադրություն դարձնում նրանց գիտական եւ հրապարակախոսական մտքին: Հոդվածների մի սպար շարքի վերջերս հանդիպեցի 20-րդ դարասկզբին Բաքվում լույս տեսնող «Թատրոն եւ երաժշտություն» ամսաթերթի 1910-1917 թվականների համարներում, հայ անվանի կոմոզիտոր Անտոն Մայիլյանի (1880-1942) հեղինակությամբ (ամսաթերթը 1910-1917 թվականներին խմբագրում եւ հրատարակում էր հենց ինքը՝ Անտոն Մայիլյանը, ի դեմ՝ մեծամասամբ սեփական միջոցներով):

Ծանոթանալով անվանի կոմոզիտորի հրապարակախոսական եւ գիտական մտքին, պարզ է դառնում, որ նրա մտորումները մինչ այժմ էլ չեն կորցրել իրենց արդիականությունը, մինչ այժմ էլ երաժշտական կրթության մասնագետների, երաժիշտ-մանկավարժների առաջ ծառացած են այն խնդիրները, որ բարձրացնում է հեղինակը, եւ որ դրանք ձեռք են բերում մեծ նշանակություն հասարակության գեղագիտական դաստիարակության շրջանակներում:

«Երգն ընտանիքում» (1910), «Հայ ընթերցողին եւ հայ հասարակութեան» (1910), «Երաժշտական գրականությունը մեզանում» (1910), «Ժողովրդական երգերը մեր դպրոցներում» (1914), «Պէտք է շտապել» (1916) հոդվածներում Ա. Մայիլյանը քննարկում է երաժշտական դաստիարակության մի շարք հարցեր, օրինակ՝ երաժշտության գավառական դպրոցներ ուսուցիչների համար ամառային դասընթացներ ստեղծելու անհրաժեշտության մասին, որտեղ բացի լեզվի, թվաբանության, պատմության եւ երաժշտության դասընթացներից, պետք է դասավանդվի նաեւ նկարչություն եւ ձեռակերտ արվեստ: Չափազանց կարեւորում է Մայիլյանը ժողովրդական երգի դասավանդման արժեքը, մասնավորապես՝ «Երգն ընտանիքում» հոդվածում, որ այն պետք է սկսվի դեռեւս մանկան օրորոցից, ասելով որ այն առաջին զգացմունքը, որ ներշնչում է մայրը զավակին, դա երգն է՝ մանկան անդրանիկ հոգեկան էվոլյուցիան:

«Տէր մանուկներին երգ, որից բուրէ մանկական թարմութիւն. երգ, որը դանդաղ երեխաներին աշխուժացնէ. երգ, որը արթնացնէ նրանց մտքի գործունէութիւնը եւ այդպիսով նրանց հոգին պահէ ուրախ տրամադրութեան մէջ. երգ, որ թլւատութեան եւ կակազութեան առաջն առնէ. երգ, որը նրբացնէ նրանց կոպիտ յատկութիւնները, մօռացնել տայ նրանց տգեղ վարմունքները եւ զարթեցնէ նրանց մէջ սէր դեպի բարին, դէպի գեղեցիկը, դէպի ընկերը եւ այն ամէնը, ինչ որ կարելի է սիրել, ինչով կարելի է հրապուրել»:

Այս տողերում Մայիլյանը խտացրել է երեխաների համար երգ-երաժշտության թե՛ դաստիարակչական, թե՛ նույնիսկ բուժական, ու նաեւ գեղագիտական զարգացման նշանակությունը:

Հաջորդ հոդվածներում նա խոսքովանում է, որ երաժշտական գրականության դրությունը շատ խղճուկ է, փաստելով, որ դասավանդման համար իբրեւ նյութ ստեղծագործում են ուսուցիչները, սակայն վստահ չէ, թե դրանք այնպիսի գործեր են, որ պիտի համերգներին կամ այլ առիթներով հրապարակ հանվեն: Ուրի կսկիծով է խոսում ժողովրդական երգերի հրատարակություններ ունենալու, երաժշտական գրականություն՝ հատկապես մանուկների համար ստեղծելու մասին եւ այս խնդիրների լուծման համար երաժշտական ընկերություն հիմնելու անհրաժեշտության մասին:

«Երգեցիկ խմբի կուլտուրան մեզանում» (1911) հոդվածում Մայիլյանն արծարծում է արդիական խնդիրները, որ ծառացած են երաժշտական կուլտուրան բարձր պահելու՝ մասնավորապես եկեղեցիներում երաժշտական պատրաստվածությամբ երգեցիկ խմբեր ունենալու խնդրի դիմաց եւ դիմում է հասարակությանը՝ ուշադրության եւ միջոցների հայթայթման համար:

«Մակար Եկմալյան» (1912) չորս մասից բաղկացած նրա ծավալուն ակնարկում նա սկզբում ներկայացնում է իր սիրելի ուսուցչի մտերիմ, մանկավարժաշնակահար 3. Տեր-Դավթեանի հուշերը Եկմալյանի մասին, երկրորդ մասում՝ Եկմալյանի երգեցիկ խմբի մասին, որտեղ շեշտում է այն բարձր վարպետությունը, որին տիրապետում էր Եկմալյանի ղեկավարած խումբը՝ շնորհիվ խմբավարի պահանջկոտության, երրորդ՝ ամենահետաքրքրական մասը նվիրված է կյանքի վերջին տարիներին հոգեկան ծանր հիվանդության պահին Եկմալյանին իր աշակերտների կողմից այցելությանը, եւ չորրորդ՝ ամենավերջին մասում՝ «Նրա թաղումը» ենթավերնագրի տակ Մայիլյանը պատմում է, որ հանգուցյալին հրաժեշտ տալու համար նրա ձեռագրերից եղբոր օգնությամբ գտան «Տեր Ողորմեան» եւ իր երգեցիկ խմբով կատարեցին նրա տան առաջ, իսկ վերջին հրաժեշտը մեծ վարպետին տվեցին իր գերեզմանի մոտ՝ երգելով նրա «**Ով Հայոց Աստուած**» քառաձայն խմբերգը:

Ամսաթերթի նույն համարում «Եկմալյանը եւ Կարա-Մուրզան» հոդվածում (1912) հեղինակը համեմատություններ է տանում երկու կոմոզիտորների երգչախմբային գործունեության մասին, ասելով. «Եկմալյանի խումբը անկասկած շատ բարձր էր Կարա-Մուրզայի խմբերից. առաջինի խումբը հասցրած էր գեղարուեստական կատարեալ բարձրութեան, մինչդեռ վերջինի շուտափոյթ կազմուած խմբերը թերի էին», «Եկմալյանը երաժշտագէտ գիտնական էր, Կարա Մուրզան՝ հրտնող մտաւոր»:

«Լեբլեբիջի» հոդվածը (1912) Տիգրան Չուխաճյանի համանուն կոմիկական օպերայի մասին է, որտեղ Մայիլյանը կասկած է հայտնում իր հանդիպած տարբերակին, մեջբերելով դերասաններ տիկ. Ազնիվ Հրաչեայի եւ Սիրանույշի տարակուսանքը, որ այս «Լեբլեբիջին» նման չէ Պոլսում ներկայացված օպերային: Նույնիսկ փաստում են, թե թարգմանությունը շատ անհարազատ է, եւ ավելի լավ է տաճկերեն խաղալ, քան հայերեն եւ նամակ են հղել Փարիզում գտնվող Չուխաճյանի որդուն՝ պարզաբանում ստանալու համար:

«Վրաց ժողովրդական երգը» (1914) հոդվածում նա մանրամասն խոսում է վրացական մեղեդիների ծագման, վրաց ժողովրդի երգչական մշակույթի մասին, իսկ Շամախու թեմի հայ ուսուցիչների համագումարին Ա. Մայիլյանի «Երաժշտությունը եւ երգ-ձայնագրությունը մեր դպրոցներում» դասախոսությունը (1915) բաղկացած է եղել 10 կարեւոր խնդիրներից, որոնք նա ներկայացրել է ամբողջ նիստի ընթացքում շատ մանրամասնորեն. թե՛ դպրոցներում երաժշտության դասավանդման, թե՛ ընտանիքում դրա նշանակության, թե՛ ուսուցիչների գործունեության մասին եւ այլեւայլ հարցեր: «Կայսերական կոնսերվատորիա Թիֆլիսում» ակնարկում որպես խմբագիր ողջունել է Թիֆլիսում այս կոնսերվատորիայի բացումը, հույս հայտնելով, որ այնտեղ ուշադրության կարժանանա նաեւ մանկավարժական բաժին ունենալու հարցը:

Գրախոսականներ է հրապարակել նաեւ Ռոմանոս Մելիքյանի եւ Ազատ Մանուկյանի կազմած «Երաժշտական այբբենարան» (1913) երգ-ձայնագրության դասագրքի վերաբերյալ (1914), որտեղ արծարծում է դասագրքի թերություններն ու առավելությունները, եւ անում է դա շատ խստապանջորեն:

Գրախոսել է տարբեր երաժիշտների համերգները, կիսել տպավորությունները՝ «Ռախմանինովը որպես Սկրեաբինի երկերի կատարող» (1915), գրախոսել է Փարիզում ոմն պարոն Լեւոն Համբարձումյանի հրատարակությամբ Տիգրան Չուխաճյանի «Ave Maria» (1883) մեներգը, վերջում հույս հայտնելով, որ ավելի արժեքավոր կլինի նախ հրատարակել հայերեն գործերը, հետո՝ օտարները (1914):

Տարբեր տարիների համարներում մի շարք գրախոսականներ է հրապարակել՝ օրինակ կոմոզիտոր Անուշավան Տեր-Ղեւոնդյանի մանկական երգերի, Ազատ Մանուկյանի «Փնջիկ» մանկական երգերի ժողովածուի, Ե. Բաղդասարյանի «Գառնուկ» մանկական երգի, Ալեքսանդր Սպենդիարյանի, Ռուբէն Աբեղայ անվամբ մեկի «Բաբա Համբարձում Լիմօնճեան եւ հայ նոտագրութեան ծագումը» աշխատության մասին, Սմբատ Մելիքյանի գերմաներենից թարգմանությամբ Ռիխարդ Ֆուքսի «Երաժշտութեան պատմութիւն» պատկերազարդ ձեռնարկի մասին, «Գեղարուեստը յեղաշրջումի օրերին», որոնք նա ենթադրաբար ստորագրել է կեղծանվամբ՝ Antonios: Հաճախ գրախոսությունները վերածվել են ամենահիսկական բանավեճերի՝ տարբեր համարներում ունենալով իրենց շարունակությունները՝ ընդդիմախոսներին ի պատասխան:

Հեղինակել է նաեւ հայ մեծանուն դերասան Պետրոս Ադամյանի հիշատակին նվիրված «Ո՞վ էր Ադամյանը» ակնարկը (1916): Այսպես է նկարագրում մեծ դերասանին Մայիլյանը. *«Գեղեցիկ էր նա ինչպէս սիգապանծ կաքաւ եւ նրա ներկայութիւնը տալիս էր բեմին մի հրաշալի ներդաշնակութիւն: Հարմօնեա նրա արտաքինի, հարմօնեա նրա խաղի, հարմօնեա նրա հնչեղ արտասանութեան մէջ: Նա ինքը մի երաժշտութիւն էր: Երաժշտութիւն էր նրա ձայնը, համաչափ ու հստակ, ինչպէս աղբիւրի կոհակիկները»*:

Հանդեսի տարբեր համարներում կարելի է հանդիպել չափազանց հետաքրքրական էջերի եւ նյութերի, ինչը վկայում է Մայիլյանի լայն աշխարհայացքի, բավական մեծ շրջանակ ունեցող կապերի մասին. «Երաժշտական քրոնիկոն», «Ցիտատներ» էջերը, ակնարկ Ռոբերտ Շումանի մասին, Անտոն Ռուբինշտեյնի մտքերը երաժշտության վերաբերյալ, Գեւորգ Չմշկյանի հուշերը հայ թատերական երեւելի դեմքերի՝ Պետրոս Ադամյանի եւ այլոց մասին, ինչպես նաեւ Պ. Ադամյանի անտիպ նամակներն առանց փոփոխությունների, իսկ 1913-14 թվականներից սկսած համարները պարունակել են նաեւ մանկական երգեր նոտագրությամբ՝ իր, Միքայել Միրզայանի, Ա. Տեր-Ղեւոնդյանի եւ այլոց հեղինակությամբ:

Հետաքրքրական տեղեկություններ է պարունակել ամսաթերթը հայ մեծանուն երաժիշտների եւ թատերական աշխարհի ներկայացուցիչների մասին. Հեղինե եւ Եվգինե Ադամյան քույրերի, երգիչներ Արմենակ Ահարոնյանի, Ն. Ղուկասյանի, Ա. Կոստանյանի, ջութակահար 3. Նազարյանի, դերասաններ Վ. Փափազյանի, Սիրանույշի, Սաթենիկ Ադամյանի եւ այլոց մասին: Օրինակ, այստեղ ենք գտնում մի արժեքավոր ակնարկ հայ երաժշտագետ Օվսաննա Տեր-Գրիգորյանի վերաբերյալ (1912), որն ուսանել է Լայպցիգում, եւ, ի դեմ, հետագայում հանդիսացել է Երեւանի Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցի առաջին տնօրենը (1929-1930թթ.):

Հետաքրքրական անդրադարձ ենք գտնում ամսաթերթում նաեւ Մայիլյանի «Գյուլնազ տատի հեքիաթը» (ըստ Ղ. Աղայանի) մանկական օպերայի մասին (1916), որ հայ մանկական օպերաների ստեղծման ճանապարհին առաջիններից է, եւ որն, ըստ տեղեկության, կատարվել է ավստրիացի գերի զինվորականների նվագախմբի կատարմամբ՝ գերի սպայի դիրիժորությամբ: Ինչպես ասվում է տեղեկության մեջ՝ *«Հասարակութիւնն անվերջ ծափերով դղրդացնում էր դահլիճը. կային նաեւ ռուսներ, որոնք ցանկութիւն յայտնեցին օպերան թարգմանելու: Նվագախմբի դիրիժորն արդէն սկսել է թարգմանել այն գերմաներէն»*:

Հրաշալի եւ մանրամասն տեղեկություններ է պարունակում ամսաթերթը Թիֆլիսում կայացած Ալ. Սպենդիարյանի համերգի առթիվ, ինչպես նաեւ իր՝ Անտոն Մայիլյանի երգեցիկ խմբի համերգների, որոնց մասնակիցները երբեմն նաեւ ուսուցիչ-ուսուցչուհիներ էին:

Ամսաթերթում տարբեր հեղինակների թարգմանություններով ներկայացված են համաշխարհային երաժշտարվեստի երեւելի դեմքերի վերաբերյալ ակնարկներ, հոդվածներ, վերլուծականներ. Սկրիաբինի, Բախի, Գունոյի, Ռամոյի, Շոպենի, Ժորժ Սանդի եւ այլոց վերաբերյալ ժամանակի արդիական տեղեկություններ:

Ուսումնասիրելով անվանի կոմոզիտորի երաժշտագիտական եւ հասարակական-լուսավորչական աշխատանքը՝ համոզվում ենք, որ Անտոն Մայիլյանի տեսակետները, մտքի թռիչքները որպես երաժշտագետի եւ երաժշտական կրթության մասնագետի՝ շատ հստակ են եւ համահունչ ժամանակի առաջադեմ արվեստագետների մոտեցումներին: Նա քաջատեղյակ էր իր ժամանակի երաժշտական իրադարձություններին եւ զարգացումներին, իսկ ամսաթերթի բովանդակության բազմազանությունն ու օգտակարությունը հետագա ուսումնասիրությունների համար անհերքելի է:

Հ.Գ.- *Անտոն Մայիլյանը (1880-1942) կրթությունը ստացել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, մասնագիտական կրթությունը՝ Թիֆլիսի երաժշտական ուսումնարանում՝ աշակերտելով Ք. Կարա-Մուրզային, Մակար Եկմալյանին, Ն. Նիկոլաեւին, Ն. Կլենովսկուն: Բաքվում ղեկավարել է Բաքվի Հայարտան երաժշտական սեկցիան, կազմակերպել թատերական-երաժշտական ստուդիա, երգչախմբեր, համերգներ տվել Անդրկովկասի հայաշատ քաղաքներում: 1910-1917 թվականներին խմբագրել եւ հրատարակել է «Թատրոն եւ երաժշտություն» հանդեսը: Գրել է «Սաֆա» օպերան (1933, լիբրետոն Մայիլյանի, բեմադրվել է Բաքվում, Ախունդովի անվան օպերայի եւ բալետի թատրոնում, 1939), երաժշտական կատակերգություններ, բալետ, սիմֆոնիա, վոկալ-սիմֆոնիկ, կամերային-գործիքային երկեր, մանկական օպերաներ (այդ թվում՝ «Գյուլնազ տատի հեքիաթը», ըստ Ղ. Աղայանի, 1906, «Ջարաճի Միկիչը», ըստ Հովհաննես Թումանյանի, 1925), ռոմանսներ, երգեր, կատարել ժողովրդական երգերի մշակումներ եւ այլն: 1930 թվականին արժանացել է Ադրբեջանական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ կոչմանը:*